Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

THE PUBLICATION IS SPONSORED BY THE MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
2012

INSTITUTE OF ORIENTAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC
OF ARMENIA

LILIT HARUTYUNYAN
ARAKS PASHAYAN

THE ARMENIAN COMMUNITIES OF THE ARAB COUNTRIES OF THE GULF REGION ACTUAL ISSUES

The book is recommended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences, RA

YEREVAN
2012

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3
Հ 422

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Գիտական խմբագիր՝
Սուրեն Աղասի Մանուկյան
պատմական գիտությունների թեկնածու

Հ 422 Լ. Մ. Հարությունյան, Ա. Ա. Փաշայան
Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ: Լիլիթ Հարությունյան (պ.գ.թ., դոցենտ), Արաքս Փաշայան (պ.գ.թ., դոցենտ) – Եր.: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2013 թ.– 160 էջ:

Գրքում ուսումնասիրվել են Ծոցի արաբական երկրների (Քուվեյթ, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քաթար, Բահրեյն, Սաուդյան Արաբիա) հայ համայնքների արդի հիմնախնդիրները՝ դրանցում հայկական հոգևոր և աշխարհիկ կառույցների, հայկական միությունների, հայապահպանության, ինքնության, ինտեգրման, խառն ամուսնությունների, հայկական կրթության և դպրոցների, համայնքների ներուժի, այդ համայնքների և Հայաստանի միջև կապերի, ինչպես նաև վերոնշյալ համայնքների հեռանկարի հետ կապված հիմնահարցերը:

Գիրքը նախատեսված է փորձագիտական հանրության և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3

ISBN 978.9939.834.36.8

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
© ՀՀ Սփյուռքի նախարարություն
© «Լուսակն» հրատ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 7
ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... 10
ՔՈՒՎԵՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ 50-ԱՄՅԱԿԸ..... 18
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 22
ՔԱԹԱՐԻ, ԲԱՀՐԵՅՆԻ ԵՎ ԱԼ-ԽՈԲԱՐԻ
(ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ.....31
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ
ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... 36
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՄԷ-Ի
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ.....39
ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՄԷ-Ի
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ.....48
ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ.
ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ..... 52
ԱՄԷ–Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ.....58
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ.....64

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ).....72
1. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՆՈՍՅԱՆԻ ՀԵՏ.....72
2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՏԵՐ ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՏԵՅԻՐՄԵՆՃՅԱՆԻ ՀԵՏ... 79
3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԵՎ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐՅՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՊՅԱՆԻ ՀԵՏ..... 85
4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵԹՈՒՄ ԵՎ ԲԱՀՐԵՅՆՈՒՄ ՀՀ ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆԻ ՀԵՏ (հատվածներ).....88
5. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄԷ-ՈՒՄ ՀՀ ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ՎԱՀԱԳՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԵՏ..... 91
6. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ՖԱԴԵՅ ՉԱՐՉՈՂՅԱՆԻ ՀԵՏ.....97
7. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏՈՐ ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ.....103
8. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱԶԱՏ-ՀԱՅ» ՄԻՁԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԿԱՅՔԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԽՄԲԱԳԻՐ, ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀՐԱՉ ՔԱԼՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ.....108
9. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԴՈԿՏՈՐ ԿԱՐԳԵՍ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ.....116
10. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՕՐՅԱ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆՈՒՀԻ, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՏԱԿՈՐԱԿԱՆ ԹԱՄԱՐ ԹՈՓՉՅԱՆ-ՏԵՐ-ՕՀԱՆՆԵՍՅԱՆԻ ՀԵՏ..... 120
11. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԿՅՈՒԼԻԶԱՐ ՁՈՆՅԱՆԻ ՀԵՏ..... 127
12. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԱՅԻ ՄԵԿՕՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՉ ՊՐՈՒՆՍՈՒՁՅԱՆԻ ՀԵՏ..... 132
13. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԲԱՀՐԵՅՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԱ ԱԼԲԵՐՏ ԽԱՉԵՐՅԱՆԻ ՀԵՏ..... 139

ՎԵՐՁԱԲԱՆ.....141
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....144
ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....148
CONCLUSIONS.....150
ЗАКЛЮЧЕНИЕ.....155

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծոցի արաբական երկրների հայ համայնքների ձևավորման գործընթացը սկիզբ է առել 1950-ականներից. սկզբում՝ Քուվեյթում, իսկ հետո՝ ավելի ուշ, տարածաշրջանի այլ երկրներում: Հայ համայնքների ձևավորման գործընթացն անմիջականորեն կապված էր տարածաշրջանում նավթաարդյունաբերության զարգացման և աշխատանքի նոր շուկաների ձևավորման հետ: Համայնքների կորիզն արաբական տարբեր երկրներից (Սիրիա, Լիբանան, Իրաք և այլն), նաև Իրանից ներգաղթածներն ու նրանց սերունդներն են: Ժամանակի ընթացքում այստեղ են հաստատվել հայեր ԱՄՆ-ից, Կանադայից, Եվրամիությունից, իսկ 1990-ականներից հետո՝ նաև Հայաստանից:

Քուվեյթում և Ծոցի այլ երկրներում 20-րդ դարի կեսերից ձևավորված հայ համայնքներն՝ ի տարբերություն Սիրիայի, Լիբանանի և մի շարք այլ արաբական երկրների համայնքների, սփյուռքահայության վերարտադրության արդյունք են: Ծոցի արաբական երկրների հայ համայնքների ձևավորումը սփյուռքահայության շրջանում մի նոր երևույթի՝ ներարաբական տեղաշարժերի արդյունք է:

Ծոցի երկրներ աշխատելու մտադրությամբ տեղափոխված հայերին ժամանակի ընթացքում հաջողվեց հարմարվել տարածաշրջանի յուրահատկություններին և չնայած ոչ տեղաբնիկների հարցում Ծոցի արաբական միապետությունների օրենքներում առկա սահմանափակումներին (այդ թվում՝ քաղաքացիություն ձեռք բերելու արգելքին)՝ հայերն, այնուամենայնիվ, ստեղծեցին համայնքային կառույցներ: Մասնավորապես, Քուվեյթում և Արաբական Միացյալ Էմիրություններում հայերին հնարավորություն տրվեց կազմակերպել իրենց ազգային կյանքը, ինչն իրականություն դարձավ հայկական կրոնական և աշխարհիկ կազմակերպությունների և միությունների գործունեության շնորհիվ: Էլ-Քուվեյթը, Շարժան, Դուբայը, Աբու-Դաբին դարձան այն հիմնական շրջանները, որտեղ հաստատվեցին հայերը:

Ազգային իմաստով՝ ի տարբերություն Քուվեյթի, որտեղ ազգային կառույցների ձևավորումը սկսվել էր դեռևս 1960-

ականներից, ԱՄԷ-ի համայնքը սկսեց կազմակերպվել 1980-ականներից: 1992 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ձևավորեց Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմը (առաջնորդանիստը՝ Էլ-Քուվեյթի Սուրբ Վարդանանց եկեղեցին), ինչը խոսում էր նաև հայերի նկատմամբ տեղի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի մասին:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո թե՛ Քուվեյթի, թե՛ ԱՄԷ-ի և ՀՀ-ի միջև հաստատված բազմակողմ համագործակցության հարցում զգալի դերակատարում ունեցան և այժմ էլ ունեն այդ երկրների հայ համայնքները:

Ծոցի արաբական երկրների հայ համայքներում գոյություն ունեցող հիմնախնդիրների՝ հայապահպանության, հայ եկեղեցու, հայկական կրթության և դպրոցների, ինքնության, խառն ամուսնությունների, փոխադարձ ընկալումների, համայնք-պետություն հարաբերությունների, և, վերջապես, համայնքի հեռանկարի հետ կապված հարցերի ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական ու գործնական նշանակություն: Առանց նշված խնդիրների քննության՝ անհնար կլինի ամբողջական պատկերացում կազմել Մերձավոր Արևելքի ամենաերիտասարդ համայնքների և դրանցում ընթացող գործընթացների մասին:

Ծոցի արաբական երկրների հայ համայնքների ուսումնասիրությունն արդիական է նաև արաբական աշխարհում, հատկապես Սիրիայում, ներկայումս ընթացող հասարակական-քաղաքական բարդ ու խրթին գործընթացների առումով, որոնք իրենց բացասական ազդեցությունն ունեցան հայ համայնքների վրա:

Հիշյալ հետազոտության միջոցով, որն իրականացվել է Սփյուռքի նախարարության և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի համատեղ ջանքերով, փորձ է արվում (նաև դաշտային հետազոտությունների միջոցով) ուրվագծել Ծոցի արաբական երկրների հայ համայնքների հիմնախնդիրները՝ դրանք դիտարկելով համայնքի հեռանկարի համատեքստում:

Հարկ է նշել, որ հետազոտության մեջ հնարավոր չեղավ ներառել Ծոցի հայ համայնքների հոգևոր և աշխարհիկ բոլոր հանգուցային կառույցների ներկայացուցիչների տեսակետ-

ները: Սակայն, այնուամենայնիվ, փորձ արվեց ուրվագծել հարցերի հիմնական շրջանակը՝ հնարավորություն ստեղծելով ընդհանուր գծերով պատկերացում կազմել Ծոցի հայ համայնքների արդի վիճակի մասին:

Ուսումնասիրության մեջ քննարկվող մի շարք հիմնախնդիրների լուսաբանման համար շնորհակալություն ենք հայտնում Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանին, Արաբական Միացյալ էմիրությունների հոգևոր հովիվ Տ. Արամ քահանա Տեյիրմենճյանին, Քուվեյթի ազգային վարժարանի տնօրեն դոկտոր Մանուկ Մանուկյանին, «Ազատ–հայ» կայքէջի հիմնադիր և խմբագիր Հրաչ Քալսահակյանին, Հրաչ Պրունսուզյանին, Կյուլիզար Ձոնյանին և Թամար Թոփչյան-Տեր-Օհաննեսյանին:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնին, որտեղ իրականացվել է հետազոտությունը, ինչպես նաև բ.գ.թ. Անի Փաշայանին գրքի խմբագրմանն աջակցելու համար:

ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

20-րդ դարի 50-ական թվականների կեսերին աշխատանք գտնելու նպատակով Սիրիայից, Իրաքից, Լիբանանից, Պաղեստինից, Հորդանանից և Իրանից Քուվեյթ տեղափոխվեցին բազմաթիվ հայեր: Ժամանակի ընթացքում Քուվեյթում ձևավորվեց լավ կազմակերպված, հարյուր տոկոսով հայախոս և հայաշունչ համայնք[1]: 1950-ականների կեսերից, երբ հայերի թիվն անցավ 1000-ը, սկսեցին կազմավորվել առաջին համայնքային կառույցները[2]:

Քուվեյթում և Ծոցի այլ երկրներում 20-րդ դարի կեսերից ձևավորված հայ համայնքներն, ի տարբերություն արաբական վերոնշյալ երկրների համայնքների, կազմավորվել են ոչ թե բնօրրանից՝ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերից, այլ միանգամայն նոր երևույթի, այսինքն՝ սփյուռքահայության վերարտադրության արդյունք են:

Քուվեյթի հայ համայնքի ձևավորումն անմիջականորեն կապված էր նավթային գործոնի և դրա հետևանքով այդ երկրի տնտեսական վերելքի հետ: Արդյունքում առաջ եկավ աշխատուժի, հատկապես բարձրորակ մասնագետների պահանջ: Քուվեյթն, ի վիճակի չլինելով սեփական ուժերով բավարարել այդ պահանջը, իր դռները բացեց հատկապես արաբական երկրների որակյալ մասնագետների առջև: Հաստատվելով Քուվեյթում՝ հայերը շատ շուտով այստեղ տեղափոխեցին նաև իրենց ընտանիքները: Այսպես ձևավորվեց Քուվեյթի հայ համայնքը, որի թվաքանակը նախքան Ծոցի 2-րդ ճգնաժամը (1990-1991 թթ.) տարբեր տվյալներով 10-13.000 էր[3]:

---

[1] Հարցազրույց Քուվեյթի և Արաբական ծոցի թեմի նախկին կաթողիկոսական փոխանորդ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանի հետ՝ Քուվեյթում, իր ինը տարիների նվիրական աշխատանքի մասին, http://www.aztagdaily.com/archives/50922:

[2] Հայկական հանրագիտարան, Քուվեյթ, http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=859:

[3] Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, 2007, էջ 670:

Քուվեյթի հայ համայնքի ձևավորումը խոսում էր սփյուռքահայության շրջանում մի նոր երևույթի՝ ներարաբական տեղաշարժերի մասին: Նմանատիպ կերպով ձևավորվեցին նաև Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Աբու Դաբիի, Դուբայի և Շարժայի, ինչպես նաև Ծոցի այլ երկրների հայ համայնքները:

Մինչև Ծոցի 2-րդ ճգնաժամը Քուվեյթի հայ համայնքն արդեն իսկ աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ: Այն ուներ Ազգային իշխանություններ, եկեղեցի և Ազգային վարժարան:

Քուվեյթահայերը հիմնականում ներգրավված են առևտրի, արհեստագործության, սպասարկման ոլորտներում, կան նաև բժիշկներ, բանկային ծառայողներ, ոսկերիչներ ու ադամանդագործներ, ուսուցիչներ և այլն: Համայնքն ինտեգրված է քուվեյթյան իրականության մեջ: Այն վայելում է երկրի իշխանությունների հարգանքը, որոնք բարձր են գնահատում հայերի գործունեությունը հատկապես երկրի տնտեսության տարբեր ոլորտներում և չեն խոչընդոտում նաև համայնքնի ազգային-մշակութային գործունեությանը:

1990-1991 թթ. Իրաքի՝ Քուվեյթ ներխուժումը ծանր հետևանքներ ունեցավ նաև քուվեյթահայության համար[4]: Բարեբախտաբար ներխուժումը տեղի ունեցավ 1990 թ. օգոստոս ամսին, երբ զգալի թվով հայեր գտնվում էին երկրից դուրս և չտուժեցին: Տարբեր տվյալներով միայն 500-ից 2.500 հայեր էին մնացել Քուվեյթում իրաքյան ներխուժման 6 ամսվա ընթացքում: Մինչև Ծոցի երկրորդ պատերազմը համայնքում գործում էին ֆուտբոլային թիմ, թատերախումբ, երկսեռ երգչախմբեր և այլն[5]:

Պատերազմից և երկրում ազգային իշխանության վերականգնումից հետո շատ հայեր վերադարձան Քուվեյթ, սակայն զգալի մասը մնաց նոր հաստատված վայրերում: Վերադարձած հայերը պետության կողմից ստացան ֆինանսական աջակցություն[6]: Հայ համայնքը կրեց նաև նյութական

[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Kuwaiti Armenian School Recovers from the Latest War in the Region, 26 May, 2006,

մեծ վնասներ: Ներխուժման ընթացքում իրենց գործունեությունը դադարեցրին նաև հայերին պատկանող զգալի թվով ձեռնարկություններ: Սակայն, այդուհանդերձ, համայնքը կարողացավ հարմարվել նոր պայմաններին և վերագտնել իրեն: Քուվեյթում իրենց գործունեությունը վերսկսեցին ազգային և եկեղեցական մարմիններն ու հաստատությունները, Ազգային վարժարանը, որն այսօր ունի ավելի քան 400 աշակերտ, Սուրբ Վարդանանց եկեղեցին, որը Քուվեյթի միակ հայկական եկեղեցին է: Համայնքում զգալի աշխատանք է տարվում հայապահպանության, հայեցի դաստիարակության և ազգային-մշակութային կյանքն աշխուժացնելու ուղղությամբ:

1962 թ. Քուվեյթի իշխանությունները հայերին շնորհեցին համայնքի օրինականությունը հաստատող վկայագիր, որն աղոթատեղի ունենալու իրավունք էր ընձեռում: 1963 թ. Քուվեյթում սկսեց գործել միակ հայկական եկեղեցին:

Այսօր Քուվեյթում բնակվում է շուրջ 4000 հայ, որի գերակշիռ մասն ապրում է Հավալի նահանգում, որի մաս կազմող Ալ-Սալմիյա շրջանում է գտնվում նաև Սուրբ Վարդանանց եկեղեցին: Ինչպես նշում է Քուվեյթում և Արաբական ծոցի երկրներում կաթողիկոսական փոխանորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանը, «հակառակ համայնքի համեստ թվաքանակին Քուվեյթում գործում են հայաշատ այլ գաղութներում գործող բոլոր եկեղեցական և ազգային կառույցները: Սա բնական երևույթ է, որովհետև Քուվեյթում հաստատված հայերը եկել են Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններից և իրենց հետ բերել են սփյուռքահայության այն փորձառությունը, որով հայությունն իր հավաքական կյանքն է ապրում և ինքնաարտահայտվում տվյալ աշխարհագրական միջավայրում»[7]:

1950-56 թթ. Քուվեյթի հայ համայնքի հոգևոր կարիքների համար Քուվեյթ այցելում էր Բասրայի (Իրաք) հոգևոր հովի-

http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=371ajg93:
[7] Կաթողիկոսական փոխանորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանի հետ հարցազրույցը տե՛ս «Դաշտային հետազոտություն» բաժնում:

վը[8]: 1956 թ.-ից քուվեյթահայ համայնքն անցավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո: 1961 թ.-ից այն ունեցավ մնայուն հովիվ՝ Տ. Պարույր քահանա Սարգսյանը[9]:

1981 թ. Պարսից ծոցի տարածաշրջանն անցավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գերակայության ներքո և կոչվեց Քուվեյթի և Արաբական ծոցի[10] երկրների փոխանորդություն: Իսկ 1992 թ. նոյեմբերին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը Հալեպում գումարած Ազգային ընդհանուր ժողովում որոշեց կազմավորվել Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմը, որի անդրանիկ առաջնորդ նշանակվեց Հոգեշնորհ Տեր Օշական վարդապետ Չոլոյանը (մինչև 1998 թ.): Նա դեռևս 1981 թ.-ից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության որոշմամբ՝ որպես կաթողիկոսական փոխանորդ, հաստատվել էր Քուվեյթում: Նշենք, որ Քուվեյթի և Արաբական ծոցի թեմն ընդգրկում է Քուվեյթի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի և Քաթարի հայ համայնքները:

Քուվեյթահայ համայնքը բավականին լավ կազմակերպված և կենսունակ համայնք է: Թեմի առաջնորդանիստն էլ-Քուվեյթի Սուրբ Վարդանանց եկեղեցին է, իսկ հոգևոր առաջնորդը՝ 2011 թ.-ից Գերաշնորհ Տեր Շահե եպիսկոպոս Փանոսյանը:

Քուվեյթի Սուրբ Վարդանանց եկեղեցին կարևոր դերակատարություն ունի հայ համայնքի կյանքում ինչպես հոգևոր, այնպես էլ կազմակերպչական առումներով: Բոլոր եկեղեցական և ազգային տոները նշվում են պատշաճորեն: Յուրաքաչյուր ուրբաթ մատուցվում է սուրբ պատարագ (Քուվեյթում կիրակի օրերն աշխատանքային են և եկեղեցական արարողությունները տեղի են ունենում ուրբաթ օրերին):

Հայկական դավանական բոլոր շերտերն էլ առկա են համայնքում: Մոտավոր տվյալների համաձայն՝ ճնշող մեծամասնություն են կազմում հայ առաքելականները մոտ (95%), հաջորդը հայ կաթոլիկներն են (5%) և բավականին փոքրաթիվ են (մի քանի ընտանիքներ) հայ ավետարանականները: Անհրաժեշտ է նշել, որ Սուրբ Վարդանանց եկեղեցում համայնքի բոլոր անդամները, առանց դավանական տարբերությունների, աղոթում են միևնույն խորանի առջև:

Թեմն ունի Թեմական խորհուրդ (այն ընտրվում է չորս տարի ժամկետով), որը կազմված է 18 անդամից, որոնցից 9-ը Քուվեյթից է: Բարձրագույն գործադիր մարմինն Ազգային վարչությունն է, որը տնօրինում է համայնքի կյանքը: Համայնքում գործում են սկաուտական, պատանեկան, երիտասարդական, բարեգործական միություններ, ինչպես նաև հայ դատի և մշակութային խմբեր և այլն: Հայկական ինքնության մակարդակը շատ բարձր է համայնքում: Խառն ամուսնությունները նվազագույն մակարդակի վրա են, անգամ անհնարին են, հետևաբար ձուլման վտանգ ուղղակիորեն գոյություն չունի: Այն գրեթե ամբողջությամբ հայախոս համայնք է, և այդ հարցում զգալի ներդրում ունի Քուվեյթի միակ ամենօրյա Ազգային վարժարանը:

Այն հիմնադրվել է 1960 թ., և այս գործում զգալի դերակատարում են ունեցել քուվեյթահայ գործիչներ Երվանդ Թերզյանը, Հարություն Սահակյանը, Գրիգոր Պարիկյանը, Միհրան Զաքարյանը, Պողոս Հովակիմյանը, Հովսեփ Աքլյանը, Աբրահամ Գազանճյանը, Հայրապետ Հայրապետյանը, Վարդան Գարակեոզյանը, Կարապետ Թոփալյանը, Տիգրան Մաճառյանը և Հայկ Քրիստիանյանը: Վերոնշված անձինք էլ ձևավորեցին վարժարանի հիմնադիր մարմինը՝ Դիվանը, հետևյալ կազմով՝ ատենապետ՝ Երվանդ Թերզյան, ատենադպիր՝ Աբրահամ Գազանճյան, գանձապահ՝ Միհրան Զաքարյան, մնայուն քարտուղար՝ Հարություն Սահակյան: Միաձայն դպրոցի տնօրենի պաշտոնում նշանակվեց Հարություն Սահակյանը, ով այդ պաշտոնը վարեց միայն մեկ տարի:

---

[8]Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո, Քուվեյթի և Արաբական ծոցի թեմ, http://historyarmenia.org/5182.html:

[9] Kuwaiti Armenian School Recovers from the Latest War in the Region, 26 May 2006, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=371ajg93:

[10] Մասնագիտական գրականության մեջ թեև հիմնականում ընդունված է տարածաշրջանն անվանել Պարսից ծոց, սակայն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն այն նպատակահարմար է գտել անվանել Արաբական ծոց, ինչպես այն կոչում են արաբական երկրներում: Արևելագիտական գրականության մեջ շատ դեպքերում Պարսից ծոցը կրճատ անվանվում է Ծոց:

1969-70 թթ. Ազգային վարժարանը ստացավ միջնակարգ դպրոցի կարգավիճակ[11]: 1974 թ. եկեղեցու տարածքում կառուցվեց վարժարանի եռահարկ շենքը:

Ասատուր Պողոսյանը հայկական Ազգային վարժարանի տնօրեն է եղել 2 անգամ (1978-1983 թթ.) և (2000-2004 թթ.): 2005 թ.-ից վարժարանի տնօրենն է դոկտոր Մանուկ Մանուկյանը, ով ծնունդով հալեպցի է: Ըստ վերջինիս տրամադրած տվյալների՝ 2005-2006 թթ. ուսումնական տարում վարժարանի աշակերտների թվաքանակը 373 էր, որից 94-ը հաճախում էր մանկապարտեզ, 135-ը՝ նախակրթարան (1-5-րդ դասարաններ), 88-ը՝ միջնակարգ դպրոց (6-9-րդ դասարաններ), 56-ը՝ ճեմարան (10-12-րդ դասարաններ):

Նույն տվյալների համաձայն՝ 2004 թ. աշակերտների թիվը կազմում էր 324: Կարող ենք փաստել, որ երկու տարվա ընթացքում աշակերտների թվաքանակը 15%-ով աճել է: Այս թիվը շատ մոտ է 1999-2000 թթ. ուսումնական տարվա տվյալին, երբ դպրոցում ուսանում էր 376 աշակերտ: Դպրոցի ուսուցչական կազմի և վարչական աշխատողների թվաքանակի վերաբերյալ առկա են հետևյալ տվյալները՝ 37 ուսուցիչ (26-ը՝ հայ), 4 վարչական աշխատող (բոլորը՝ հայ), 10 օժանդակ աշխատողներ (3-ը՝ հայ): Ընդհանուր՝ 51 մարդ (33-ը՝ հայեր)[12]:

Դոկտոր Մանուկյանի տվյալներով՝ վարժարանն այսօր արդեն ունի 430 աշակերտ, որոնք բաժանված են չորս բաժինների՝ մանկապարտեզ (79 աշակերտ), նախակրթարան (163 աշակերտ), միջնակարգ (119 աշակերտ) և ճեմարան (69 աշակերտ): Մինչև 1990-1991 թթ. ուսումնական տարում դպրոցի աշակերտների թիվը հասնում էր 800-ի, սակայն 1991 թ. Ծոցի պատերազմի պատճառով՝ թիվը կտրուկ նվազեց՝ հասնելով ընդհուպ 125 աշակերտի: 2000 թ. սկզբներին թիվը հասավ 325-ի: Վերջին երեք տարիներին աշակերտության թիվը կայուն է:

[11] Kuwaiti Armenian School Recovers from the Latest War in the Region, 26 May 2006, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=371ajg93:

[12] Նույն տեղում:

Վարժարանն ունի պետական հատուկ արտոնագիր: Պետական կրթական ծրագրի հետ մեկտեղ՝ այստեղ դասավանդվում են նաև հայագիտական անհրաժեշտ առարկաներ, այդ թվում՝ նաև կրոն: Վարժարանը գործում է համայնքի նյութական միջոցներով: Հայոց լեզու, հայ գրականություն և կրոն առարկաների դասավանդումն իրականացվում է Բերիո թեմի (Հալեպ) ծրագրով, իսկ հայոց պատմությունը՝ Արևմտյան Ամերիկայի թեմի ծրագրով: Ազգային վարժարանը հայկական միակ կրթական հաստատությունն է Քուվեյթում և լիովին բավարարում է համայնքի պահանջները:

Քուվեյթահայերի 70%-ը սիրիահայեր են, մնացածը՝ Լիբանանից և այլ երկրներից: Լիբանանցի հայերը հիմնականում Այնճարից են՝ մուսալեռցիներ: Մինչ 1990 թ. իրանահայերը կազմում էին 30%, սակայն նրանցից շատերը տեղափոխվել են Արևմուտք:

Համայնքը բավական լավ հարաբերություններ ունի երկրի իշխանությունների հետ, որոնք հատկապես սերտացան 2005 թ. դեկտեմբերին Մեծի Տանն Կիլիկիո Ն.U.O.S.S. Արամ I կաթողիկոսի Քուվեյթ այցելությունից հետո: Հայ համայնք և պետություն հարաբերությունները պաշտոնական են և հիմնված փոխադարձ հարգանքի և գործակցության վրա:

Թեև բավական սիրալիր ու քաղաքավարի հարաբերություններ գոյություն ունեն համայնքի և պետական շրջանակների միջև, սակայն նշենք, որ Արաբական ծոցի երկրներում ապրող մեր հայրենակիցներն այդ երկրների քաղաքացիներ չեն, այլ պարզապես աշխատելու իրավունքով ապրում են տվյալ երկրներում: Այնուամենայնիվ, համայնքը մեծ հարգանք է վայելում թե՛ պետական շրջանակների և թե՛ քուվեյթցիների շրջանում: Նշենք, որ բացի արաբ տեղացի քուվեյթցիներից՝ մնացած բոլոր բնակիչները՝ ներառյալ հայերը, ոչ քաղաքացիներ են՝ Քուվեյթի ժամանակավոր կացության արտոնագրերով, ովքեր Քուվեյթում ընդունված են որպես զանազան երկրներից եկվորներ, ում պետությունը շնորհել է հայկական Սփյուռքի կարգավիճակ և ճանաչում է որպես հայ համայնք:

Քուվեյթյան հասարակության ներսում հայերի շփումները հիմնականում աշխատանքային են, իսկ կենցաղային և այլ

շփումները նվազագույն են: Հայերն այս երկրում ճանաչված են որպես հմուտ արհեստավորներ, վստահելի և հավատարիմ գործընկերներ ու հմուտ մասնագետներ: Հայերն իրենց ներդրումն են ունեցել երկրի բազմակողմանի զարգացման գործում:

Քուվեյթի հայ համայնքն ունի «Շաքե» պարախումբ, որն արդեն 6 տարի է, ինչ գործում է: Ունեցել է երեք մեծ ելույթներ: Տարբեր առիթներով Քուվեյթ են հրավիրվում երգիչներ և խմբեր: Ներհամայնքային ուժերով պատրաստվում և քուվեյթահայությանը ներկայացվում են նաև թատերական տարբեր ներկայացումներ:

Համայնքում գործում են նաև կանանց երկու կազմակերպություններ, եկեղեցուն կից հանձնախումբը և Հայ օգնության միությունը, որը զբաղվում է բարեգործական և մշակութային գործունեությամբ[13]:

Կարող ենք փաստել, որ Քուվեյթի հայ համայնքում, որը գրեթե ամբողջությամբ հայախոս է, ներկա փուլում գոյություն չունեն անմիջական ազգապահպանման լուրջ սպառնալիքներ: Քուվեյթում ինքնության պահպանման հարցում զգալի դերակատարում ունեն եկեղեցին, համայնքի ներսում գործող միություններն ու հատկապես Ազգային վարժարանը, որը նոր սերունդների դաստիարակությունն իրականացնում է բարձր պատասխանատվությամբ:

Քուվեյթի համայնքում առկա մեծագույն խնդիրը սեփական եկեղեցի ունենալու հարցն է: Օտարահպատակները, այդ թվում նաև հայերը, Քուվեյթում չունեն սեփականություն ունենալու իրավունք: 1962 թ.-ից մինչ օրս համայնքը վարձակալում է տարածք, որտեղ էլ գտնվում է Սուրբ Վարդանանց եկեղեցին: Սակայն համայնքում հուսով են, որ, ԱՄԷ-ի օրինակով, մոտ ապագայում երկրի իշխանությունները հայ համայնքին ևս կնվիրաբերեն հողատարածք եկեղեցի կառուցելու համար: Այս նպատակով համայնքում նույնիսկ կազմավորվել է դրամահավաքի հանձնախումբ:

[13] Մանրամասն տե՛ս Archbishop Goriun Babian: We Are Now an Active Community, September, 2007, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=660hzz79:

ՔՈՒՎԵՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 50-ԱՄՅԱԿԸ[14]

2011 թ. մայիսին Քուվեյթի ամենօրյա Ազգային վարժարանը, որը զգալի դերակատարում ունի համայնքի երիտասարդների հայեցի դաստիարակության ու հայապահպանման գործում, տոնեց իր 50-ամյակը: Քուվեյթի ազգային վարժարանը համարվում է հայ համայնքի սիրտը:

Մայիսի 17-ին հոբելյանական տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում Քուվեյթի ազգային իշխանությունների հրավերով էլ-Քուվեյթ ժամանեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետը, Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանից այլ հյուրեր, ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից ժամանած սփյուռքահայեր, Ազգային վարժարանի շրջանավարտներ[15]:

Մայիսի 17-ին կայացավ Վեհափառ հայրապետի հանդիպումը Քուվեյթի էմիր, շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբար Ալ-Սաբահի հետ, որին ներկա էր նաև Քուվեյթում Հայաստանի Հանրապետության դեսպան Ֆադեյ Չարչօղլյանը: Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց քուվեյթահայ համայնքի դերը երկրի զարգացման գործում: Քուվեյթի էմիրը բարձր գնահատեց հայ-քուվեյթյան միջպետական հարաբերությունների մակարդակը՝ նշելով, որ երկկողմ հարաբերությունների զարգացման և հետագա առաջխաղացման մեջ կամրջող առաքելություն է վերապահված նաև քուվեյթահայ համայնքին: Նույն օրը Վեհափառը հանդիպեց նաև Քուվեյթի վարչապետ, շեյխ Նասեր Ալ-Մուհամմադ Ալ-Ահմադ Ալ-Սաբահի հետ:

[14] Քուվեյթի ազգային վարժարանի 50-ամյա գործունեության մասին մանրամասն տե՛ս՝ Հ. Չօլաքեան, Ոսկեմատեան Քուեյթի ազգային վարժարանի (1960-2010), կազմեց՝ Մ.Մանուկեան եւ ուրիշներ, Քուեյթ, 2011, 780 էջ:

[15] Քուվեյթի ազգային վարժարանի 50-ամյա տարեդարձին նվիրված միջոցառումներ, 23 մայիս, 2011, http://ankakh.com/2011/05/121546/:

Նշենք, որ 1995 թ. իր կաթողիկոսական ընտրությունից հետո, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. կաթողիկոսի առաջին այցելությունը Քուվեյթ տեղի ունեցավ 2005 թ. նոյեմբերի 21-ին[16]: Ինչպես հայտնի է, կաթողիկոսը մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրոնական երկխոսության աջակիցներից է: Նա իր այս այցելության շրջանակներում հանդիպումներ ունեցավ մի շարք պաշտոնատար անձանց հետ[17]: Կաթողիկոսը Քուվեյթի հայ համայնքի հետ նշեց իր կաթողիկոսադրման 10-ամյակը: Բացի այդ, Վեհափառը երկրի պետական համալսարաններից մեկում հանդես եկավ դասախոսությամբ՝ «Քրիստոնյաների և մուսուլմանների միջև կրոնական երկխոսություն» թեմայով:

Կաթողիկոսի Քուվեյթ կատարած առաջին այցելության նախապատրաստական փուլում՝ որպես պատասխան քուվեյթյան լրատվամիջոցներից մեկի այն հարցին, թե արդյո՞ք հայկական եկեղեցին բախվում է խնդիրների հետ Քուվեյթում, Քուվեյթում և Ծոցի արաբական երկրներում 2001 թ.-ից կաթողիկոսական փոխանորդ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը հստակորեն, բայց և զգուշավորությամբ նշեց, որ քուվեյթահայ համայնքը երկրի այլ կրոնական փոքրամասնությունների հետ միասին վայելում է կրոնական ազատություններ: «Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Քուվեյթի կառավարությանը: Սակայն մենք նաև անհամբեր սպասում ենք, որ մի գեղեցիկ օր համայնքին հնարավորություն կտրվի ունենալ հողատարածք եկեղեցի կառուցելու համար: Ես վստահ եմ, որ կառավարությունը քննարկում է այդ հարցը: Մենք սպասում ենք, որ հնարավորություն կունենանք նաև խաչ կանգնեցնել մեր եկեղեցու գմբեթին: Վստահ եմ, որ Քուվեյթի իշխանությունները կանեն ամեն բան՝ մեզ այդ հարցում աջակցելու ուղղությամբ»,- նշեց արքեպիսկոպոս Պապյանը[18]:

Ազգային վարժարանի 50-ամյակի արարողություններին մասնակցելու նպատակով Քուվեյթ ժամանած Արամ Ա.

[16] Armenian Catholicos to Visit Kuwait to Cement Relations, 21 November, 2005, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=621dl41:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:

կաթողիկոսը հանդիպեց քուվեյթյան մի շարք թերթերի խմբագրակազմի ու հեռուստաընկերությունների թղթակիցների հետ: Մեկ ու կես ժամ տևած մամլո ասուլիսի ընթացքում Վեհափառը պատասխանեց հարցադրումներին, որոնք առավելապես առնչվում էին իր այցելության նպատակին և, ընդհանրապես, քուվեյթահայությանը, Լիբանան-Քուվեյթ հարաբերություններին, քրիստոնյաների և իսլամադավանների միջև երկխոսությանը, Հայոց ցեղասպանությանը, Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին և այլն[19]: Վեհափառը մասնավորապես ընդգծեց, որ Քուվեյթում հայ համայնքը մեծ ազատություններ է վայելում: Այն ունի իր եկեղեցին ու դպրոցը, լավագույնս կազմակերպած համայնքային կյանք, որի համար մենք (հայերս-Լ.Հ.) մեր երախտագիտությունն են հայտնում Քուվեյթի իշխանությանն ու ժողովրդին[20]:

Վեհափառը կաթողիկոսական փոխանորդի և Ազգային իշխանության ներկայացուցիչների հետ այցելեց Հայաստանի դեսպանատուն: Վեհափառը նաև այցելեց Քուվեյթի ազգային վարժարան, հանդիպում ունեցավ ուսուցչական կազմի հետ, հանդիպեց աշակերտությանը և քաջալերեց նրանց աշխատանքը:

Վեհափառի պատվին ճաշկերույթ կազմակերպեցին Քուվեյթի ազգային վարժարանի հիսունամյակի հանդիսության նախագահ տեր և տիկին Մելիք Մելիքսեթյանները: Ճաշկերույթին ներկա գտնվեցին Սփյուռքի նախարարը, ՀՀ դեսպանը և ազգային մարմինների ներկայացուցիչները[21]:

Մայիսի 17-ի երեկոյան Ազգային վարժարանի սրահում տեղի ունեցավ վարժարանի 50-ամյակը խորհրդանշող հուշաքարի բացման պաշտոնական արարողությունն ու

[19] Կաթողիկոս Արամ Ա–ի այցելությունը Քուվեյթ, 20 մայիս, 2011, http://bnaban.am/index.php?option=com_content&view=article&id=475%3Aaramkatoxikos&catid=53%3Aashxarh&Itemid=77&lang=hy:
[20] Նույն տեղում:
[21] Kuwaiti Armenian School's 50th Anniversary Fiasco. How to Spend Community Money on a Bubble Event?, Is the Newly Appointed Bishop Shahe Panossian Going to be Another "Tourist" Bishop?, 26 June, 2011, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734afdg67:

վարժարանի 50-ամյա գործունեության հուշամատյանի շնորհանդեսը[22]:

Մայիսի 18-ին Քուվեյթի Պետության և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարությունների հովանավորությամբ՝ Քուվեյթի համալսարանի «Ալ-Խալիդիե» սրահում մեկնարկեց Ազգային վարժարանի նախկին և ներկա շրջանավարտների պարգևատրման արարողությունը՝ Քուվեյթի կրթության նորանշանակ նախարար Ահմադ Աբդ Ալ-Մոհսեն Ալ-Մուլայիֆիի, նախարարության այլ պաշտոնյաների, Քուվեյթում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարների և տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ[23]:

Մայիսի 19-ին Քուվեյթի «Հիլթոն» հյուրանոցում տեղի ունեցավ քուվեյթահայ համայնքի տարեկան հավաքը, որի ընթացքում շնորհակալագրեր հանձնվեցին Քուվեյթում Հայաստանի դեսպանին, հիսնամյակի հանդիսությունների պատվո նախագահին և գործադիր մարմնի անդամներին:

[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1992 թ. Քուվեյթը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1994 թ. հուլիսին վերջիններիս միջև ստորագրվեց հուշագիր՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ:

Քուվեյթի և Հայաստանի միջև այս տարիների ընթացքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր: 2003 թ. երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև ստորագրվեց հուշագիր քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու մասին: Որոշ քայլեր են կատարվում տնտեսական համագործակցության ուղղությամբ: Դեռևս 1992 թ. Երևան ժամանեց Քուվեյթի պատվիրակությունը, որը Հայաստանի իր գործընկերների հետ քննարկեց տնտեսական համագործակցություն հաստատելու հնարավորությունները:

Քուվեյթի խորհրդարանում ձևավորվել է «Քուվեյթ-Հայաստան» միջխորհրդարանական բարեկամության խումբ, որի առաջին այցը Հայաստան տեղի ունեցավ 2002 թ. ապրիլին: Այցի ընթացքում հանդիպումներ տեղի ունեցան հայ խորհրդարանականների հետ, քննարկվեցին երկու երկրների օրենսդիր մարմինների միջև համագործակցությունն ընդլայներու հարցերը: Իսկ 2005 թ. փետրվարին պատասխան այցով Քուվեյթ ժամանեց Հայաստանի ազգային ժողովի պատվիրակությունը՝ նախագահի գլխավորությամբ: Այցի շրջանակներում ստորագրվեց երկու երկրների օրենսդիր մարմինների միջև համագործակցության մասին համապատասխան համաձայնագիր[24]: Հայաստանը, կարևորելով հարաբերությունների հետագա զարգացումը Քուվեյթի հետ, 2003 թ. սեպտեմբերին դեսպանի մակարդակով դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Քուվեյթում:

2009 նոյեմբերի 3-4-ը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն առաջին անգամ այցելեց Քուվեյթ[25]: Պետական այցի առաջին

[24] Նիկոլայ Հովհաննիսյան, նշվ.աշխ., էջ 672:
[25] President Serzh Sargsyan in Kuwait, 6 November, 2009, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=521aask42:

օրը նախագահը բանակցություններ վարեց Քուվեյթի էմիր, շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբար Ալ-Սաբահի հետ: Վերջինս վստահություն հայտնեց, որ ՀՀ նախագահի այցը մեծ ազդակ կարող է լինել տարբեր բնագավառներում փոխգործակցությունը նոր թափով առաջ մղելու համար՝ հիմքում ունենալով արաբ և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը, փոխադարձ սերն ու հարգանքը: «Չկա մեր հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող որևէ հանգամանք կամ խնդիր: Նման բարձր մակարդակի հանդիպումները կարելի է համարել երկկողմ հարաբերությունների զարգացման նոր խթան»,- նշեց Քուվեյթի էմիրը:

ՀՀ նախագահն իր հերթին ընդգծեց, որ Քուվեյթի թեև ոչ մեծաթիվ, բայց կազմակերպված հայկական համայնքը բարեկամության հուսալի կամուրջ է երկու երկրների միջև: Նախագահ Սարգսյանը հավելեց, որ Հայաստանի իշխանությունները պատրաստ են մանրամասնորեն քննարկելու և պատշաճ միջավայր ապահովելու և համակողմանի օժանդակություն ցուցաբերելու մեր երկրում հնարավոր ներդրումային ծրագրերի իրականացման հարցում: Բարձր մակարդակով բանակցությունների ավարտից հետո նախագահ Սերժ Սարգսյանն ու Քուվեյթի առաջնորդը ներկա գտնվեցին գյուղատնտեսության, կրթության, մշակույթի և զբոսաշրջության ոլորտներում համագործակցության, ինչպես նաև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին միջկառավարական համաձայնագրերի ստորագրման պաշտոնական արարողությանը: Սերժ Սարգսյանն ու Քուվեյթի էմիր, շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբար Ալ-Սաբահը միջկառավարական հինգ համաձայնագրերի ստորագրումը գնահատեց որպես «Հայաստանի Հանրապետության նախագահի պետական այցի նշանակալի արդյունք և կարևոր քայլ երկու երկրների միջև համագործակցությունը տարբեր ուղղություններով առաջ մղելու գործում»[26]:

Քուվեյթի վարչապետի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին երկու երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարներին վերաբերող հարցեր: ՀՀ նախագահի այցելության ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու և երկկողմ հարաբերությունների զարգացումն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու համար առաջարկվեց ստեղծել միջկառավարական հանձնաժողով: Հայաստանի Հանրապետության նախագահն ու Քուվեյթի վարչապետը համակարծիք էին, որ մոտ ապագայում դեսպանությունների բացումը Երևանում և էլ-Քուվեյթում կնպաստեր հարաբերությունների հետագա զարգացմանը և մշտական քաղաքական երկխոսությանը՝ ընդգծելով, որ երկու երկրների միջև առկա առևտրաշրջանառության փոքր ծավալները չեն համապատասխանում առկա ներուժին: Երկու երկրների արտաքին գործերի նախարարություններին հանձնարարվեց ակտիվացնել խորհրդակցությունները երկու մայրաքաղաքներում դեսպանություններ բացելու շուրջ: Զրուցակիցները նաև պայմանավորվածություն ձեռք բերեցին երկու երկրների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիր ստորագրելու ուղղությամբ քայլերն արագացնելու վերաբերյալ:

«Սա իմ առաջին այցելությունն է Ծոցի տարածաշրջան, և այն նպատակ ունի նոր թափ հաղորդել Ծոցի երկրների հետ մեր համագործակցությանը: Հայաստանը մեծապես շահագրգռված է խորացնելու հարաբերությունները Քուվեյթի և Ծոցի այլ երկրների հետ և երկրների օրենսդիր մարմիններն այս գործում կարող են էական դերակատարություն ունենալ»,-նշեց Սերժ Սարգսյանը Քուվեյթի խորհրդարանի նախագահի հետ հանդիպման ժամանակ: Վերջինս առաջարկեց անցկացնել հայկական մշակույթի օրեր ու նաև այդ ճանապարհով Քուվեյթի բնակչությանը ծանոթացնել Հայաստանի զբոսաշրջային հնարավորություններին[27]:

Այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նախագահը հանդիպում ունեցավ Քուվեյթի ներդրումային հիմնադրամի տնօրեն Բադեր Մուհամմադ Ալ-Սաադի հետ, որի ընթացքում ՀՀ-ում՝ որպես հիմնադրամի կողմից հնարավոր ներդրումային ծրագրերի իրականացման ոլորտներ,

[26] Նույն տեղում:

[27] Նույն տեղում:

առանձնացվեցին էներգետիկայի, գյուղատնտեսության, անշարժ գույքի, լեռնահանքային արդյունաբերության բնագավառները[28]:

ՀՀ նախագահը հանդիպում ունեցավ նաև Քուվեյթի տնտեսական զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն Ադբ Ալ-Վահաբ Ահմադ Ալ-Բադերի հետ: Հիմնադրամը Ծոցի երկրներում գործող տնտեսական զարգացման կարևոր հաստատություններից մեկն է, որի նպատակն է՝ ֆինանսական վարկերի, տեխնիկական օգնության դրամաշնորհների տրամադրմամբ, ներդրումների իրականացմամբ ու կապիտալի մասնակցության ճանապարհով խթանել արաբական երկրների և աշխարհի զարգացող երկրների տնտեսական առաջընթացը[29]: Տնտեսական զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրենը հանդիպման ընթացքում նշեց, որ Քուվեյթ գործուղվելիք մասնագիտական համապատասխան խմբի հետ պատրաստ է մանրամասնորեն քննարկել ՀՀ-ի հետ համագործակցության և ներդրումային կոնկրետ առաջարկությունները:

Քուվեյթ կատարած պետական այցի շրջանակում 2009 թ. նոյեմբերի 4-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ նաև Քուվեյթի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, խոսեց այցելության արդյունքների ու ձեռք բերված պայմանավորվածությունների, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, հայապահպանության ու Հայաստան-Սփյուռք միասնականության անհրաժեշտության և Արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի մասին[30]:

Նախագահ Սարգսյանի 2009 թ. նոյեմբերին Քուվեյթ այցելությունից հետո որոշում կայացվեց այնտեղ դեսպանություն բացելու մասին: Մինչ այդ ԱՄԷ-ում ՀՀ դեսպանը նաև պաշտոնավարում էր Քուվեյթում: Այս հարցում ՀՀ կառավարությանը մեծապես օժանդակեցին նաև Քուվեյթի իշխանությունները:

[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:
[30] On 04 November 2009, President of Armenia Serzh Sargsyan Arrived on a Two-Day State Visit to the State of Kuwait, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=521aask42:

2010 թ. մարտի 29-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Վահագն Մելիքյանն ազատվեց Քուվեյթում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պարտականություններից: Նրա մեկ այլ հրամանագրով Քուվեյթում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Ֆադեյ Չարչօղլյանը[31]: 2010 թ. հունիսի 1-ին Քուվեյթի Պետությունում Հայաստանի Հանրապետության նորանշանակ դեսպանն իր հավատարմագրերը հանձնեց Քուվեյթի Պետության էմիր, շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբեր Ալ-Սաբահին[32]: Նույն թվականի օգոստոսի 23-ին ՀՀ դեսպանը հանդիպեց Քուվեյթի Պետության Ազգային ժողովի նախագահ Մուհամմադ Ջասեմ Ալ-Խուրաֆիի հետ[33]: Հանդիպման ընթացքում քննարկվեց հայ-քուվեյթյան միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման հնարավորությունները: Երկուստեք ընդգծվեց խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելությունների ակտիվացման, բարեկամության խմբերի միջև կապերի ամրապնդման, ինչպես նաև Հայաստանի և Քուվեյթի օրենսդիր մարմինների միջև իրավապայմանագրային դաշտի ընդլայնման գործում կողմերի պատրաստակամությունը[34]:

2010 թ. սեպտեմբերի 23-ին Քուվեյթի «Մարինա» հյուրանոցի «Սիքս Պալմս» սրահում առաջին անգամ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության անկախության 19-րդ տարեդարձին նվիրված պետական ընդունելություն[35]: Հանդիսությանը ներկա էին տեղական իշխանությունների,

[31] Պաշտոնական լրահոս, Նշանակումներ, 31 մարտ, 2010, http://www.armtimes.com/tag/2436:
[32] Հայաստանի դեսպան Ֆադեյ Չարչօղլյանն իր հավատարմագրերը հանձնեց Քուվեյթի Պետության էմիր շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբար Ալ-Սաբահին, 2 հունիս, 2010, http://ankakh.com/2010/06/38674/:
[33] Քուվեյթի Պետությունում Հայաստանի դեսպան Ֆադեյ Չարչօղլյանը հանդիպել է Ազգային Ժողովի նախագահ Մուհամմադ Ջասեմ ալ-Խուրաֆիի հետ, 25 օգոստոս, 2010, http://www.mediainform.am/am/topic.php?id=10728:
[34] Նույն տեղում:
[35] Քուվեյթում անկախության 19–րդ տարեդարձին նվիրված ընդունելություն է տեղի ունեցել, 25 սեպտեմբեր, 2010, http://haynews.am/hy/archive-6432:

Քուվեյթի արտաքին գործերի նախարարության, հայ համայնքի, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, ինչպես նաև հայտնի գործարարներ և քաղաքական գործիչներ[36]:

Վերջին տարիներին ակտիվացել են նաև Հայաստան-Քուվեյթ գիտակրթական համագործակցությունը: 2010 թ. նոյեմբերի 1-ին Քուվեյթի համալսարանի հրավերով պաշտոնական այցով Քուվեյթում գտնվող ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը հանդիպեց Քուվեյթի համալսարանի տնօրեն Զավադ Բեհբեհանիի հետ[37]: Հանդիպման ընթացքում երկու կրթօջախների ղեկավարները «Երևանի պետական համալսարանի և Քուվեյթի համալսարանի միջև համագործակցության փոխըմբռնման հուշագիր» ստորագրեցին:

Այցի շրջանակում նոյեմբերի 2-ին Արամ Սիմոնյանը հանդիպեց Քուվեյթի համալսարանի արաբերեն լեզվի և պատմության, անգլերենի և ազգագրության ֆակուլտետների ղեկավարության հետ: Քննարկման հիմնական թեման ուսանողների փոխանակման և համատեղ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու հնարավորություններն էին:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 3-ին, ԵՊՀ-ի ռեկտորը հանդիպեց Քուվեյթի բարձրագույն կրթության և գիտության փոխնախարար Խալեդ Ալ-Սաադի հետ: Ի թիվս այլ հարցերի՝ կողմերը քննարկեցին նաև Քուվեյթի համալսարանում հայագիտության կենտրոն հիմնելու հնարավորության հարցը:

Նոյեմբերի 4-ին ԵՊՀ-ի ռեկտորն այցելեց Քուվեյթի ազգային վարժարան և Հայ առաքելական Սուրբ Վարդանանց եկեղեցի: Արամ Սիմոնյանին հյուրընկալեցին նաև Քուվեյթի հայ համայնքն ու ազգային իշխանությունների ներկայացուցիչները:

2010 թ. դեկտեմբերին աշխատանքային այցով Քուվեյթի Պետությունում գտնվող ՀՀ փոխվարչապետ, տարածքային

[36] Նույն տեղում:

[37] ԵՊՀ–Քուվեյթ. նոր համագործակցություն, 04.11.10, http://sis.ysu.am/site/index.php?lang=3&page=2&search_keyword=&m=&y=&p_num=69&id=3162:

կառավարման նախարար Արմեն Գևորգյանը դեկտեմբերի 8-ին Ազգային առաջնորդարանում հանդիպեց Քուվեյթի հայ համայնքի ներկայացուցիչների հետ[38]: Նա բարձր գնահատեց Քուվեյթի ոչ մեծաթիվ, բայց կազմակերպված հայկական համայնքի դերը երկու երկրների բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում՝ նկատելով, որ Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ ջերմ ու դրական վերաբերմունքը ձևավորվել է հենց հայ համայնքի շնորհիվ:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև համայնքային կյանքին, համայնքին հուզող խնդիրներին: Փոխվարչապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին մասնավորապես Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, հայապահպանության խնդիրներին, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերին[39]:

2011 թ. սեպտեմբերի 19-ին Քուվեյթում ՀՀ դեսպանությունում կայացավ դեսպան Ֆադեյ Չարչօղլյանի մամուլի ասուլիսը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա տարելիցին, որին մասնակցում էին տեղական առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչները[40]: Դեսպանը խոսեց երկու երկրների միջև օդային ուղիղ չվերթ բացելու հնարավորությունների, առկա իրավապայմանագրային դաշտի հետագա ընդլայնման, ինչպես նաև՝ երկկողմ առևտրատնտեսական համագործակցության խթանման և ապրանքաշրջանառության մակարդակի բարձրացման հեռանկարների մասին: Հայաստանի դեսպանը ներկայացրեց նաև մշակութային և գիտակրթական ոլորտներում կա-

[38]Արմեն Գևորգյանը հանդիպել է Քուվեյթի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, 8 դեկտեմբեր, 2010 http://tert.am/am/news/2010/12/08/armengevorgyan/:

[39] Նույն տեղում:

[40]Քուվեյթում ՀՀ դեսպանը մամուլի ասուլիս է տվել, 19 սեպտեմբեր, 2011, http://www.aysor.am/am/news/2011/09/19/fadey-charchoghlyan/:

տարված աշխատանքներն ու ապագա ծրագրերը, ինչպես նաև պատասխանեց լրագրողների հարցերին[41]:

2011 թ. դեկտեմբերի 11-15-ը Քուվեյթ այցելեց Զարգացման հայկական գործակալության գլխավոր տնօրեն Ռոբերտ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի և Քուվեյթի միջև առևտրատնտեսական հարաբերությունների հետագա ընդլայնման հնարավորությունները քննարկելու նպատակով: Այցը նշանավորվեց Զարգացման հայկական գործակալության և Քուվեյթի ներդրումային ընկերության միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ, ինչն էլ ավելի իրատեսական հարթություն տեղափոխեց ներդրումների բնագավառում փոխգործակցության խթանման հեռանկարները: Այցի շրջանակներում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև քուվեյթյան մի շարք մասնավոր ընկերությունների և հայ համայնքի գործարար շրջանակների հետ[42]:

Հայ-քուվեյթյան հարաբերությունների սերտացման համատեքստում կարևոր նշանակություն ունեցավ այս տարվա նոյեմբերի 19-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի այցելությունը Քուվեյթ: Այցի շրջանակներում ԱԳՆ նախարարին ընդունեց Քուվեյթի էմիր, շեյխ Սաբահ Ալ-Ահմեդ Ալ-Ջաբեր Ալ-Սաբահը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին 2009 թ. ՀՀ նախագահի՝ Քուվեյթ կատարած պետական այցի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը: Հատուկ ընդգծվեց էլ-Քուվեյթում և Երևանում երկու երկրների դեսպանությունների առկայության, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովի գործունեության կարևորությունը[43]:

Էդուարդ Նալբանդյանը հանդիպեց նաև երկրի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար, շեյխ Սաբահ Խալեդ Ալ-Համադ Ալ-Սաբահի հետ, որի ընթացքեում Նալբանդյանը նշեց, որ Հայաստանը մեծ կարևորություն է տալիս Քուվեյթի և ընդհանրապես արաբական աշխարհի հետ իր հարաբերությունների զարգացմանը: Հանդիպմանը նախարարները քննարկեցին երկու պետությունների ղեկավարների պայմանավորվածությունների իրականացման ընթացքը, իրավապայմանագրային դաշտի ընդլայնումը, առևտրատնտեսական համագործակցության խորացումը, բանկային, գյուղատնտեսության, առողջապահության, կրթության և մշակույթի բնագավառներում կապերի զարգացումը և այլն: Բանակցությունների օրակարգում էին միջազգային կազմակերպություններում փոխգործակցության, երկու արտգործնախարարությունների միջև պարբերական խորհրդատվությունների անցկացման, տարածաշրջանային և միջազգային մի շարք այլ հարցեր[44]:

Էդուարդ Նալբանդյանը մտահոգություն հայտնեց նաև Սիրիայում առկա իրավիճակի կապակցությամբ՝ շեշտելով, որ հակամարտության պատճառով Հայաստանը շարունակում է հազարավոր սիրիահայ փախստականներ ընդունել: Քուվեյթի ԱԳ նախարարն այս համատեքստում տեղեկացրեց Հայաստանում գտնվող սիրիահայերին մարդասիրական օգնություն հատկացնելու Քուվեյթի իշխանությունների որոշման մասին: Հայաստանի և Քուվեյթի արտաքին գործերի նախարարները ստորագրեցին դիվանագիտական անձնագիր կրողների համար մուտքի արտոնագրային ռեժիմը վերացնելու մասին համաձայնագիրը, որով հիմք դրվեց երկու երկրների միջև մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման գործընթացին:

ՀՀ արտգործնախարարը հանդիպեց նաև հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկեց իր այցի արդյունքները, ներկայացրեց ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրները, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ կատարվող քայլերը[45]:

---

[41] Հայ-քուվեյթյան միջկառավարական տնտեսական համատեղ հանձնաժողովի նիստը տեղի կունենա՝ հոկտեմբերին, 19 սեպտեմբեր, 2011, http://armenpress.am/arm/print/663722/:

[42] Նույն տեղում:

[43] ՀՀ ԱԳ նախարարի այցը Քուվեյթ, 21.11.2012, http://araxnews.com/region/3237.html:

[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում:

ՔԱԹԱՐԻ, ԲԱՀՐԵՅՆԻ ԵՎ ԱԼ-ԽՈԲԱՐԻ (ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ) ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Քաթարն ու Բահրեյնը ևս ներառված են թեմի վարչական սահմաններում: Քաթարում և Բահրեյնում մինչև 2001 թ. կազմակերպված համայնքային կյանք գոյություն չուներ: Վերջին տարիներին արագորեն ավելացավ Քաթարում հայերի թիվը[46]:

Գերաշնորհ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը, դեռևս 2004 թ. կանխատեսելով համայնքի թվաքանակի աճը, Քաթարում առաջին անգամ ձևավորեց Ազգային վարչություն, որը բավական կազմակերպված աշխատանք էր իրականացնում՝ նորակազմ համայնքում ազգային կառույցներ ստեղծելու ուղղությամբ: Հիշյալ վարչությունն անմիջական կապ է պահպանում թեմի առաջնորդի հետ: Ծննդյան և Զատկի տոների կապակցությամբ մատուցվում է պատարագ: Տարվա ընթացքում կազմակերպվում են կրոնական այլ արարողություններ, մշակութային որոշ ձեռնարկներ:

2007 թ. ապրիլին գումարված թեմի լիագումար տարեկան ժողովը, միաձայն հաստատելով կատարված առաջարկը, թեմի կաթողիկոսական փոխանորդին լիազորեց Քաթարում կազմակերպել ընտրություններ՝ թեմի կանոնադրության համաձայն: Մինչ այդ Քաթարի Ազգային վարչությունը կազմավորել էր ընտրական հանձնաժողով, որը պետք է նախապատրաստեր ընտրությունները: Ապա հրավիրվեց կաթողիկոսական փոխանորդը Սուրբ ծննդյան պատարագ մատուցելու և 2008 թ. հունվարի 17-ին նախագահելու ընտրությունները, որոնք անցան համերաշխ մթնոլորտում:

Նորընտիր Ազգային վարչությունը, անցնելով իր աշխատանքին, սկսեց մշակել երկարաժամկետ ծրագրեր՝ համայնքի համախմբման, հայկական ինքնության և հայոց լեզվի պահպանման ուղղությամբ:

Քաթարում վերջերս արված ժողովրդագրական ճշտումները ցույց են տվել, որ այնտեղ ապրում է ընտրելու իրավունք ունեցող 228 հայ, իսկ համայնքի ընդհանուր թիվը հաշվվում է 350-500 մարդ: Միտումներ են նկատվում, որ առաջիկա 4-5 տարիների ընթացքում հայերի թիվը կարող է հասնել 1000-ի[47]:

Վերջին 4-5 տարիների ընթացքում Քաթարի տնտեսական արագ զարգացման և շինարարական հսկայական ծրագրերի իրականացման արդյունքում արագ թափով ավելանում է նաև այնտեղ ապրող հայերի թվաքանակը:

Քաթարն ունի բնական գազի մեծ պաշարներ և դասվում է աշխարհում բնական գազ վաճառող գլխավոր երկրների շարքին: 10-15 տարի առաջ երկրում կրոնական և քաղաքական մթնոլորտը բավական պահպանողական էր: Սակայն ներկայումս Քաթարում ևս առկա է կրոնական հանդուրժողականության մթնոլորտ:

Այստեղ գործում է մեկօրյա Մեսրոպյան վարժարանը, որը տեղակայված է լիբանանյան նորակառույց դպրոցում և 2008 թ. ուներ 25 աշակերտ: Մեսրոպյան հայկական վարժարանը հիմնադրվել է 2004 թ.: Դրա հիմնադրման օրը համընկավ հայ գրերի գյուտի 1600-ամյակի հետ: Դպրոցն ունի 4 դասարան, որոնցում սովորում են 4-12 տարեկան երեխաներ: Շաբաթական մեկ օր երկու ժամ տևողությամբ դասավանդվում է հայոց լեզու, պատմություն և կրոն[48]:

2006 թ. մայիսի 27-ին Դոհայում տեղի ունեցավ Քաթարի Մեսրոպյան հայկական մեկօրյա վարժարանի երկրորդ ուսումնական տարվա փակման միջոցառումը, որին ներկա էին Քաթարում այցելությամբ գտնվող գերաշնորհ Տեր Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը և ԱՄԷ-ի հայ համայնքի հոգևոր հովիվ Տեր Արամ Տեյիրմենճյանը: Միջոցառմանը ներկա էին վարժարանի աշակերտները, ծնողներն ու ուսուցիչները, ինչպես նաև Քաթարի ազգային վարչության ներկայացուցիչները[49]:

---

[46] Bahrain Armenians Get Organized, 19 February, 2010, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=833aala86:

[47] Qatari Armenians Strengthen Community Structures, 28 March, 2008, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734jhz67:

[48] Նույն տեղում:

[49] Mesrobian One Day Armenian School of Qatar Completes 2nd Academic Year, 27 May, 2006, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734ajj67:

Ողջույնի խոսքում այդ ժամանակ դպրոցի տնօրեն Սարգիս Կերկեզյանը ծնողներին և ուսուցիչներին շնորհակալություն հայտնեց համագործակցության և աջակցության համար, ինչն օգնել էր հաղթահարել դժվարությունները: Նա շեշտեց հայոց լեզվի, պատմության և կրոնի ուսուցման կարևորությունը, որը նպաստում է երիտասարդ սերնդի շրջանում հայկական ինքնության պահպանմանը[50]:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության և Քաթարի Պետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1997 թ. նոյեմբերի 5-ին[51]: 2010 թ. հունիսից ՀՀ-ում Քաթարի դեսպանն է Իբրահիմ Աբդ Ալ-Ռահման Ալ-Մեղայիսիբին (նստավայրը՝ Թեհրան):

2010 թ. հուլիսից Քաթարում ՀՀ դեսպան նշանակվեց Վահագն Մելիքյանը (նստավայրը՝ Աբու Դաբի)[52], իսկ ներկայումս այս երկրում մեր դեսպանն է Գեղամ Ղարիբջանյանը: 1999 թ. Քաթար պետական այցով այցելեց ՀՀ-ն ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, իսկ 2002 թ.՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը[53]:

ՀՀ և Քաթարի միջև կնքվել են հետևյալ համաձայնագրերը.

- Համաձայնագիր առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ. 22 ապրիլի, 2002 թ., Դոհա
- Համաձայնագիր ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին. 22 ապրիլի, 2002 թ., Դոհա
- Համաձայնագիր երկակի հարկումը բացառելու մասին. 22 ապրիլի, 2002թ. , Դոհա
- Համաձայնագիր օդային հաղորդակցության բնագավառում համագործակցության մասին. 22 ապրիլի, 2002 թ., Դոհա
- Համաձայնագիր միջկառավարական համատեղ հանձնաժողով ստեղծելու մասին. 22 ապրիլի, 2002 թ., Դոհա

[50] Նույն տեղում:
[51] Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանության պաշտոնական կայք, Քաթար, տե՛ս http://uae.mfa.am/hy/bilateral-qa/:
[52] Նույն տեղում:
[53] Նույն տեղում:

- Համաձայնագիր գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին. 22 ապրիլի, 2002 թ., Դոհա:

***

Բահրեյնում հայերը երբեք էլ մեծ թիվ չեն կազմել, և ապագայում ևս նրանց թիվը ավելանալու հակում չունի: Ներկայումս այնտեղ ապրում է տասը հայ ընտանիք: Շատերն այստեղ հաստատվում են ժամանակավորապես՝ հետագայում այլ երկրներ տեղափոխվելու նպատակով: Միայն մի քանի ընտանիք տևական ժամանակ է, ինչ ապրում է Բահրեյնում, որտեղ, հայության փոքրաթիվ լինելու պատճառով, ազգային կառույցներ դեռևս չկան:

Բահրեյնին սահմանակից է Սաուդյան Արաբիայի Ալ-Խոբար նավթարդյունաբերական շրջանը, որտեղ գործի բերումով տարիներ ի վեր ապրում են որոշակի թվով հայեր՝ մոտ 70 մարդ, որոնք շաբաթ և կիրակի օրերը շատ դեպքերում անցկացնում են Բահրեյնում, որտեղ կյանքն ավելի ազատ է[54]:

Ինչպես հայտնի է, մինչ օրս էլ քրիստոնյա հոգևորականների մուտքը Սաուդյան Արաբիա արգելված է, պաշտոնապես արտոնված չէ այստեղ քրիստոնեական որևէ հավաքական միջոցառման անցկացումը: Նաև դա է պատճառը, որ հայերը շաբաթվա վերջին շատ հաճախ այցելում են Բահրեյն:

2008 թ. մարտի 28–ին Գերաշնորհ Տեր Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը հովվական այցելություն կատարեց Բահրեյն[55], որին ներկա գտնվեցին նաև Ալ-Խոբարում ապրող հայերը: Բահրեյնում է բնակվում Ադրինե Խաչատուրյանը, ով շուրջ 30 տարի հաստատվել է այստեղ և բավական լավ կապեր ունի թագավորական ընտանիքի հետ[56]: Նրա նախաձեռնությամբ առաջին անգամ 2004 թ. դեկտեմբերի

[54] Qatari Armenians Strengthen Community Structures, 28 March, 2008, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734jhz67:
[55] «Ազդարար» Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների առաջնորդարանի տեղեկատու, Ա տարի, թիվ 39, 25 դեկտեմբեր, 2009:
[56] Qatari Armenians Strengthen Community Structures, 28 March, 2008,
http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734jhz67:

10-ին, ապա նաև 2008 թ. փետրվարի 15–ին Կորյուն արքեպիսկոպոս Պապյանն այցելեց Բահրեյն և պատարագ մատուցեց տեղի անգլիկան եկեղեցում: 2009 թ. դեկտեմբերի 10-ից-13-ը Բահրեյնում անցկացվեց իր նշանակությամբ անանախադեպ միջոցառումների շարք: Նախապես պատրաստված ծրագրի շրջանակներում արքեպիսկոպոս Պապյանը, Տ. Արամ քահանայի ուղեկցությամբ, Բահրեյնի մայրաքաղաք Մանամա ժամանեց 2009 թ. դեկտեմբերի 10-ին: Նույն օրը երեկոյան Անժել Ամիրյանի աջակցությամբ, կազմակերպվեց ջութակի երեկո, որին, բացի հայերից, ներկա էին նաև եվրոպացի և տեղացի ունկընդիրներ:

Հաջորդ օրը Բահրեյնի հույն ուղղափառ փոքրիկ մատուռում Գերաշնորհ Տեր Կորյուն Պապյանը մատուցեց պատարագ, որին ներկա էր Ալ-Խոբարից եկած շուրջ 40 հայ, իսկ բահրեյնցի հայերից շատերը միայն այդ օրը հնարավորություն ունեցան ծանոթանալ միմյանց հետ[57]: Պատարագի ընթացքում խորանը սպասարկում էր Ալ-Խոբարից ժամանած սարկավագ Վարդան Թապաավետիքյանը: Սուրբ պատարագի երգեցողությունը ղեկավարում էր Արաբական Միացյալ էմիրություններում հոգևոր հովիվ Տեր Արամ քահանա Տեյիրմենճյանը:

Բահրեյնում այդ օրվա պատարագին մասնակցեց 86 հայ, ինչն աննախադեպ էր այդ երկրի համար: Պատարագից հետո կազմակեպվեց ընթրիք՝ 60 հոգու մասնակցությամբ «Բրիթիշ քլաբում»՝ կաթողիկոսական փոխանորդի նախագահությամբ[58]: Ճաշկերույթին հատկապես հիշատակվեցին Ալ-Խոբարից Սեդրակ Տաքեսյանի ու Կարո Մխճավագյանի, իսկ Բահրեյնից՝ Միրո Հայթայանի, Արա Խաչերյանի և Ռաֆֆի Պողոսյանի անունները, որոնց նյութական զգալի օժանդակության շնորհիվ՝ հնարավոր դարձավ թեմի առաջնորդի հովվական այցելությունը:

Նշենք, որ մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ զգալի թվով հայություն է ապրում և աշխատում նաև Ձեդդայում, որը Սաուդյան Արաբիայի երկրորդ մեծ քաղաքն է մայրաքաղաք էռ-Ռիյադից հետո:

[57] Նույն տեղում:
[58] Նույն տեղում:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արդի շրջանում հայերը սկսել են հաստատվել Արաբական Միացյալ էմիրություններում 1960-ականներից՝ որպես աշխատանքային միգրանտներ, ովքեր ունեն նաև առևտրական հետաքրքրություններ: Ավելի ուշ՝ 1975 թ. բռնկված լիբանանյան քաղաքացիական պատերազմը (1975-1990 թթ.), 1979 թ. Իրանում շահական վարչակարգի տապալումը, 1980-1988 թթ. իրաք-իրանյան պատերազմը, ինչպես նաև տարածաշրջանում առկա լարվածության օջախները, նպաստեցին, որպեսզի Մերձավոր Արևելքի երկրներից Արաբական Միացյալ էմիրություններում (ԱՄԷ) հայեր հաստատվեն: Նմանապես Ռուսաստանից, Հայաստանից, ԱՄՆ-ից, Կանադայից, Եվրամիության երկրներից տարբեր ժամանակներում և տնտեսական շարժառիթներով զգալի թվով հայեր տեղափոխվեցին ԱՄԷ:

Արաբական Միացյալ էմիրությունները մինչև անկախության ձեռքբերումը՝ 1971 թ. գտնվում էր Մեծ Բրիտանիայի իշխանության ներքո: Անկախության նվաճումից հետո պետությունը սկսեց արագ թափով զարգանալ: Ներկայումս ԱՄԷ-ն դաշնություն է՝ կազմված յոթ էմիրություններից: Եթե անցյալում Ծոցի շրջանում ապրելն ու աշխատելն իր որոշակի դժվարություններն ուներ՝ կապված տարածաշրջանին բնորոշ դժվարությունների հետ, ապա ժամանակի ընթացքում իրավիճակը շահեկանորեն փոխվեց: Արդյունքում հայերի հոսքն ԱՄԷ աստիճանաբար ավելացավ, իսկ հայությունը 1980-ականներից ձեռք բերեց համայնքին բնորոշ առանձնահատկություններ: Արաբական Միացյալ էմիրություններում հայերի թիվը գնահատվում է մոտ 5000[59]: Ստույգ թվեր գոյություն չունեն, քանի որ համայնքում մեծ է արտահոսքն ու ներհոսքը:

[59] Արաբական Միացեալ էմիրութեանց Հայ Գաղութի Պատմութիւն http://www.emahay.com/am/index.php/community/community-history:

Սկզբնական շրջանում ԱՄԷ-ում ձևավորվեց հայկական երկու համայնք՝ Շարժա-Դուբայում և Աբու Դաբիում: Հայերի ավելի քան 80%-ը բնակվում էր Շարժա-Դուբայում, իսկ մնացած 20%-ը՝ Աբու Դաբիում: Ներկայումս որոշակի թվով հայեր են բնակվում նաև Հյուսիսային էմիրություններում (Ալ-Ֆուջեյրա, Աջման, Ռաս Ալ-Խայմա, Ումմ Ալ-Քուեյն):

2006 թ. համայնքը հանդիսավոր կերպով պատրաստվում էր նշել հիմնադրման 25-ամյակը: Այդ կապակցությամբ սիրիահայ պատմաբան դր. Շողեր Աշըգյանին հանձնարարվեց զբաղվել համայնքի հուշամատյանի պատրաստմամբ[60]: 2008 թ. Շողեր Աշըգյանի աշխատասիրությամբ հրատարակվեց «Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց մէջ» վերտառությամբ գիրքը, որտեղ արխիվային և դաշտային նյութերի հիման վրա ուսումնասիրվել է հիմնականում Շարժա-Դուբայի հայ համայնքը, ինչը շնորհակալ աշխատանք է:

Չնայած քաղաքացիության արգելքին[61]՝ պետության կողմից հայ հանրությունը դիտարկվում է իբրև կրոնական համայնք (ալ-ջալիյա ալ-արմանիյա): Համայնքը, գործելով պատմական ազգային սահմանադրության շրջանակներում, փաստացիորեն ղեկավարվում է հոգևոր-կրոնական իշխանության կողմից, որն էլ պետության մոտ համայնքի ներկայացուցիչն է: Համայնքի բարձրագույն և օրենսդիր կառույցը թեմական մարմինն է, իսկ գործադիր մարմինները տեղերում ձևավորվող ազգային վարչություններն են:

ԱՄԷ-ում գործում են հայկական երկու մեկօրյա վարժարաններ՝ Շարժայում և Աբու Դաբիում: Համայնքին և նրա կառույցներին մաս են կազմում հայ առաքելական, ինչպես նաև հայ կաթոլիկ և հայ ավետարանական եկեղեցու հետևորդները, ովքեր սեփական կառույցներ չունեն. հիմնականում այցելում են հայ առաքելական եկեղեցի: ԱՄԷ-ի հայ համայնքի մշտական հոգևոր հովիվը ներկայումս Արամ քահանա Տեյիրմենճյանն է, ով այցելում է նաև Քաթարի և Բահրեյնի հայերին: ԱՄԷ-ում թեմի աթոռանիստը Շարժայի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որը գործում է 1998-ից:

Ավելի քան երեսուն տարվա պատմություն ունեցող այս համայնքի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը պաշտոնավարում է տարբեր հիմնարկություններում, կան բարձր պաշտոններ զբաղեցնող հայեր: Հայերի շրջանում կան ճարտարապետներ, տնտեսագետներ, բարձր տեխնոլոգիաների մասնագետներ, բժիշկներ, ուսուցիչներ: Մոտ 10 տոկոսը գործարարներ են, անձնական առևտրով զբաղվողներ: Վերջին տարիներին նույնպես շարունակվել է տարբեր ոլորտի հայ մասնագետների ներհոսքը ԱՄԷ:

[60] 25th Anniversary Celebrations in the United Arab Emirates, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=521gf42:

[61] Նշենք, որ այս երկրում ապրում են 160 և ավել ազգությունների ներկայացուցիչներ, որոնք ունեն միայն ժամանակավոր կացության և աշխատելու իրավունք:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Պատմականորեն հայությունը ներկայիս ԱՄԷ-ում գոյություն ունի շուրջ 50 տարի: Շարժա-Դուբայում հաստատված առաջին հայերը, որ եկան 1960-ականներից, հիմնականում ճարտարապետներ ու արհեստավորներ էին: Նրանց թիվը մեծ չէր, հազիվ 20-30 մարդ: Արդեն 1960-ականների վերջին 7-10 հայ ընտանիք էր ապրում Շարժա-Դուբայում, սակայն ավելի մեծ թիվ էին կազմում ամուրի երիտասարդները: Բավական մեծ թվով հայեր այդ տարիներին աշխատում էին «Դուբայ Փեթրոլեում Քոմփանի» և «Դուբայ Քոնթրաքթինգ Քոմփանի» և այլ ընկերություններում: Ճիշտ է, այդ տարիներին համայնքային կյանք չկար, բայց հայ երիտասարդներն ունեին սիրված հավաքատեղիներ, հետաքրքրվում էին միմյանցով, օգնում իրար:

1975-80 թթ. տեղի է ունենում հայերի շոշափելի ներհոսք Լիբանանից, Սիրիայի և Իրանից: 1970-ականների կեսերին մոտավորապես 100 հայ էր ապրում Շարժա-Դուբայում, իսկ 1980-ականների սկզբին՝ 500: Նկատի ունենալով, որ հայերի թիվը մեծանում է, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը սկսում է շրջան հոգևորականներ ուղարկել՝ տեղի հայերին կազմակերպելու նպատակով: 1977 թ. մայիսի 9-ին Հոգեշնորհ Տեր Մեսրոպ վարդապետ Աշճյանը մատուցում է առաջին պատարագը, որին ներկա էին 70 հայեր: 1979թ. դեկտեմբերի 20-ին քուվեյթահայ Մելիք Մելիքսեթյանի ընկերակցությամբ՝ Անթիլիասից Հոգեշնորհ Տեր Օշական վարդապետ Չոլոյանն է ժամանում Շարժա, հանդիպում Շարժա-Դուբայի 22 ազգայինի հետ, իսկ դեկտեմբերի 21-22-ին Աբու Դաբիում նույնանման կազմակերպչական աշխատանք է տանում: Տեղերում նա ստեղծում է ժամանակավոր ազգային մարմիններ[62]:

Իր երկրորդ այցելության ժամանակ 1980 թ. փետրվարին վարդապետ Չոլոյանն այդ ժամանակավոր մարմինները գրեթե նույն կազմով հաստատում է իբրև Դուբայի և Շարժայի հայ ազգային վարչություն, ինչպես նաև Աբու Դաբիի ազգային վարչություն[63]: Ինչպես նշել ենք 1981 թ. Անթիլիասի հովանու ներքո ձևավորվում է Քուվեյթի և Արաբական ծոցի կաթողիկոսական փոխանորդությունը՝ վարչական կենտրոն ունենալով էլ-Քուվեյթ քաղաքը, որից հետո վարդապետ Չոլոյանը Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. կաթողիկոսի կողմից նշանակվում է Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների կաթողիկոսական փոխանորդ: 1982-1994 թթ. ընթացքում կաթողիկոսական փոխանորդը Շարժա-Դուբայում մինչև թեմական առաջին ընտրությունները (1994 թ.) նշանակում է յոթ ազգային վարչություններ՝ յուրաքանչյուրը երկու տարի պաշտոնավարման ժամկետով[64]: 1993 թ. ԱՄԷ հայ համայնքն ունենում է իր առաջին մնայուն հոգևոր հովիվը՝ Հոգեշնորհ Տեր Բաբկեն վարդապետ Չարյան[65]:

1994 թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցան թեմական առաջին ընտրությունները: Թեմական առաջին ընդհանուր ժողովը գումարվեց 1995 թ. փետրվարի 16-17-ը էլ-Քուվեյթում, որին մասնակցեցին Աբու Դաբիի, Շարժա-Դուբայի և Քուվեյթի ազգային երեսփոխանները[66]: Ժողովն առաջին հերթին ընտրեց թեմի առաջնորդին: Երեք թեկնածուներից միաձայն առաջնորդ ընտրվեց թեմի կաթողիկոսական փոխանորդ ծայրագույն վարդապետ Չոլոյանը[67]: Նշենք, որ Չոլոյանը եղել է թեմական ժողովի կողմից ընտրված թեմի միակ առաջնորդը, ով պաշտոնավարել է մինչև 1998 թ.: Դրանից հետո Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն ինքն է նշանակում կաթողիկոսական փոխանորդներին:

Դեռևս 1980-ականներից և մասնավորապես 1995-ից հետո, երբ ձևավորվեցին թեմական մարմինը, ազգային իշխա-

[62] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց մէջ, 2008, աշխատասիրութեամբ դոկտոր՝ Շողիկ Աշըգեանի, էջ 29:

[63] Նույն տեղում, էջ 30:

[64] Մանրամասն տես՝ Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց մէջ, նշվ.աշխ., էջ 32-37:

[65] Արաբական Միացեալ էմիրութեանց հայ գաղութի պատմութիւն http://www.emahay.com/am/index.php/community/community-history:

[66] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց մէջ, նշվ. աշխ., էջ 38:

[67] Նույն տեղում, էջ 38-39:

նությունները, և հայ առանձին ազդեցիկ մարդիկ ԱՄէ-ի օրենքների շրջանակներում հետամուտ են եղել հայ համայնքի պաշտոնական ճանաչմանը: Հենց այս խնդիրներին էր հետամուտ նաև Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը, ով 1995 թ. մարտի 9-16-ը Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմին իր առաջին հովվապետական այցելությունն է տալիս: Արաբական Միացյալ Էմիրություններում՝ որպես պետության հյուր, արժանի ընդունելության է արժանանում: Կաթողիկոսը հանդիպում է երկրի նախագահ, շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ-Նահայանին (1971-2004), Շարժայի կառավարիչ, դոկտոր, շեյխ Սուլթան բին Մուհամմադ Ալ-Քասիմիին, պաշտպանության նախարար և Դուբայի փոխկառավարիչ, շեյխ Մուհամմադ բին Ռաշիդ Ալ-Մաքթումին՝ խնդրելով հայ համայնքին կենտրոն կառուցելու համար տրամադրել հողատարածք և արտոնություն[68]: Հետագայում համայնքի ներկայացուցիչներ Վարուժան Ներկիզյանը, Հայկազ Թահմազյանն ու Մակի Մղտեսյանն իրենց անձնական կապերի շնորհիվ՝ այդ գործում փորձում են օգտակար լինել[69]: Ընդառաջ գնալով հայ համայնքի խնդրանքին՝ 1996-ի ապրիլի 16-ին Ալ-Քասիմին պաշտոնական նամակով հայտնում է, որ հայ համայնքին հատկացված է հողակտոր՝ եկեղեցի կառուցելու արտոնությամբ[70]: Այսպիսով, տեղաբնակ հայերը փաստացիորեն ճանաչվում են որպես համայնք՝ ազգային եկեղեցական հաստատություններ հիմնելու իրավասությամբ:

Արդյունքում հայ համայնքը սկսեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության գործընթացը, որը տևեց 1997-1998 թթ.՝ իրականություն դառնալով թեմական մարմնի անդամների, Դուբայի և Հյուսիսային էմիրությունների Հայկական ազգային վարչության և վերջապես՝ նվիրատուների ջանքերով[71]: 1997 թ. ապրիլի 3-ին Մեծի Տանն Կիլիկիո

[68] Նույն տեղում, էջ 58:
[69] Նույն տեղում, էջ 58:
[70] Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պատմութիւնը:
[71] 1996 թ. դեկտեմբերին եկեղեցու և կենտրոնի շինարարական աշխատանքներին նոր թափ հաղորդելու նպատակով թեմական ժողովը որոշեց կազմավորել 10 անդամից բաղկացած հանձնաժողով, որ կոչվեց Շարժայի եկեղեցու կառուցման հանձնաժողով:

Արամ Ա. կաթողիկոսը, 16 կնքահայրերի ներկայությամբ, օրհնեց եկեղեցու հիմնաքարը, որի վրա գրված էին նվիրատուների անունները[72]:

Եկեղեցու (նաև դպրոցի և սրահի) նախագծման աշխատանքը վստահվեց շարժաբնակ ֆրանսահայ ճարտարապետ Բաբկեն Այվազյանին, ով կիրառեց հայկական ճարտարապետությանը բնորոշ մեթոդներ, իսկ նրա ներկայացրած նախագիծն ընդունվեց քաղաքապետարանի կողմից: Ճարտարապետը բծախնդիր կերպով և առանց նյութական վարձատրության ոչ միայն նախագծեց եկեղեցին, այլև հետևեց կառուցման բոլոր հանգրվաններին[73]: Եկեղեցու շինարարության գործին համայնքի անդամների բարոյական և նյութական աջակցությունը դրական ազդեցություն ունեցավ համայնքային կյանքի աշխուժացման հարցում:

Ի վերջո, 1998 թ. նոյեմբերին ԱՄէ-ի հայ համայնքի միասնական ջանքերի շնորհիվ՝ Շարժայում հայկական եկեղեցի ունենալու գաղափարն իրականություն է դառնում: Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսն, ընդառաջ գնալով նույն թվականին կաթողիկոսական փոխանորդ դարձած Գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Սարգսյանի և ազգային իշխանությունների հրավերին՝ նոյեմբերի 15-ին կատարում է Շարժայի Հայաստանյաց առաքելական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը[74]: Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին շուրջ երկու հազար հայեր Շարժայից, Դուբայից, Աբու Դաբիից, Քուվեյթից և այլ վայրերից:

[72] Եկեղեցու 16 սյան համար ընտրվեցին 16 նվիրատու, որոնցից յուրաքանչյուրից պահանջվեց վճարել 100.000 դիրհեմ: Նրանք են՝ Պետրոս Ասլանյանը, Հայկազ Թահմազյանը, Հարություն Օհաննեսյանը, Հովհաննես Պատաշյանը, Վարուժան Ներկիզյանը, Պողոս Շահան Բարսեղյանը, Մելիք Մելիքսեթյանը, Ավետիս Մոմճյանը, Կիրակոս Տարագճյանը, Վաչե Տիքիճյանը, Լենա Հատաճյանը, Զարեհ Թութունճյանը, Զոն Վահանյանը, Արա Քեոսեյանը, Թամար Տեր-Հովհաննիսյանը, Հրայր Սողոմոնյանը: Հաջորդ երկու տարիներին այլ բարերարներ ևս կատարեցին նվիրատվություններ: Մասնավորապես՝ Զոհրաբ Թեփերճյանը, Գուրգեն Քյուրտոզլյանը:
[73] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց մէջ, էջ 59:
[74] Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պատմութիւնը, :

Նշենք, որ եկեղեցին գտնվում է Շարժայի Յարմուք թաղամասում, որտեղ գտնվում են տեղի բոլոր քրիստոնեական եկեղեցիները: Եկեղեցու բակում կա Մեծ Եղեռնի զոհերին նվիրված խաչքար:

Շարժայի հայկական եկեղեցու օծման արարողությունից հետո կատարվեց նորակառույց Օհաննեսյան վարժարանի և «Փիեռ Քէօսէէան» սրահի հանդիսավոր բացման արարողությունը, որին ներկա էին բարերարները՝ տեր և տիկին Հարություն և Հայկան Օհաննեսյանները, Աղավնի Քեոսեյանը, տեր և տիկին Արա Քեոսեյանը[75]: Նշենք, որ հայկական կենտրոնը բացառիկ դեր ունի հայկական ազգային կյանքը կազմակերպելու գործում: Ի տարբերություն այլ շրջանների՝ Աբու Դաբիի, որտեղ հայերն իրենց ազգային կյանքը կազմակերպելու համար վարձակալում են տարածքներ և նույնիսկ եկեղեցի պատարագ մատուցելու համար, Շարժայի հայ համայնքն այժմ նման խնդիրներից զերծ է:

1998-ի սեպտեմբերից մինչ օրս ԱՄԷ-ի հայ համայնքի հոգևոր հովիվ Արամ քահանա Տեյիրմենճյանը[76] զգալի դեր ունի համայնքի ազգային, հասարակական և եկեղեցական կյանքը կազմակերպելու առումով, իսկ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից՝ օծման թվականից սկսեց գործել թաղային խորհուրդը, որի գործունեության մեջ են մտնում եկեղեցու կարիքները հոգ տանելը, եկեղեցական արարողությունները և տոնակատարությունները կանոնավոր կերպով նշելը: Թաղական խորհուրդը զբաղվում է նաև համայնքի երեխաների կրոնական դաստիարակությամբ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ունի քառաձայն երգչախումբ, իսկ պատարագի երգեցողության խմբավարությունն իրականացնում է Միհրան Բեյնիրճյանը[77]:

[75] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց մէջ, էջ 61:

[76] Նշենք, որ Տեյիրմենճյանն առաջին ոչ կուսակրոն հոգևորականն է, որ ծառայության անցավ համայնքում:

[77] Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պատմութիւնը, http://www.emahay.com/am/index.php/church/st-gregory-the-illuminator-church-history-:

Շարժայի հայկական եկեղեցուց բացի ծրագրվել է եկեղեցի կառուցել նաև Աբու Դաբիում: Երկրի մայրաքաղաքում հայկական եկեղեցի ունենալու հարցն ԱՄԷ-ի նախագահի՝ հանգուցյալ շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ-Նահայանի առաջ բարձրացրել են Մեծի Տանն Կիլիկիո երկու կաթողիկոսները՝ երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսը և Արամ Ա. Կաթողիկոսը: Հատկանշական է, որ 1998-ին Ալ-Նահայանն Աբու Դաբիի հայ համայնքին նվիրեց 100.000 ԱՄՆ դոլար[78]:

Ալ-Նահայանի մահվանից երկու տարի անց՝ 2006 թ., գահաժառանգի հատուկ հրամանագրով Աբու Դաբիի հայ համայնքին նվիրաբերվեց 2475 քմ. հողատարածք արվարձանային Մուսաֆահ շրջանում՝ եկեղեցի կառուցելու նպատակով: Այս իրողությունը մեծ ոգևորություն առաջացրեց համայնքում: Աբու Դաբիի իշխանություններին շնորհակալություն հայտնելու նպատակով նույն թվականի նոյեմբերին ԱՄԷ-ի մայրաքաղաք ժամանեց այդ շրջանի կաթողիկոսական փոխանորդ, Գերաշնորհ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը[79]: Նա ԱՄԷ-ի հոգևոր հովիվ Տեր Արամ քահանա Տեյիրմենճյանի, թեմական մարմնի և Աբու Դաբիի ազգային վարչության անդամների հետ նոյեմբերի 7-ին «Ասր Ալ-բահր» պալատում հանդիպում ունեցավ Նախագահական գործերի նախարարության ընդհանուր տնօրեն Ալի Սալիմ Օբեյթ Ալ-Քաաբիի հետ: Վերջինիս հետ զրույցի ընթացքում արքեպիսկոպոս Պապյանը նշեց, որ հայերը դարեր շարունակ եղբայրաբար են ապրել արաբ ժողովրդի հետ, իսկ Ցեղասպանությունից հետո վայելել են արաբ ազնվական ժողովրդի հովանավորությունը հատկապես Միջին Արևելքում: Իր հերթին Ալ-Քաաբին նշեց, որ երկրի իշխանությունները որևէ խտրականություն չեն դնում քրիստոնյաների և մուսուլմանների միջև և դեմ են կրոնական ծայրահեղականությանը[80]:

[78] Գերաշնորհ Տէր Կորիւն արքեպիսկոպոս Պապեանի այցը Ապու Տապի հատուկ առաքելութեամբ, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=436dad11:

[79] Նույն տեղում:

[80] Նույն տեղում:

Նշենք, որ Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին II-ը ևս իր ուշադրության մեջ է պահում շրջանի հայ համայնքը: 2008 թ. նոյեմբերի 24–ին ԱՄԷ-ում Վեհափառ հայրապետը հանդիպեց Շարժայի կառավարչին՝ Ալ-Քասիմիին: Գարեգին II-ը իր երախտագիտությունը հայտնեց շեյխին այն ուշադրության և աջակցության համար, որ նա ցուցաբերում է ԱՄԷ-ի հայ համայնքին, հատկապես Շարժայի հայերին՝ եկեղեցի կառուցելու հարցում: Վեհափառը շնորհակալություն հայտնեց Ալ-Քասիմիին Հայաստանում Հաղարծին վանական համալիրի վերանորոգման աշխատանքները հովանավորելու համար[81]:

Վեհափառի և Ալ-Քասիմիի միջև ծավալված զրույցի բովանդակային կողմը ի ցույց է դնում ԱՄԷ-ի իշխանական ընտրանու դրական դիրքորոշումը հայերի նկատմամբ: Ալ-Քասիմին բարձր գնահատեց Մերձավոր Արևելում հայ համայնքերի դերակատարումը, հայերին նա անվանեց հասարակության աշխատասեր, հավատացյալ անդամներ և հատկապես շեշտեց գիտելիքի և կրթության նկատմամբ հայերի սերը, ինչը մեծապես արժևորվում է հայ ընտանիքներում: Հանդիպման ընթացքում Վեհափառն ու շեյխը խոսեցին նաև միջկրոնական երկխոսության մասին, ԱՄԷ-ում տարբեր կրոնների և մշակույթների հանդեպ գոյություն ունեցող հանդուրժողականության մասին[82]:

2010 թ. մարտին Հնդկաստանից վերադառնալու ճանապարհին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը կանգ է առնում Աբու Դաբիում և հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ հորդորում է հետամուտ լինել եկեղեցի կամ մատուռ կառուցելու գործին: Իսկ մի քանի տարի անց՝ 2012 թ. մայիսի 4-ին, Կիլիկիո կաթողիկոսն այցելում է ԱՄԷ, հայ համայնքի համար պատարագ մատուցում Աբու Դաբիի հույն ուղղափառ եկեղեցում, այցելում ապագա հայկական եկեղեցու շինարարության համար նվիրաբերված հողատարածք, որտեղ էլ կատարվում է Աբու Դաբիի հայկական եկեղեցու հանդիսավոր հիմնարկեքը: Արարողությանը ներկա էին թե՛ համայնքի ներ-

[81] Catholicos Karekin II meets with the Ruler of Sharjah, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=112kjh92:
[82] Նույն տեղում:

կայացուցիչներ, թե՛ հայաստանցի դիվանագետներ, Լիբանանից հրավիրված էր Հայ բարեգործական ընդհանուր միության (Հ.Բ.Ը.Մ.) փողերախումբը[83]: Կաթողիկոսին ուղեկցում էին թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահե արքեպիսկոպոս Փանոսյանը, ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանը, Աբու Դաբիի, Շարժա-Դուբայի և Քաթարի հայ համայնքների ներկայացուցիչներ[84]:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. առաջարկում է եկեղեցին անվանել Սուրբ Նահատակաց, ինչը խորհրդանշում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Ծրագրվում է, որ այն Շարժայի եկեղեցու նման ունենալու է հարակից սրահ և դասարաններ հայկական վարժարանի համար:

Նշենք, որ երկու տարի առաջ՝ 2010 թ. մայիսի 22-ին, Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների Թեմական մարմնի Արաբական Միացյալ Էմիրությունների ժողովը Գերաշնորհ Տեր Կորյուն արքեպիսկոպոս Պապյանի նախագահությամբ և Արամ Ա. Վեհափառի հովանավորությամբ՝ կազմավորվել էր Աբու Դաբիի եկեղեցու կառուցման հանձնաժողով[85]՝ նրան օժտելով շինարարության հետ կապված հարցերում որոշումներ ընդունելու լայն լիազորություններով[86]:

Արամ Ա. Կաթողիկոսը 2012 թ. հունիսի 7-ի նամակով շնորհավորեց և հաստատեց հանձնախմբի գործունեությունը: Հայ առաքելական եկեղեցու ավանդության համաձայն՝ Աստծու տունը պետք է ունենա 16 սյուն, որոնք խորհրդանշում են Քրիստոսի 12 առաքյալներին և 4 ավետարանիչներին: 16 սյուները պետք է ունենան իրենց բարերարները՝ կնքահայրերը, որոնց նյութական աջակցությամբ էլ պետք է կառուցվի եկեղեցին: Այս սկզբունքը, ինչպես արդեն նշել ենք, իրականացվեց նաև Շարժայի եկեղեցու կառուցման ժամանակ:

[83] Ազդակ, հունիսի 25, 2012:
[84] http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=371agla93:
[85] Հանձնաժողովի կազմը՝ Արա Խանոյան (Աբու Դաբի), Գրիգոր Մահսերեճյան (Աբու Դաբի), Վարուժան Ներկիզյան (Հյուսիսային էմիրություններ) և Հրայր Սողոմոնյան (Հյուսիսային էմիրություններ):
[86] Ապու Տապիի եկեղեցաշինութեան ծրագիր, http://www.azad-hye.net/media/u1/construction-committee-abu-dhabi-2011.pdf:

Աբու Դաբիի եկեղեցու բարերարներից յուրաքանչյուրից կպահանջվի ներդնել 200.000 դիրհեմ[87]:

Հարկ է փաստել, որ Հայ առաքելական եկեղեցին Արաբական Միացյալ էմիրություններում բացառիկ կարևոր դեր է կատարել հայապահպանության և համայնքի ազգային և եկեղեցական կյանքը կազմակերպելու առումով: Այս հարցում անվիճարկելի է կաթողիկոսական փոխանորդների շահեկան և կառուցողական գործունեությունը:

[87] Նույն տեղում:

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայ համայնքներն՝ ի տարբերություն Սփյուռքի այլ համայնքների, ոչ միայն ավելի հայախոս են, այլև այս համայնքներում ազգային և կրոնական ծեսերն ու ավանդույթները լավագույն ձևով են պահպանված: ԱՄԷ-ի հայ համայնքի հիմնական կորիզը, ինչպես նշեցինք, Մերձավոր Արևելքի հայ համայնքներից ներգաղթածներն են, որոնք իրենց հետ բերել են ազգապահպանության փորձառությունը: Այս հանգամանքը զգալիորեն նպաստել է, որպեսզի Արաբական Միացյալ էմիրություններում 1980-ականներից ազգային գործունեություն ծավալվի և զարգանա հայկական մշակույթը: Սակայն ինչպես Սփյուռքի ցանկացած համայնքում, այնպես էլ ԱՄԷ-ի հայ համայնքում, հայապահպանության հարցում գոյացել են մի շարք խնդիրներ: Դրանցից մեկը կապված է օտարախոսության հետ, որին իր հարցազրույցներում մեկում անդրադարձել է թեմի նախկին առաջնորդ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը[88]: Նա նշում է, որ օտարախոսությունը տարածված է նոր սերնդի մեջ, որի պատճառն ԱՄԷ-ում ամենօրյա հայկական վարժարանների բացակայությունն է: Խնդիրն այն է, որ երկրի գերիշխող, այդ թվում՝ կրթության լեզուն, անգլերենն է (երկրում բնակվող հարյուր վաթսուն ազգությունների ներկայացուցիչները հենց այդ լեզվով են միմյանց հետո հաղորդակցվում): Հայ երեխաները, որոնց ծնողները Սիրիայից, Լիբանանից կամ Իրանից են, ստիպված են հաճախել օտար դպրոցներ, շփվել աշխարհի տարբեր ազգությունների ներկայացուցիչների հետ՝ դառնալով անգլիախոս: Ամենօրյա վարժարանի հարցը համայնքի ամենացավոտ, բայց և օրակարգային խնդիրներից է: Այս խնդրի մասին արքեպիսկոպոս Պապյանը նշում է. «Հակառակ մեր թափած ճիգերուն, մինչեւ իսկ բարերարն ալ գտնուելէ ետք, դժբախտաբար մինչեւ այսօր կա-

[88] «Վանայ ձայնի» հարցազրոյցը Կորիւն արքեպիսկոպոս Պապեանի հետ՝ Քուվեյթի մէջ իր ինը տարուան նուիրական աշխատանքի մասին, http://www.aztagdaily.com/archives/50922:

րելի չէ եղած շուրջ 150 աշակերտ-աշակերտուհի ունեցող միօրեայ Օհաննէսեան վարժարանը ամէնօրեայ ազգային վարժարանի վերածել»[89]:

Հայապահպանությանն ուղղված մյուս մարտահրավերն ԱՄԷ-ում, ինչպես նշեցինք, խառն ամուսնություններ են[90]: Հարկ է փաստել, որ օտարախոսության, խառն ամուսնությունների և առհասարակ աշխարհայնացման (գլոբալիզացիա) հարաճունությունը, այնուամենայնիվ, բացասական հետևանքներ կարող են ունենալ ԱՄԷ-ում հայկական ինքնության պահպանման հարցում: Հրաչ Քալսահակյանն այս հարցում սակայն լավատես է: Նրա կարծիքով՝ հայությունն ԱՄԷ-ում ձուլման վտանգ չունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարներն այստեղ չեն կարող ինտեգրվել կամ ձուլվել[91], քանի որ քաղաքացիություն շնորհելու հատուկ ծրագիր ԱՄԷ-ն չի հետապանդում:

Նա նշում է, թե որպես հավաքականություն՝ հայերն ԱՄԷ-ում ապրում են կղզիացած և ինքնամփոփ կյանքով, ինչը հնարավորություն է ստեղծում որոշ չափով պահպանել ավանդական դիմագիծը: Ըստ այդմ, հայերն այստեղ լավ համբավ են վայելում, ինչը բացատրվում է տասնամյակներ շարունակ վերջիններիս պարտաճանաչության դրսևորումամբ և զանազան արաբական երկրներում չափավոր վարվելակերպով: Հայերն ԱՄԷ-ում էլ շարունակում են «տասը չափի՛ր և մեկ գործի՛ր» սկզբունքով շարժվել, որի շնորհիվ կարողացել են շահել տեղացի բնակչության համակրանքը[92]:

Փաստ է, որ ինքնության պահպանման հարցում կարևոր օղակներ են դպրոցը, ինչպես նաև երիտասարդությանն ազգային կյանքի մեջ ներգրավելու հանգամանքը: Այս երկու խնդիրն էլ ԱՄԷ-ում խոցելի վիճակում են: Հայկական դպրոցներն ԱՄԷ-ում, ինչպես արդեն նշել ենք, ամենօրյա չեն, ինչը կապված է ֆինանսական և այլ բնույթի դժվարությունների հետ, իսկ ազգային կյանքում երիտասարդության ներգրավվածությունն այդքան էլ ընդգրկուն չէ, որը նույնպես կապված է որոշակի ռեսուրսների անհրաժեշտության և նոր գաղափարների ներդրման հետ: Հատկանշական է, որ ԱՄԷ-ում համայնքի մի հատված մասնակցում է համայնքային միջոցառումներին, այլ կերպ ասած՝ ազգային գործընթացին: Ի դեպ, այստեղ ամեն տարի նշվում է Ապրիլի 24-ը, այդ թեմայով կազմակերպվում են միջոցառումներ, Կլոր սեղաններ, հրավիրվում են Հայ դատի գրասենյակների պատասխանատուներ և այլն: Մեծ շուքով շարունակվում է նշվել Մայիսի 28-ը, ազգային այլ տոներ: Սակայն կա մի հատված, որն ուղղակի անտարբեր է ազգային իրողությունների նկատմամբ: Արքեպիսկոպոս Պապյանի կարծիքով՝ նրանց թիվը մեծ է, օրինակ, Դուբայում, որտեղ անտարբերության կամ հարգելի պատճառներով ո՛չ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի են հաճախում, ո՛չ էլ իրենց զավակներին միօրյա վարժարան բերում: Բացի այդ, արքեպիսկոպոս Պապյանը վկայակոչում է հայաստանցիների, որոնք բնակվում են Շարժա-Դուբայում (և հազվադեպ բացառությամբ) կապ չեն պահում հայ համայնքի հետ[93]:

Թեմական մարմնի անդամ Հայկազ Թահմազյանը 2007թ. «Ազատ հային» տված հարցազրույցում նույնպես խոսում է հենց այդ խնդիրների մասին: Նրա կարծիքով՝ պետք է ուշադրություն դարձնել համայնքի երիտասարդությանը, նրանց համար թե՛ Շարժայում և թե՛ Դուբայում կառուցել այնպիսի հավաքատեղիներ, որտեղ կկարողանան և՛ մարզվել և՛ այլ զբաղմունքներ գտնել: Իսկ Շարժայում ամենօրյա հայկական դպրոցի ստեղծումը հսկայական ներդրումներ է պահանջում (մոտ 20 մլն. դիրհեմ), այդ իսկ պատճառով Թահմազյանն առաջարկում է, որպեսզի դպրոցն ընդունի նաև

[89] Նույն տեղում:

[90] Տե՛ս «Վանայ ձայնի» հարցազրույցը Կորիւն արք. Պապեանի հետ, նշված տեղում:

[91] Խնդիրն այն է, որ տեղացիները երկրի միայն 15% են և երկրին մեծ վտանգ կսպառնա, եթե օտարահպատակներին քաղաքացիության իրավունք տրվի:

[92] Հարցազրույցը «Ազատ-Հայ» թերթի հիմնադիր-տնօրեն Հրաչ Քալսահակյանի հետ, norkhosq.net on September 2nd, 2012:

[93] «Վանայ ձայնի» հարցազրույցը Կորիւն արքեպիսկոպոս Պապեանի հետ: ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության տվյալների համաձայն՝ հայաստանցիների թվաքանակը մոտ 800 է:

օտարազգի աշակերտներ[94]: Այդպիսի դպրոցներ կան Մերձավոր Արևելքի շատ երկրներում, քանի որ միայն հայ երեխաների համար նախատեսված դպրոցները տնտեսապես ձեռնտու չեն[95]: Հարկ է փաստել, որ չնայած ամենօրյա վարժարանի շուրջ ծավալվող զրույցներին ու քննարկումներին՝ հարցը դեռևս վերջնական լուծում չի ստացել:

[94] Դպրոցի հայ աշակերտները շարունակում են սովորել հայոց լեզու և պատմություն՝ ընդհանուր դասացուցակից դուրս:
[95] Elections in the Gulf Armenian Communities, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734djd67:

ԱՄԷ ՀԱՅ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք, հայերն ԱՄԷ-ում իրենց համայնքային կյանքը սկսել են կազմակերպել 1980-ականներից՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով ԱՄԷ-ում հաստատված հայերի շեշտակի թվային աճի արդյունքում: Մասնավորապես 1970-ականների վերջերից Անթիլիասի կաթողիկոսությունը կապ է հաստատել տեղի հայերի հետ և ժամանակավոր եկեղեցականներ ուղարկել՝ տոնական որոշ օրերի հայկական ծիսակատարությամբ արարողություններ կատարելու տեղի կաթոլիկ կամ անգլիկան եկեղեցիներում: Հետագայում գործի է դրվել 1860-ական թվականներին Կ. Պոլում մշակված ազգային սահմանադրությունը, որի հենքի վրա պատրաստվել է տեղական մի կանոնադրություն, որը տարիներ անց վավերացվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի կողմից: Նշենք, որ մինչև Չոլոյանի կողմից ազգային վարչությունների նշանակմանը՝ դեռևս 1976-ին, մի խումբ երիտասարդներ Շարժայում արդեն ստեղծել էին համայնքային կյանքի մի կորիզ: Այդ երիտասարդներն էին Տիգրան Թաշճյանը, Անդրանիկ Տաղլյանը, Պիեռ Քեռսեյանը, Պետրոս Արսլանյանը, Հարություն Տիրացյանը և Զարեհ Թութունջյանը: Աբու Դաբիում նույնպես ստեղծվել էր ազգայինների մի խմբակ: Սկզբնական շրջանում համայնքի նվիրյալների նյութական և բարոյական շարունակական աջակցության շնորհիվ՝ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին օտար եկեղեցիների և դպրոցների սրահներում համայնքային կյանքի մի յուրօրինակ մթնոլորտ ստեղծելու համար, ինչը նպաստեց նոր սերնդի ազգային դաստիարակությանը: Նշենք, որ 1981 թթ. Ազգային առաջին վարչության անդամներ դարձան Պերճ Աբրահամյանը (ատենապետ), Հրաչ Արզումանյանը (ատենադպիր), Անդրանիկ Տաղլյանը, Գրիգոր Ճերեճյանը, Վարդան Ինկլիզյանը, Վարդգես Դավլյանը և Մխիթար Բաղալյանը[96]:

Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմի ստեղծումից հետո ի վեր տեղի են ունեցել թեմական հինգ ընտրու-

[96] Տեղեկությունը՝ ըստ Հրաչ Քալսահակյանի:

թյուններ (1994, 1998, 2002, 2007, 2011): Թեմական ժողովն ընտրվում է չորս տարին մեկ և կազմված է 21 անդամից՝ 18 աշխարհիկ և 3 հոգևորական: Վերջին շրջանում թեմական ժողովին լիազոր ձայնի իրավունքով մասնակցում է նաև Քաթարի ազգային վարչության ատենապետը: Թեմական ժողովի երեսփոխաններն ընտրվում են Շարժա-Դուբայի (5), Աբու Դաբիի (4) և Քուվեյթի (9) համայնքների ներկայացուցիչներից: Նրանց պաշտոնավարման շրջանը 4 տարի է: Թեմական ժողովի ընտրություններին կարող են մասնակցել 18 տարին լրացած համայնքի բոլոր հայ անդամներն՝ (այդ թվում՝ հայ կաթոլիկ և ավետարանական) առանց դավանական խտրականության, ինչը հատուկ է միայն այս թեմին և եզակի երևույթ է ընդհանրապես Սփյուռքի ազգային կյանքում[97]: Թեմական ժողովը ղեկավարում է թեմի առաջնորդը /այս պարագայում՝ կաթողիկոսական փոխանորդը/:

2007 թ. թեմական մարմնի փետրվարի 16–ի ընտրություններում Շարժա–Դուբայից (այստեղ համայնքի չափահասների թիվը մոտ 2000 է) ընտրելու իրավունք ունեցող 281 մարդուց 151-ը չմասնակցեց ընտրությանը[98], ինչը նշանակում է, որ ընտրողների թիվը շատ փոքր էր: Իսկ 2011-ի թեմական ժողովի ընտրությունները նախկինում տեղի ունեցած բոլոր ընտրությունների մեջ աչքի են ընկնում մրցակցության բացակայությամբ: Ընտրական պայքարին մասնակցում էին այնքան թեկնածուներ, որքան թեմական մարմնի տեղերն են՝ 18: Շարժայում Վարուժան Ներկիզյանը և Հայկազ Թահմազյանը ստացան 122 ձայն, մինչդեռ մյուս երկու թեկնածուները՝ Հրայր Սողոմոնյանը և Արա Քեոսեյանը՝ 109 և, համապատասխանաբար, 83 ձայն: Միակ նորընտիրը Կարպիս Խորոզյանն էր, որ ստացավ 84 ձայն[99]: Աբու Դաբիում արդյունքները հետևյալն էին՝ դոկտոր Վարդգես Արզումանյան՝ 24 ձայն, Վահե Երիցյան՝ 20 ձայն, Սեդրակ Տեր-Մելքոնյան՝ 17 և Զարեհ Ամատունի՝ 16 ձայն:

[97] Արաբական Միացեալ Էմիրութեանց Հայ Գաղութի Պատմութիւն http://www.emahay.com/am/index.php/community/community-history:
[98] Elections in the Gulf Armenian Communities, http://www.azadhye.net/news/viewnews.asp?newsId=734djd67:
[99] Նույն տեղում:

Թեմական մարմինը երկու տարի ժամկետով տեղերում նշանակում է ազգային վարչություններին[100]: ԱՄԷ-ում գործում է ազգային երկու վարչություն: Դուբայի և Հյուսիսային Էմիրությունների ազգային վարչության ատենապետը Արա Քեոսեյանն է, իսկ Աբու Դաբիինը՝ Վարդգես Արզումանյանը: Նշենք, որ ազգային վարչությունները նշանակում են եկեղեցու թաղական խորհուրդ և դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, իսկ վարչություններին կից գործում են տարբեր հանձնախմբեր, որոնք պատասխանատու են վարչությունների առաջ: Վերջիններիս օժանդակությամբ թե՛ համայնքի ներսում, թե՛ դրանից դուրս կազմակերպվում են մշակութային, մարզական և հասարակական միջոցառումներ: Հայկական մշակութային և այլ միջոցառումներ շատ դեպքերում կազմակերպվում են նաև անհատական և այլևայլ նախաձեռնությունների արդյունքում: Ազգային վարչությունների, դրանց կից հանձնաժողովների և դպրոցների շրջանակներում կազմակերպվում են ազգային-կրոնական, մշակութային և հասարակական միջոցառումներ, հուշ-երեկոներ և այլն: Այլ կերպ ասած՝ ազգային վարչությունների գործունեությունը միտված է ազգապահպանությանը:

Արաբական Միացյալ Էմիրություններում ազգային վարչությունների գործունեությունը և դրանց առանձնահատկությունները ներկայացնելու համար բերենք Դուբայի և Հյուսիսային Էմիրությունների ազգային վարչության վերջին շրջանի գործունեության օրինակը[101]: Կառույցի շրջանակներում կազմավորվել են զանազան հանձնաժողովներ, որոնք տարբեր ոլորտներում իրականացրել են վարչության որոշումները: Վարչության հովանու ներքո գործում են հետևյալ հանձնաժողովները՝ Դատաստանական, Երիտասարդական, Թեմական, Համացանցի և Կայքէջի, Հոգաբարձուների խորհուրդ, Մշակութային-գեղարվեստական և Տիկնանց:

Դատաստանական հանձնաժողովն ունի նախադատական և վերաքննիչ ատյաններ, որոնք բաղկացած են 3 կամ 5

[100] Արաբական Միացեալ Էմիրութեանց Հայ Գաղութի Պատմութիւն http://www.emahay.com/am/index.php/community/community-history:
[101] Տեղեկությունները քաղված են ազգային վարչության արխիվային նյութերից:

անդամից: Անդամներից մեկը պետք է պարտադիր հոգևորական լինի: Դատական խորհրդի անդամները նշանակվում են Ազգային վարչության կողմից՝ 2 տարի ժամկետով: Նրանք կարող են նաև վերանշանակվել: Խորհուրդը կոչված է՝ քննելու և լուծում տալու ընտանեկան և ամուսնական վեճերին՝ հայ եկեղեցու ավանդույթների և կանոնների համաձայն: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է թեմի կաթողիկոսական փոխանորդի վերահսկողությամբ: Սակայն անհրաժեշտության դեպքում վիճարկելի խնդիրները վերաքննվում են Ազգային առաջնորդարանի վերաքննիչ ատյանում՝ կաթողիկոսական փոխանորդի նախագահությամբ, իսկ ամուսնալուծության որոշումներն ուղարկվում են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսին, ով կայացնում է վերջնական վճիռը[102]:

Դեռևս 1991 թ. մայիսին համայնքի երիտասարդությանը համախմբելու նպատակով կազմավորվեց «Հայ երիտասարդաց տուն» (ՀԵՏ) երիտասարդական միությունը: ՀԵՏ-ի գործունեությունը միտված է երիտասարդների շրջանում մշակութային, հասարակական և մարզական[103] միջոցառումների կազմակերպմանը: 1990-ական թվականների հետ համեմատած համայնքի երիտասարդության պատկերը զգալիորեն փոխվել է: Եթե նախկինում բարձրագույն ուսում ստացածները փոքր թիվ էին կազմում, մինչդեռ ներկայումս զգալի թիվ են կազմում համալսարանական կրթություն ստացածները և ստացողները: Վերջիններս կարևոր ռեսուրս են պատանիների և երիտասարդների ազգային կյանքը կազմակերպելու համար: ՀԵՏ-ի գործունեությունը միտված է ազգային կյանքի մեջ երիտասարդների ներգրավմանը և նրանց ուժերով տարաբնույթ միջոցառումների կազմակերպմանը: Նշենք նաև, որ ՀԵՏ-ը ԱՄԷ-ի միակ հայկական երիտասարդական միությունն է:

Համացանցի և Կայքէջի հանձնաժողովի պարտականությունների մեջ է մտնում համայնքում գործող www.EmaHay.com

[102] Յանձնախումբեր
http://www.emahay.com/am/index.php/community/committees:

[103] ԱՄԷ-ի հայ համայնքի մարզական կյանքի մասին մանրամասն տես՝ Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց, էջ 114-122:

կայքի հիմնումն ու նրա զարգացումը, որը միտված է համայնքի վերաբերյալ տարաբնույթ տեղեկատվության տարածմանը, ինչպես նաև համայնքի անդամների համար մասնագիտական տեղեկատվության տրամադրմանը:

Մշակութային–գեղարվեստական հանձնախումբն իր գործունեության առաջին իսկ օրերից նպատակադարվել է նպաստել համայնքում հայ մշակույթի պահպանմանն ու տարածմանը: Հանձնաժողովի ջանքերով համայնքում ձևավորվել են պարախումբ, երգչախումբ, գեղարվեստական տարբեր խմբեր և այլն: Մշակութային-գեղարվեստական հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակը համայնքում շնորհալիների հայտնաբերումն է, ապա այդ ուժերով մշակութային ձեռնարկների կազմակերպումը, որոնք միշտ էլ համարվում են սպասված իրադարձություններ: Հանձնաժողովը քաջալերում և աջակցություն է ցույց տալիս համայնքի շնորհալի երիտասարդներին, օգնում է նրանց ստանալ երաժշտական կրթություն և այլն:

Տիկնանց հանձնախումբը 1980-ական թվականներից ակտիվ գործունեություն է ծավալում՝ նեցուկ լինելով Ազգային վարչությանը: Տիկնանց հանձնաժողովն իր միջոցառումներով ու աշխույժ գործունեությամբ գունավորում է համայնքի առօրյան: Նրանց գործունեությունը միշտ էլ գնահատված է համայնքում:

2011 թ. հունիսի 21–ին հաստատվեց 2011-2013 թթ. **Կայքէջի և տեղեկատվության հանձնաժողովի** կազմը: Հանձնաժողովի վարչական ներկայացուցիչ նշանակվեց Արփի Թութունճյանը: 2011 թ. հունիսի 21-ի որոշմամբ հաստատվեց 2011-2013թթ. **Գեղարվեստական հանձնաժողովի** կազմը, որի վարչական ներկայացուցիչ նշանակվեց Վարդուկ Գարակուլլեյանը: Ամրագրվեց 2011-2013 թթ. Օհաննեսյան հայկական վարժարանի հոգաբարձուների խորհրդի կազմը /վարչական ներկայացուցիչ նշանակեց Հակոբ Ճուքճուքյանը/: Բացի այդ, հաստատվեց նաև 2011-2013 թթ. **Դատաստանական խորհրդի** կազմը: 2011 թ. հուլիսի 18-ի որոշման համաձայն՝ 2011-2013 թթ. ժամանակաշրջանի համար ընտրվեց **Երիտասարդաց հանձնախմբի** կազմը: Վարչական ներկայացուցիչ ընտրվեց Խաժակ Հովսեփյանը:

Բավական ակտիվ է նաև Աբու Դաբիի ազգային վարչությունը: Վարչության գործունեության թիրախ են դիտարկվել ազգային, հոգևոր, սոցիալական, կրթական ու մշակութային մարզերը, որոնք կարգավորվում են համապատասխան հանձնաժողովների կողմից, ինչպես, օրինակ՝ Երիտասարդաց, Տիկնանց, Կրթական, Մշակութային, Թաղական խորհուրդ և այլն:

Աբու Դաբիի ազգային վարչության ատենապետի՝ Վարդգես Արզումանյանի կարծիքով՝ ազգային իմաստով համայնքի առաջ ծառացած հիմնական մարտահրավերը հայապահպանության հարցն է, որի ուղղությամբ համայնքում աշխատանքներ են տարվում, կազմակերպվում են դասախոսություններ, նշվում են Սուրբ ծնունդը, Վարդանանցը, Զատիկը, Ապրիլի 24-ը, Մայիսի 28-ը, Սեպտեմբերի 21-ը և այլն[104]:

Այսպիսով՝ ԱՄԷ-ի հայկական համայնքն ունի հետևյալ ազգային կառույցները՝ եկեղեցի Շարժայում, երկու մեկօրյա դպրոց, ազգային վարչություններին կից գործող տարաբնույթ հանձնախմբեր, Սփյուռքի ազգային ավանդական կազմակերպությունների մասնաճյուղեր, որոնց օգնությամբ կազմակերպվում է համայնքի ազգային կյանքը: ԱՄԷ-ի հայկական համայնքում գործում են հետևյալ կազմակերպությունները՝ Դուբայի և Հյուսիսային էմիրությունների Թաղական խորհուրդ, Աբու Դաբիի Թաղական խորհուրդ, Դուբայի և Հյուսիսային էմիրությունների Ազգային վարչություն, Աբու Դաբիի Ազգային վարչություն, Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու խորհուրդ, Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբ, Աբու Դաբիի եկեղեցական երգչախումբ, Աբու Դաբիի եկեղեցու կառուցման հանձնախումբ, Շարժայի Օհաննեսյան մեկօրյա վարժարան, Օհաննեսյան վարժարանի հոգաբարձուների խորհուրդ, Աբու Դաբիի հայկական վարժարան, Հ.Ը.Բ.Մ. ԱՄԷ-ի ներկայացուցչություն, Հայ օգնության միություն /Շարժա-Դուբայ/, ԱՄԷ-ի Համազգային «Մուշեղ իշխան» մասնաճյուղ, «Ազատհայ» տեղեկատվական վերլուծական կայքէջը և այլն:

[104] Լուսարձակ՝ Ապու Դապիի հայութեան իրավիճակին, Ազդակ, 2012, հունիսի 25:

ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Աբու Դաբիում և Շարժա-Դուբայում գործում են մեկօրյա կրթական վարժարաններ, որոնք հիմնադրվել են 1980-ականներին, ինչպես նաև կրոնական մեկօրյա դպրոցներ: Աբու Դաբիում գործում է նաև «Սահակ-Մեսրոպ» կիրակնօրյա վարժարանը: Դուբայի և Հյուսիսային էմիրությունների ազգային վարչության առաջին նախաձեռնություններից մեկը կապված էր հայկական մեկօրյա վարժարանի հիմնման հետ, որ սկսեց գործել 1980 թ.: Շուրջ 18 տարի վարժարանը վարձակալում էր տարբեր տարածքներ և միայն 1998 թ. եկեղեցու կառուցումից հետո ունեցավ իր սեփական շենքը և հենց նույն թվականից էլ վերանվանվեց Օհաննեսյան հայկական վարժարանի՝ ի երախտագիտություն համայնքի բարերար Հարութ Օհաննեսյանի[105]:

Վարժարանի գործունեությունը մեծապես նպաստել և նպաստում է համայնքի հայ երեխաների ազգային գիտակցության ամրապնդմանը և հայկական մշակույթի զարգացմանը: Վարժարանում դասավանդվում է հայոց լեզու, հայոց պատմություն, մշակույթ, երգ-երաժշտություն, կրոն և այլն: Վարժարանը, ինչպես Սփյուռքի ցանկացած կրթական հաստատություն, ունի մանկապարտեզ իր երեք դասարաններով (Բողբոջ, Կոկոն և Ծաղիկ), որն ավարտելուց հետո երեխաները ստանում են համապատասխան վկայական, իսկ այնուհետև՝ նախակրթարան, որ ապահովում է երեխայի վեցամյա կրթությունը և ի վերջո միջնակարգը, որի շրջանակներում կազմակերպվող երեք տարվա վերջին բաժնում փորձ է արվում ամբողջացնել հայ աշակերտների գիտելիքները: Վարժարանի տնօրինությունն ու ուսուցչական կազմը գործում են կամավոր սկզբունքով՝[106] հանուն համայնքի հայ երեխաների հայեցի դաստիարակության:

[105] Օհաննէսեան Հայկական Վարժարան http://www.emahay.com/am/index.php/school/ohannesian-school:
[106] Նույն տեղում:

Օհաննեսյան վարժարանի կազմավորման սկզբնական փուլում՝ առաջին երկու տարիներին (1980-1982 թթ.) այն գտնվել է Ազգային վարչության անմիջական հսկողության ներքո, սակայն 1982-ից վարժարանի հոգաբարձուների խորհուրդն իր վրա է վերցրել կրթական օջախի աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը, չնայած այն ի սկզբանե ողջ համայնքի հոգածության առարկան է: Օհաննեսյան վարժարանի հոգաբարձուների խորհուրդը զգալի ջանքեր է գործադրել դպրոցի կայացման ուղղությամբ, պատասխանատու է ինչպես ուսումնական ծրագրերի, աշակերտներին գրենական պիտույքներով ապահովելու, արտադասարանական գործունեության, այնպես էլ աշակերտների համար սննդի ընտրության, դասացուցակի կազմման և մի շարք այլ հարցերի համար[107]: Հոգաբարձուների խորհուրդը համոզված է, որ վարժարանը համայնքում հայկական ինքնության պահպանմանը նպաստող հիմնական հաստատությունն է[108]:

Օհաննեսյան դպրոցում աշակերտների երկու դասարանների համար 2010թ. հունիսի 28-ին պաշտոնապես իր ուսումնական գործընթացը սկսեց Հայկական վիրտուալ վարժարանը (Հ.Վ.Վ.)՝ Armenian Virtual Colledge: Դասընթացը, որ դասավանդվում է արևմտահայերենով և անգլերենով, նպատակ ունի աշակերտներին ծանոթացնել հայոց պատմությանը[109]: Նշենք, որ դեռևս 2009 թ. հոկտեմբերին Հ.Վ.Վ.-ն սկսել էր հայոց պատմության իր առաջին դասը: Առցանց ուսուցումը նախատեսում էր շաբաթը մեկ անգամ դասախոսության անցկացում Շարժայի Օհաննեսյան դպրոցում, որի ընթացքում կապ էր հաստատվում Երևանից դասախոսի հետ, իսկ շաբաթվա ընթացքում նամակների, առցանց քննարկումների վիդեո և աուդիո նյութերի դիտարկմամբ դասընթացն ամրապնդվում էր: Հ.Վ.Վ.-ն իր գործունեությունն իրականացնում է Հ.Բ.Ը.Մ. հովանավորությամբ: Այն նախատեսված է նաև օտարախոս հայերի համար: Ծրագրի իրականացումը ևս մեկ քայլ է՝ ուղղված հայկական ինքնության պահպանմանը[110]:

[107]Օհաննէսեան հայկական վարժարան, http://www.emahay.com/am/index.php/school/ohannesian-school:
[108] Նույն տեղում:
[109]AGBU Armenian Virtual College breaks ground in UAE school, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=621asgh41:

***

Շարժայի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործում է կիրակնօրյա վարժարան, որը հիմնադրվել է 2001 թ. սեպտեմբերի 28-ին: Մեկուկես ժամ տևողությամբ դասընթացներն ընթանում են 4 դասարաններում՝ սկսնակ, կրտսեր, միջին և պատանի՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկության՝ վարժարանների համար նախատեսված ուսումնական ծրագրերի շրջանակներում[111]: Վարժարանում ուսուցանվում են գրաբար, կրոնական, ծիսական և բարոյագիտական գիտելիքներ, աղոթքներ, սաղմոսներ: Վարժարանի ծրագրի մաս են կազմում տարեկան կրթադաստիարակչական ձեռնարկները, ձեռքի աշխատանքը, թատրոնը, ուսանելի խաղերը և այլն: Վարժարանի ուսուցչական կազմն իր մասնակցությունն է բերում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Արաբական Միացյալ էմիրություններում Ս. Գրային ընկերակցության կազմակերպած համագումարներին և հանդիպումներին:

Վարժարանի սաները 3-16 տարեկան հայ մանուկներ ու պատանիներ են: 2001-2007 թթ. դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ և 55 աշակերտ, 2007-2008 թթ.՝ 1 ուսուցչուհի և 55 աշակերտ, 2008-2010 թթ.՝ 3 ուսուցչուհի և 52 աշակերտ, 2010-2011 թթ.՝ 5 ուսուցչուհի և 75 աշակերտ, 2011-2012 թթ.՝ տնօրեն, 6 ուսուցչուհի և 83 աշակերտ: 2010-2011 թվականներից վարժարանն ունեցավ նոր դասարան, որը նախատեսված է 12-16 տարեկան պատանիների համար[112]: Նշենք, որ եկեղեցու քահանան պարբերաբար վարժարանի գործունեության մասին զեկուցում է թեմի կաթողիկոսական փոխանորդին: Վերջինս էլ նախագահում է վարժարանի հանդիսությունները և պարբերաբար դասախոսություններ է կարդում վարժարանի աշակերտության համար:

[110] Նույն տեղում:
[111] Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարան http://www.emahay.com/am/index.php/church/sunday-school:
[112] Նույն տեղում:

***

Ուշադրության է արժանի նաև 30-ից ավելի տարիների պատմություն ունեցող Աբու Դաբիի մեկօրյա վարժարանը, որը գործել է տեղական մի շարք դպրոցներում, այդ թվում նաև Սուրբ Հովսեփ կաթոլիկ եկեղեցուն պատկանող հաստատության մեջ: Մոտ 30 տարի վարժարանը ղեկավարել է սփյուռքահայ մտավորական Թամար Թոփչյան Տեր-Օհաննեսյանը: 2009-2010 թթ. մեկօրյա վարժարանի ուսուցչական կազմը հետևյալն էր. տնօրեն՝ Բագրատ Պալապանյան, Բողբոջ և Կոկոն դասարանների ուսուցիչներ՝ Անի Արսլանյան, նախապատրաստական դասարան՝ Արինե Շահմիրզայան, երկրորդ դասարան՝ Սիրուն Գոճաքյան, երրորդ դասարան՝ Սևան Փաթանյան, չորրորդ դասարան՝ Ժանին Գունճյան, հինգերորդ դասարան՝ Մարալ Պալապանյան, Ծիածան դասարան՝ Սեդա Միսքիճյան, մշակութային աշխատանքների և միջոցառումների պատասխանատուներ՝ Մարալ Ալեքսանյան, Սվետլանա Պատալյան[113]:

Նշենք, որ Աբու Դաբիի ազգային մեկօրյա վարժարանը համայնքային կյանքի առանցքն է: Դպրոցն ունի մանկապարտեզի բաժին՝ ավանդական Բողբոջ, Կոկոն և Ծաղիկ խմբերով, ուր համապատասխանաբար ընդգրկված են 3-4, 4-5 և 5-6 տարեկան երեխաները: Վերջիններս մանկապարտեզն ավարտելուց հետո ստանում են վկայական: Իսկ արդեն վարժարանն ավարտելուց հետո նրանց հանձնվում է վկայագիր: Փաստորեն, վարժարան են հաճախում 3-14 տարեկան հայ երեխաներ և պատանիներ, այսինքն՝ վարժարանն ապահովում է 8-ամյա կրթություն: Ուսուցչական կազմի, տնօրինության կամավոր աշխատանքի և ծնողների համագործակցության շնորհիվ՝ դպրոցն ապրում է եռանդուն կյանքով: Այստեղ դասարաններ կան նաև ոչ հայախոս երեխաների համար: Յուրաքանչյուր դասարան ունի իր դաստիարակ ուսուցչուհին: Սակայն բարձր դասարաններում կրոնի և երգի ուսուցումը դասավանդում է համայնքի հոգևոր

[113] Ապու Տաբիի հայկական միօրեայ վարժարանի 2009-2010 տարեշրջանի վերամուտ, http://www.azad-hye.net/article/article-view.asp?re=806hff50:

հովիվ, Արժանապատիվ Տեր Արամ քահանա Տեյիրմենճյանը[114]:

Վարժարանի գործունեությանն էականորեն աջակցում է Աբու Դաբիի ազգային վարչությունը[115]: Վարժարանն իր ուսումնական տարին սովորաբար սկսում է սեպտեմբերի կեսերին: Որպես կանոն, ունեցել է մոտավորապես 30-50 աշակերտ: Ուսումնական տարվա ընթացքում այստեղ նշվում են Վարդանանց տոնը, Ապրիլի 24-ը, Մեծ և Փոքր Զատիկները և այլն: 2003-ից ի վեր շատ հետաքրքիր են անցնում Նոր տարվա (Կաղանդի) միջոցառումները: Ծննդյան Ճրագալույցի երեկոյան բարձրագուն դասարանի աշակերտները նախորդ տարվա շրջանավարտների ընկերակցությամբ՝ վառված մոմերով և շարականներով այցելում են դպրոց, ինչպես նաև տներ[116]: Շատ հաճախ ավարտական դասարանի աշակերտները թատերական և այլ կարգի միջոցառումներ են կազմակերպում, մրցում Օհաննեսյան վարժարանի աշակերտների հետ: Օրինակ 2004-ին վարժարանի ութերորդ դասարանը՝ նախորդ տարվա շրջանավարտների հետ միասին, Աբու Դաբիի անգլիական ակումբում ներկայացրեց «Անի» երաժշտական թատերգությունը[117]:

Դպրոցի կազմակերպած միջոցառումները, ինչպես համարում են նրա պատասխանատուները, նպատակ ունի հայ երեխաների մեջ արթնացնել սեր հայ գրի, հայոց մշակույթի և Հայրենիքի նկատմամբ:

Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմի ջանքերով՝ 2006 թ. մարտի 13–ին դպրոցը հանդիսավոր կերպով տոնեց իր 25-րդ տարեդարձը, որին մասնակցեցին դպրոցի շրջանավարներ, ուսուցիչներ, ծնողներ, նաև ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը, ԱՄԷ-ի հայ համայնքի ներկայա-

[114] Դպրոցական տարեմուտի առիթով տեսակցութիւն Ապու Տաբիի Ազգային միօրեայ վարժարանի տնօրէնուհի տիկին Թամար Տէր-Հովհաննէսեանին հետ, Շեփոր, ամբողջական համարներ, 2000-2002 թթ.:

[115] Ապու Տաբիի ազգային միօրեայ վարժարանը, http://www.azad-hye.com/adschool/armenianball.htm

[116] Նույն տեղում:

[117] Նույն տեղում:

ցուցիչներ: Բացման խոսք ասաց դպրոցի տնօրեն Թամար Տեր-Օհաննեսյանը[118]: Հատուկ այդ առիթով Քուվեյթից ժամանած կաթողիկոսական փոխանորդ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրինությանն ու ուսուցչական կազմին համայնքի երիտասարդների շրջանում հայապահպանության և հայկական ինքնության պահպանման ուղղությամբ գործադրած ջանքերի համար[119]:

Թամար Տեր-Օհաննեսյանից հետո Աբու Դաբիի հայկական մեկօրյա վարժարանի տնօրեն եղել է Կյուլիզար Ջոնյանը, իսկ ներկայումս Բագրատ Պալապանյանն է:

Աբու Դաբիում գործող Սուրբ Սահակ-Մեսրոպ կիրակնօրյա դպրոցի պատասխանատուն Սիրուն Գոճաքյանն է: Կիրակնօրյա դպրոցի դասընթացներին մասնակցելու համար 2012-ին արձանագրվել է ութ աշակերտ: Պատասխանատուները հույս ունեն, որ աշակերտների թիվը կավելանա[120]: Դասավանդումն այստեղ նույնպես իրականացվում է կամավոր սկզբունքով:

Ինչպես արդեն նշել ենք, ԱՄԷ-ում հայ երեխաների ճնշող մեծամասնությունը հաճախում են ամենօրյա վճարովի դպրոցներ: Նշենք, որ ԱՄԷ-ում կրթության լեզուն անգլերենն է: Եվ որքան էլ երեխաները տանը կամ հայկական միջավայրում հայերեն խոսեն, նրանք, միևնույն է, ավելի շատ անգլիախոս են: Այս պարագայում մեկօրյա հայկական վարժարանները որոշակի հնարավորություն են ընձեռում սովորել հայերեն, հայոց պատմություն, կրոն և երգ:

[118]UAE Armenians, 25th Anniversary Celebration in Abu Dhabi, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=630azd11:
[119]Նույն տեղում:
[120]Նույն տեղում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԱՄԷ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հարկ է փաստել, որ ԱՄԷ-ում հայկական ազգային վարչություններն իրենց հիմնադրումից ի վեր Շարժայի, Դուբայի և Աբու Դաբիի թատերասրահների և հյուրանոցների հանդիսասրահներում, իսկ 1998-ից՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից հայկական կենտրոնում կազմակերպել են բազմաթիվ մշակութային միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, թատրոններ, ազգային տոնին նվիրված համերգներ և այլն: Օրինակ, Շարժայում Սուրբ Միքայել կաթոլիկ եկեղեցում և Քեոսեյան սրահում կազմակերպված միջոցառումներից բացի՝ մնացած բոլոր միջոցառումների համար համայնքը Շարժայի քաղաքապետարանից, մշակույթի նախարարությունից, անվտանգության մարմնից և ոստիկանությունից ձեռք է բերել թույլտվություն:

ԱՄԷ-ի հայ համայնքի հետազոտող Շողեր Աշըգյանը մասնավորապես Շարժա-Դուբայի հայ համայնքի մշակութային կյանքը բաժանում է երկու շրջանի՝ 1980-1998 և 1998-ից մինչ օրս[121]: Առաջին շրջանի Ազգային վարչությունը տարին հազիվ մեկ-երկու մշակութային միջոցառում է կազմակերպել: 1982-1992 թթ. տեղի է ունեցել մշակութային բնույթի ընդամենը յոթ միջոցառում (երեք թատրոն, երկու դասախոսություն, ազգային երգերի երեկո և մեկ երաժշտական համերգ): Հայաստանից որևէ խումբ չի հրավիրվել: Ազգային վարչության նշանակած առաջին գեղարվեստական հանձնախմբի անդամներն են եղել Հրայր Սողոմոնյանը, Հակոբ Գույումճյանը, Զարեհ Թութունճյանը, Ալին Բարսեղյանը և Ռաֆֆի Սիվլահյանը[122]:

1981 թ. մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ և Հրայր Սողոմոնյանի գլխավորությամբ՝ Շարժա-Դուբայում հիմնադրվել է հայկական թատրոն՝ «Թատրոն 81» անունով: Արաբական Միացյալ Էմիրություններում հայկական առաջին թատրոնը բեմադրվել է նույն թվականի դեկտեմբերի 17-ին:

[121] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց մէջ, էջ 122:
[122] Նույն տեղում:

Թատրոնի ստեղծումը զգալի դեր է ունեցել հայապահպանության և երիտասարդների մեջ ազգային գաղափարի շուրջ համախմբվածություն ստեղծելու հարցում: Թատրոնն ավելի քան քսան տարիների ընթացքում թե՛ Աբու Դաբիում և թե՛ Շարժա-Դուբայում բեմականացրել է Հակոբ Պարոնյանի, Գրիգոր Զոհրապի, Երվանդ Օտյանի, Մուշեղ Իշխանի և այլոց ստեղծագործությունները[123]:

1990-ականներից համայնքի թվաքանակի աճի, հայկական կենտրոնի ստեղծման և Հայաստանի Հանրապետության հետ կապերի սերտացման շնորհիվ՝ համայնքի մշակութային կյանքն աշխուժացավ: 1990 թ. հունվարին Աբու Դաբիի և Հյուսիսային էմիրությունների ազգային վարչություններն իրենց համատեղ հանդիպման ժամանակ որոշեցին Հայաստանից հրավիրել այնպիսի արվեստագետների, որոնք «օտար հանդիսատեսներուն ալ գոհացում կրնան տալ»[124]: Արդյունքում մշակութային կյանքը նոր հունի մեջ մտավ, իսկ օտարներն առիթ ունեցան ծանոթանալու հայկական մշակույթին:

Համայնքի նորագույն շրջանի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում **Հայկական մշակութային ընկերակցությունը**, որը գործել է 1990-2010 թթ. մի խումբ նվիրյալների ջանքերով ազգային վարչությունների շրջանակից դուրս: Կառույցի հիմնադիրները մի խումբ երիտասարդներ էին, որոնք 1989-ից մինչև 2009 թ. երկարաձգվող քսանամյա գործունեությամբ էմիրությունների մշակութասեր հասարակությանը մատուցեցին բազմաթիվ միջոցառումներ՝ փաստացիորեն դառնալով հայության անպաշտոն պատվիրակները բազմազգ հասարակության մեջ: Ընկերակցության հիմնադիրներն են Վաչե Գասեմճյանը, Վարդան Ինկիլիզյանը, Թաղիկ Մանկասարյանը, Արամ Սեփեթճյանը, Անդրանիկ Տաղլյանը: Ընկերակցությունն ունեցել է կենտրոնական և գործադիր մարմիններ: Վերջինս անմիջականորեն ստանձնել է ձեռնարկների իրականացումը: Ընկերակցությունը ծանրակշիռ ներդրում է ունեցել ԱՄԷ-ում հայկական մշակույթը զարգացնելու և այն օտարներին ծանոթացնելու գործում:

[123] Մանրամասն տես՝ նույն տեղում, էջ 124-127:
[124] Նույն տեղում, էջ 123:

Կառույցի շրջանակներում Հայաստանից հրավիրվել են արվեստի և մշակույթի բնագավառի հարյուրավոր մարդիկ[125]: Ընկերակցությունը լայնածավալ բարեսիրական գործունեություն է ծավալել, օժանդակել 1988-ին Հայաստանի երկրաշարժից տուժած բազմաթիվ ընտանիքների, հովանավորել Հայաստանում արվեստի բնագավառը: Կառույցի մասին Հրաչ Քալսահակյանը գրում է. «Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը դարձաւ հայ իրականութեան մէջ գործող եզակի միաւոր մը, որ իր գործունէութեամբ, աշխատանքի ոճով եւ նախադրեալներով, յաջողեցաւ հայ մշակութային պատուհան հանդիսանալ էմիրութիւններու բազմազգ եւ բազմերանգ միջավայրին վրայ»[126]:

1992 թ. մի խումբ պատանիների նախաձեռնությամբ՝ հրատարկվել է «Դէպի երկիր» պատանեկան պարբերաթերթի երեք համար, որը հայատառ առաջին մամուլն է ԱՄԷ-ում: Թերի նյութերն ամբողջությամբ վերաբերում են արցախյան ազատագրական պայքարին: Դրանում տեղ է գտել պատերազմի ժամանակագրությունը՝ 1988 թ. փետրվարից մինչև 1992 թ. հոկտեմբեր, ազատամարտիկների նկարներ և այլն: Խմբագրական կազմում եղել են 13-16 տարեկան պատանիներ[127]:

Դուբայի և Հյուսիսային էմիրությունների ազգային վարչությունների տեղեկատու համարվող «Շեփորն» առաջին անգամ լույս է տեսել 1999 թ. հոկտեմբերի 26-ին Կարո Միսիրլյանի ջանքերով՝ 28 էջով: Երկու օր անց՝ հոկտեմբերի 28-ին, լույս է տեսել երկրորդ համարը՝ 20 էջով: Երկու համարներն էլ հիմնականում Հայաստանի մասին են: «Շեփորի» արդեն հաջորդ համարները սկսել են լույս տեսնել ազգային վարչությունների ջանքերով 8, 12, 16, 20 էջերով, հիմնականում նկարազարդ: Սակայն մարդկային ներուժի պակասի պատճառով՝ «Շեփորի» հրատարկությունը դադարեցվել է: 2005 թ. լույս է տեսել վերջին համարը երկլեզու (հայե-

[125] Հարցազրույց «Ազատ-հայ» կայքի հիմնադիր-տնօրեն Հրաչ Քալսահակյանի հետ, norkhosq.net on September 2nd, 2012:
[126] Հայկական մշակութային ընկերակցության մասին նյութերը քաղված են Հ.Քալսահակյանի՝ նշված կառույցի մասին անտիպ նյութերից:
[127] Քառորդ դար հայերը Տուպայի եւ Հիւսիսային էմիրութեանց, էջ 128:

րեն և անգլերեն)՝ գունավոր և բարձրորակ տպագրությամբ, որի բովանդակության զգալի մասը վերաբերել է համայնքի ազգային կյանքին: «Շեփորում» տեղ են գտել նաև հարցազրույցներ, պաշտոնական հաղորդագրություններ, մանկական, կանանց և ժամանցի էջեր[128]:

Նշենք, որ Շարժայի հայկական կենտրոնում գործում է Շաքէ Քիւրտօղլեան գրադարանը, որը հիմնել են 1999 թ. տեր և տիկին Քյուրտողլյանները: Գրադարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 2001 թ. հոկտեմբերի 12-ին: Գրահավաքին օժանդակել են տարբեր հաստատություններ ու շրջանակներ: Գրադարանը ներկայումս ունի 2711 գիրք[129]:

Արաբական Միացյալ էմիրությունների հայ համայնքի վերջին շրջանի կարևոր քայլերից էր 2010 թ. դեկտեմբերի 23-ին Շարժա-Դուբայում Հայ օգնության միության (Հ.Օ.Մ.) մասնաճյուղի հիմնումը[130]: Մասնաճյուղի ներկայիս ատենապետն է Սալբի Աբելյանը: ԱՄԷ-ում Հ.Օ.Մ.-ի հիմնադրմանն անդրադառնալով՝ տեղական «Նշանակ» կայքէջի խմբագիր և համայնքի հայտնի անդամներից մեկը՝ Նշան Պասմաճյանը, գրում է. «Հ.Օ.Մ.-ի արմատները խորունկ են, առաքելութիւնը չափազանց մեծ, իսկ առաքելութեան գործնականացումը՝ ոչ շատ դիւրին»: Այնուհետև շնորհավորում է էմիրությունների հայ համայնքին, որ կարողացավ ունենալ «գիտակից ու կազմակերպ գաղութին վայել լուրջ կազմակերպություն»[131]:

Համայնքի մշակութային կյանքը պատշաճ կազմակերպելու տեսնակյունից կարևոր նշանակություն ունի նաև 2011 թ. ապրիլի 16-ին Շարժայում Համազգայինի «Մուշեղ իշխան» մասնաճյուղի ստեղծումը[132]: Կառույցի հիմնադիր ժողովը, որը տեղի ունեցավ Շարժայի «Փիեռ Քէօսէէան» սրահում, նախագահեց Համազգայինի կենտրոնական վարչության անդամ Մարտիկ Տեմիրճյանը[133]: Բացման խոսքում վարչության նորանշանակ ատենապետ Նշան Պասմաճյանը նշեց, որ Համազգայինը պետք է փորձի հայ երիտասարդության համար և նրա գործուն մասնակցությամբ մշակութային և կրթական համակարգ ստեղծել էմիրությունների պես զարգացող համայնքում: Եվ, որ ամենակարևորն է, Համազգայինը պետք է համագործակցի գոյություն ունեցող հայկական բոլոր միությունների և կազմակերպությունների հետ, պետք է լինի ազգային իշխանությունների կողքին[134]:

Նշենք, որ ԱՄԷ-ում Հրաչ Քալսահակյանի ջանքերով 2003-ից գործում է «Ազատ-հայ» անունը կրող հայկական կայքէջը, որը զգալի դեր է խաղում թե՛ ԱՄԷ-ի և Ծոցի արաբական երկրների, և թե՛ հայկական Սփյուռքի կյանքը տարբեր կողմերից լուսաբանելու առումով: Կայքում տեղ են գտնում նաև արաբական աշխարհում հայության մասին արձագանքները, Հայաստանին առնչվող նյութեր: Կայքի գլխավոր էջն անգլերեն է, ինչը հնարավորություն է տալիս օտարներին, այդ թվում՝ հյուրընկալող հասարակության անդամներին, ծանոթանալ հայկական իրողություններին[135]: Նշենք, որ «Ազատ-հայն» իր բնույթով անկողմնակալ է, չի պատկանում որևէ կուսակցության և իր գործունեությամբ ի ցույց է դրել, որ ԱՄԷ-ում հայկական աշխույժ գործունեություն կա:

2009 թ. ապրիլի 29-ին Նշան Պասմաճյանի ջանքերով բացվել է «Նշանակ»[136] անունը կրող կայքէջը, որը հայալե-

[128] Նույն տեղում, էջ 128-130:
[129] Նույն տեղում, էջ 130-131:
[130] New ARS Dubai-Sharjah Region Established in UAE, http://www.armenianweekly.com/2011/01/05/new-ars-dubai-sharjah-region-established-in-uae/:
[131] Ողջոյն Հայ օգնութեան միութեան ծննդեան՝ Արաբական Միացեալ էմիրութեանց մէջ http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=708adhz11:
[132] Արաբական Միացեալ էմիրութեանց մէջ հիմնուեցաւ Համազգայինի «Մուշեղ իշխան» մասնաճիւղը, http://www.aztagdaily.com/archives/9986:

[133] Մ. Տեյիրմենճյանը մեկ տարվա համար նշանակեց մասնաճյուղի առաջին վարչությունը՝ հանձինս Նշան Պասմաճյանի, Սեդա Պալիոզյանի, Սյուզի Քարաճյանի, Խաչիկ Սեպեյանի և Սիմոն Մանուկյանի:
[134] Արաբական Միացեալ էմիրութեանց մէջ հիմնուեցաւ Համազգայինի «Մուշեղ իշխան» մասնաճիւղը, http://www.aztagdaily.com/archives/9986:
[135] «Ազատ-հայի» մասին մանրամասն տես՝ Հարցազրույց Միջին Արևելքի «Ազատ-հայ» կայքէջի պատասխանատու Հրաչ Քալսահակյանի հետ, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2236:
[136] Տե՛ս http://www.nshanag.net:

զու է և ներառում է հայ գրականությանը, լեզվին, մշակույթին, արվեստին և այլ թեմաներին նվիրված նյութեր[137]:

***

Նշենք, որ ԱՄԷ-ի հայ համայնքը սերտորեն համագործակցում է այդ երկրում գտնվող ՀՀ դեսպանության հետ: Համայնքի ներկայացուցիչները, որպես կանոն, աջակցում են ԱՄԷ-ում ՀՀ դեսպանությանը, որն էլ, իր հերթին, առանց համայնքի ներքին գործերին միջամտելու, համագործակցում է համայնքի տարբեր շրջանակների հետ, փորձում օժանդակել ազգապահպանության գործընթացին: ԱՄԷ-ում հավատարմագրված ՀՀ դեսպանները, որպես կանոն, հանդիպում են համայնքի աշխարհիկ և կրոնական հաստատությունների ներկայացուցիչների հետ: Համայնքի և ՀՀ դեսպանության համագործակցությունը մշտապես գտնվում է կաթողիկոսական փոխանորդների ուշադրության կենտրոնում: Վերջիններս պարբերաբար հանդիպում են ՀՀ դեսպանին՝ քննարկելու համայնքին վերաբերող հարցեր: Իրենց հերթին, ազգային վարչությունները նույնպես համագործակցում են դեսպանատան հետ՝ իրականացնելով համատեղ միջոցառումներ: Նշենք նաև, որ համայնքը որոշակիորեն սերտ կապեր ունի Հայաստանի հետ: ԱՄԷ-ից Հայաստան զբոսաշրջության հիմնական կորիզը հայերն են:

2000-ին ՀՀ դեսպանությունը համայնքից ստացված նվիրատվությունների միջոցով ունեցավ սեփական շենքը: Վերջինիս ճարտարապետական բոլոր ծրագրերն իրականացրել ու շինարարական աշխատանքները վերահսկել են ճարտարապետներ Պերճ Աբրահամյանն ու Սալահ Հարիրին: Շենքի կառուցման ուղղությամբ մեծ ջանքեր գործադրեցին ԱՄԷ-ի հայ գործարարները՝ հատկապես Շարժայի բանկի գործադիր տնօրեն Վարուժան Ներկիզյանը: ԱՄԷ-ում ՀՀ դեսպանատան շենքի հիմնարկեքը կատարվեց 2004-ին: Այն հանդիսավորապես բացվեց 2007 թ. սեպտեմբերի 12-ին: Արարողությանը մասնակցում էին ԱՄԷ-ում բնակվող մի քանի հարյուր հայեր, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներ, Հայաստանում ԱՄԷ-ի ոչ ռեզիդենտ դեսպան Խալիֆա Շահին Ալ-Մուրրին, ԱՄԷ-ում Հայաստանի դեսպանը, մի շարք օտարերկրյա դիվանագետներ: Դեսպանատան շենքի բացման միջոցառմանը մասնակցեցին նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը: Հնչած ելույթներում հայկական կողմը շնորհակալություն հայտնեց ԱՄԷ-ի իշխանություններին, մասնավորապես նախագահ Ալ-Նահայանին դեսպանության նոր շենքի համար տարածք հատկացնելու համար: Իր ելույթում ՀՀ դեսպան Վահագն Մելիքյանը շնորհակալություն հայտնեց նաև հայ համայնքի այն անդամներին, ովքեր տնտեսական և նյութական աջակցություն էին ցույց տվել շինարարությանը[138]: Արարողությունից հետո ՀՀ նախագահն ու ԱԳ նախարարը դեսպանության բակում հանդիպում ունեցան հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ավելի ուշ հայկական պատվիրակությունը պաշտոնական ընթրիք ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ[139]:

Հարկ է փաստել, որ ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները ԱՄԷ իրենց պաշտոնական այցելությունների ընթացքում, որպես կանոն, հանդիպումներ են ունենում հայ համայնքի

[137] http://www.nshanag.net/2009/04/blog-post_30.html, տես նաև՝ Nishan Basmajian starts a new website in UAE,
http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734llj67:

[138] Տես New Armenian Embassy-Once a dream, now reality, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=630hks11, President Kocharian visits the United Arab Emirates, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=617hjh20:

[139] 2007 թ. դեկտեմբերի 12-ին ԱՄԷ-ի նախագահ, շեյխ Խալիֆա բին Զայիդ Ալ-Նահայանն ընդունեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին և հույս հայտնեց, որ այդ այցելությունը կնպաստի երկու երկրների միջև հարաբերությունների սերտացմանը: 2007թ. դեկտեմբերի 12–ին Հայաստանն ու ԱՄԷ-ն ստորագրեցին հինգ համաձայնագիր, որոնք նախատեսում են համագործակցություն արտաքին քաղաքականության, գյուղատնտեսության, զբոսաշրջության, մշակույթի և փոխադրումների ոլորտներում: Երկու երկրների ԱԳՆ նախարարները ստորագրեցին Փոխըմբռնման հուշագիր քաղաքական խորհրդակցությունների և երկկողմ հարաբերությունների համակարգման մեխանիզմների, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային հիմնախնդիրների հարցում համատեղ մոտեցումների մշակման վերաբերյալ:

ներկայացուցիչների հետ: Հարկ է փաստել նաև, որ ԱՄԷ-ի հայ համայնքը կարևոր գործոն է ԱՄԷ-ի և Հայաստանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների զարգացման և սերտացման հարցում:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության և ԱՄԷ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1998 թ., սակայն գործերի ժամանակավոր հավատարմատարն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2000 թ.-ից: Այդ թվականին ԱՄԷ-ում գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակվեց դոկտոր Արշակ Փոլադյանը, ով իր աշխատանքները սկսեց հյուրանոցի սենյակից: 2000 թ. սեպտեմբերին դեսպանությունը պաշտոնապես բացվեց ՀՀ ԱԳՆ նախարար Վարդան Օսկանյանի մասնակցությամբ: 2004-ին Արշակ Փոլադյանի ջանքերով՝ Շարժայում կազմակերպվեց հայկական մշակույթի շաբաթ: 2006 թ. փետրվարի 12-ին ԱՄԷ-ի նախագահ, շեյխ Խալիֆա բին Զայիդ Ալ-Նահայանը ԱՄԷ-ում իր պաշտոնավարման ժամկետն ավարտող ՀՀ դեսպան Փոլադյանին պարգևատրեց Անկախության պատվոնշանով՝ բարձր գնահատելով նրա ներդրումը Հայաստան-ԱՄԷ հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ[140]: Արշակ Փոլադյանին հաջորդեց դեսպան Վահագն Մելիքյանը՝ 2006-2011 թթ., իսկ 2011-ից ԱՄԷ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը Գեղամ Ղարիբջանյանն է:

[140] Ambassador Poladian Awarded “Independence Order” http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=630jg11: Այս պատվոնշանը երրորդ բարձրագույն պարգևն է ԱՄԷ-ում, որը տրվում է օտարերկրացիներին: Նշենք, որ Աբու Դաբիում իր պաշտոնավարման ընթացքում Արշակ Փոլադյանը հրատարակել է չորս գիրք՝ «Արևելքի պատմության և մշակույթի ուսումնասիրություն» (2001), որի արաբերեն թարգմանությունն իրականացրել է Հրաչ Քալսահակյանը, «Հայ-արաբական հարաբերությունների պատմություն» (2002), «Իսլամ. կրոն և պետություն» (2003), «Քրդերի ծագման հարցն արաբական աղբյուրներում (2004)»:

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ)

1. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՆՈՍՅԱՆԻ ՀԵՏ

- Գերաշնորհ Սրբազան Հայր, կներկայանա՞ք, որտեղի՞ց եք արմատներով և ո՞ր թվականից եք նշանակվել Քուվեյթում և Ծոցի արաբական երկրներում կաթողիկոսական փոխանորդ :

- Ծնվել եմ Սիրիայում՝ Քեսաբում: Նախնական ուսումս ստացել եմ տեղի Ուսումնասիրաց միացյալ վարժարանում, իսկ այնուհետև՝ 1971–1972 թթ., ընդունվել եմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքը: 1978 թ. ավարտել եմ այն և 1980 թ. ձեռնադրվել եմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբանության կուսակրոն եկեղեցական:

Շուրջ 20 տարի պաշտոնավարել եմ Հունաստանի, ԱՄՆ-ի և Կանադայի տարբեր շրջաններում: 2006-2011 թթ. վարել եմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքի տնօրինությունը:

Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետի որոշմամբ՝ 2011 թ. փետրվարին նշանակվել եմ Քուվեյթի և Արաբական Ծոցի երկրների թեմի Կաթողիկոսական փոխանորդ, սակայն դպրեվանքում ունեցած պարտավորությունների պատճառով՝ Քուվեյթ տեղափոխվեցի 2010–2011 թթ. կրթական տարվա ավարտից հետո՝ 2011 թ. օգոստոսին:

- Ե՞րբ է կազմավորվել Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմը, որը ենթակա է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը:

- Տվյալների համաձայն՝ 1960-ական թվականներին արդեն իսկ Քուվեյթում կային զգալի թվով հայեր: 1962 թ. ընդառաջելով համայնքի խնդրանքներին՝ առաջին անգամ Մեծի

Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը Քուվեյթ ուղարկեց Տ. Պարույր քահանա Սարգսյանին, ով պետք է ստանձներ համայնքի եկեղեցական, ազգային և կրթական կյանքի կազմակերպումը:

1981 թ., դարձյալ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության որոշմամբ՝ որպես կաթողիկոսական փոխանորդ՝ Քուվեյթ ժամանեց Հոգեշնորհ Տեր Օշական վարդապետ Չոլոյանը, ով, Քուվեյթի հետ մեկտեղ, ստանձնեց Արաբական Ծոցի այլ երկրներում հետզհետե ձևավորվող հայ համայնքների կազմակերպման կարևոր աշխատանքները:

1992 թ. Հալեպում գումարված Ազգային ընդհանուր ժողովն Արաբական Ծոցի շրջանը հռչակեց առանձին թեմ՝ Քուվեյթի և Արաբական Ծոցի թեմ անվամբ:

- Որպես Քուվեյթում և Ծոցի արաբական երկրներում կաթողիկոսական փոխանորդ՝ ինչպե՞ս կբնութագրեք Քուվեյթի հայ համայնքին, որն ունի շուրջ 50 տարվա պատմություն: Կարո՞ղ եք ամփոփ ներկայացնել համայնքի պատմությունը:

- Կարող եմ փաստել, որ Քուվեյթի մեր համայնքն իր նկարագրով հայադրոշմ է և ավանդապահ: Հակառակ համայնքի համեստ թվաքանակին՝ Քուվեյթում գործում են հայաշատ այլ գաղութներում գործող բոլոր եկեղեցական և ազգային կառույցները: Սա բնական երևույթ է, որովհետև Քուվեյթում հաստատված հայերը եկել են Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններից և իրենց հետ բերել են սփյուռքահայության այն փորձառությունը, որով հայությունն իր հավաքական կյանքն է ապրում և ինքնաարտահայտվում տվյալ աշխարհագրական միջավայրում:

- Ինչպիսի՞ն է համայնքի ներկայիս վիճակը:

- Բոլոր առումներով մինչև 1990 թ. Քուվեյթի հայ համայնքն ապրել է ծաղկուն վերելքի շրջան: 1990 թ. Քուվեյթի հայերի թվաքանակը կազմում էր ավելի քան 10.000: 1990-1992 թթ. Իրաքի Քուվեյթ ներխուժման և դրան հաջորդած Ծոցի պատերազմի հետևանքով՝ շատ հայեր լքեցին այս շրջանը և զգալիորեն նոսրացավ համայնքի թվաքանակը: Պատերազմի տարիներին միայն 1500-2000 երիտասարդներ էին մնացել Քուվեյթում, որոնց ընտանիքները տեղափոխվել

էին ավելի ապահով երկրներ: Հետպատերազմական շրջանում հայերի թիվը կրկին սկսեց վերականգնվել, թեև ոչ նախնական պատկերով: Ներկայումս Քուվեյթում հայերի թիվը 4000-5000 է:

- Ինչպիսի՞ն է հարաբերությունների մակարդակը Քուվեյթի իշխանությունների և երկրում գործող այլ եկեղեցիների հետ:

- Առանց չափազանցության՝ Քուվեյթի և Արաբական Ծոցի ողջ տարածքում տեղացիների շրջանում բացառիկ դրական վերաբերմունք կա հայության նկատմամբ: Տեղական իշխանությունների և թե շրջանի ազգաբնակչության մոտ հայերը հայտնի են իրենց վարքով, ուղղամտությամբ և պարկեշտ աշխատանքով:

Ինչ վերաբերում է Քուվեյթում գործող այլ եկեղեցիների հետ մեր հարաբերություններին, կարող եմ ասել, որ հնարավորությունների սահմաններում միջկրոնական լայն շփումներ և գործակցություն ունենք բոլոր եկեղեցիների հետ:

- Ե՞րբ է հիմնադրվել Ազգային վարժարանը, որը հայապահպանության կարևոր օղակներից մեկն է համայնքում:

- Քուվեյթի Ազգային վարժարանը հիմնադրվել է 1960 թ.: Սկզբնական շրջանում Վարժարանը գործում էր համեստ պայմաններում՝ եկեղեցու հարկի տակ: Այնուհետև համայնքն իր սեփական միջոցներով կառուցեց Ազգային վարժարանի շենքը և հետզհետե վարժարանի ծրագիրը համալրվեց նաև երկրորդական վարժարանի ամբողջական կարգերով:

Վարժարանն ունի պետական հատուկ արտոնագիր: Պետական կրթական ծրագրի հետ մեկտեղ՝ այստեղ դասավանդվում են նաև անհրաժեշտ հայագիտական առարկաներ և կրոն: Վարժարանը գործում է համայնքի նյութական միջոցներով և վերջին տարիներին աշակերտության թիվը կազմում է 450:

- Ինչպիսի՞ն են հայ համայնք-պետություն հարաբերությունները: Ի՞նչ կարգավիճակ ունի հայ համայնքն այս երկրում:

- Միջին Արևելքի այլ համայնքների օրինակով՝ պետությունը քուվեյթահայությանը ճանաչում է որպես առանձին կրոնական համայնք: Այլ խոսքով, պետությունը եկեղեցուն է

ճանաչում որպես համայնքի ներկայացուցիչ ու պատասխանատու:

Ինչ վերաբերում է պետական շրջանակների հետ մեր ունեցած հարաբերություններին, հայտնեմ, որ բավական սիրալիր ու քաղաքավարի հարաբերություններ ունենք պետական շրջանակների հետ: Սակայն, այդ ամենով հանդերձ, պետք է նշեմ, որ Արաբական ծոցի երկրներում ապրող մեր հայրենակիցներն այդ երկրների քաղաքացիներ չեն, այլ պարզապես աշխատելու իրավունքով ապրում են տվյալ երկրներում: Հետևաբար համայնք և պետություն հարաբերությունները սահմանափակ են:

- Ինչպիսի՞ն են հայերի շփումները քուվեյթյան հասարակության ներսում: Ի՞նչ դեր ունեն հայերն այդ երկրի հասարակական-մշակութային կյանքում:

- Տեղական իրավիճակից ելնելով՝ բավական բարդ է քուվեյթյան հասարակության հետ ծրագրված բնույթի շփումներ վարելը: Ծոցի տարածաշրջանը համեմատաբար դեռ նոր է իր դռները բացել աշխարհի համար, ինչը հույս է ներշնչում, որ ապագայում նման հնարավորություններ ևս կստեղծվեն:

- Ինչպիսի՞ն է հայկական ինքնության մակարդակը համայնքում: Արդյո՞ք համայնքն ունի ազգապահպանման խնդիրներ:

- Քուվեյթի մեր համայնքը 100%-ով հայախոս է և կարելի է հուսալ, որ անմիջականորեն ազգապահպանման մասնավոր սպառնալիքներ չկան համայնքի համար: Քուվեյթում ինքնության պահպանման հարցում զգալի դերակատարում ունեն եկեղեցին, համայնքի ներսում գործող միություններն ու հատկապես Ազգային վարժարանը, որը նոր սերունդների դաստիարակությունն իրականացնում է ծրագրված կերպով և բարձր պատասխանատվությամբ: Մեր ազգային հարատևության մեջ չենք կարող մոռանալ հայ ընտանիքի ունեցած անփոխարինելի ներդրումը:

- Ի՞նչ դեր ունի եկեղեցին Ծոցի հայ համայնքների կյանքում և ի՞նչ եկեղեցիներ կան ԱՄԷ-ում և Քուվեյթում:

- Ոչ միայն Ծոցի համայնքներում, այլև ընդհանուր հայության կյանքում հայ եկեղեցին ունի կենարար ներկայություն հատկապես օտար և աշխարհատարած երդիկների հովանու ներքո ապրողների համար: Այս տեսանկյունից հայ եկեղեցին հայության պահպանման երաշխիքն է:

Թեև Քուվեյթում մենք չունենք սեփական եկեղեցու շենք, սակայն ունենք Սուրբ Վարդանանց հայկական եկեղեցին, որն ավելի քան 50 տարվա պատմություն ունի: Շարժա-Դուբայում ունենք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ՝ հայկական ոճով կառուցված եկեղեցին՝ իր համալիրով և շաբաթօրյա վարժարանով: Կառուցման ընթացքի մեջ է Աբու Դաբիի Սուրբ Նահատակաց եկեղեցական համալիրը՝ իր երիցատնով և վարժարանի շենքով, և վստահ ենք, որ մինչև այս տարվա վերջ ԱՄԷ–ի մայրաքաղաքում ևս վեր կխոյանա հայկական եկեղեցու գմբեթը:

Եկեղեցական համալիր կառուցելու նպատակով՝ արդեն իսկ Քաթարի պետության կողմից խոստացվել է հողատարածք: Հուսով ենք, որ այդ ծրագիրն էլ շուտով կյանքի կկոչվի:

- Արդյո՞ք հայկական դավանական բոլոր շերտերն առկա են Քուվեյթի համայնքում (հայ առաքելական, կաթոլիկ, ավետարանական և այլն), և ինչպիսի՞ն են նրանց միջև հարաբերությունները:

- Արաբական ծոցի երկրներում առկա է միայն Հայաստանյաց առաքելական եկեղեցին, ուր անխտիր հաճախում և միասնաբար աղոթում են բոլոր առաքելական, հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների զավակները: Նաև անխտիր բոլոր հայերի մասնակցությամբ պահվում են առաջնորդարանը, եկեղեցին, վարժարանը և համայնքային մեր բոլոր կառույցները:

- Ինչպիսի՞ն են հարաբերությունները համայնքի ներսում շատ ավելի վաղ Մերձավոր Արևելքի այլ երկրներից հաստատված հայերի և վերջին շրջանում, հատկապես, Հայաստանից հաստատվածների միջև:

- Միջին Արևելքից եկող մեր հայրենակիցների համար շատ բնական երևույթ է եկեղեցու շուրջ համախմբվելն ու համայնքային կյանքով ապրելը, քանի որ, բոլոր առումներով, սփյուռքահայ իրականության մեջ եկեղեցին կենտրոնական դեր ունի մեր հավաքականության մեջ: Ինչ վերաբերում է Հայաստանից եկող մեր հայրենակիցներին, ապա սփյուռքահայության փորձառությունը նրանց կյանքի մաս չի կազ-

մել և նրանց կազմավորման գործում եկեղեցին չի ունեցել էական դերակատարություն: Հավատում եմ, որ ի վերջո ժամանակն ու կյանքի փորձառությունը կհաջողեն միավորել նաև հայության զույգ զանգվածները:

Մեղադրելու ցանկությամբ, իհարկե, չեմ արտահայտվում, սակայն հարկ է նշել, որ առհասարակ եկեղեցական և համայնքային մեր կյանքում հազվադեպ առիթներով ենք հանդիպում Հայաստանից եկած մեր հայրենակիցներին: Խոսքս չի վերաբերում միայն Քուվեյթին, ուր Հայաստանից եկող մեր հայրենակիցների թիվն առայժմ մնում է շատ սահմանափակ: Ես նկատի ունեմ հատկապես Դուբայը, Աբու Դաբին և Քաթարը, ուր հայաստանցի հայրենակիցների նկատելի ներկայություն կա: Անշուշտ, կան նաև օրինակելի երևույթներ: Հպարտությամբ եմ հայտնում, որ վերջերս, ընդառաջելով մեր խնդրանքին, հայաստանցի գործարար մի երիտասարդ սիրով դարձավ Աբու Դաբիում կառուցվող մեր եկեղեցու կնքահայրերից մեկը:

- Կարող եք, արդյո՞ք, նշել մի քանի կարևոր խնդիրներ, որ ներկայումս առկա են քուվեյթահայ համայնքում:

- Քուվեյթի համայնքում առկա մեծագույն խնդիրը սեփական եկեղեցի ունենալու հարցն է: 1962 թ.-ից մինչ օրս համայնքը չունի սեփական եկեղեցի, այլ վարձակալում է տեղացի ընտանիքի մի կալվածք, որի վրա, իր անհրաժեշտություններից ելնելով, ստեղծել է մասնակի հարմարություններ:

Օտարահպատակները Քուվեյթում սեփականություն ունենալու իրավունք չունեն: Այս նպատակով բազմաթիվ դիմումներ ենք հղել երկրի իշխանություններին՝ հույս ունենալով, որ Արաբական ծոցի այլ երկրների օրինակով՝ Քուվեյթի մեր համայնքի խնդրանքներին ի պատասխան այս հարցը դրական լուծում կարող է ստանալ: Սպասողական վիճակում ենք և հույս ունենք, որ երկրում տեղի ունեցած վերջին խորհրդարանական ընտրությունները կնպաստեն հարցի դրական լուծմանը:

- Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ այսօր Սիրիայում տեղի ունեցող գործընթացները Ծոցի երկրների հայ համայնքների համար: Կա արդյո՞ք սիրիահայերի հոսք դեպի Քուվեյթ և ԱՄԷ:

- Անկասկած, Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով՝ ամբողջ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի հայությունն ապրում է դժվարին օրեր: Քուվեյթահայությունը ևս չի կարող անմասն մնալ սիրիական տագնապից: Համայնքի շուրջ 85%-ը հալեպահայեր են և, հետևաբար, ապրում են Սիրիայում գտնվող իրենց ընտանիքների անդամների դիմագրավվող դժվարություններով: Մեծամասամբ նույն իրավիճակն է նաև Ծոցի արաբական մյուս երկրներում:

Դժբախտաբար ներկայումս սիրիական ճգնաժամի խորացման պայմաններում, նաև անվտանգության դրդապատճառներից ելնելով՝ սիրիական հպատակություն ունեցողների համար գրեթե անհնար է Քուվեյթ կամ Արաբական ծոցի այլ երկրներ մուտք գործելը: Պարզապես տեղական իշխանությունները դեռևս երկարաձգում են տարիներ առաջ կացության իրավունք ստացածների կարգավիճակը:

Վերջին ամիսներին շուրջ 10 սիրիահայ ընտանիքներ, հայաստանյան անձնագրերով, տեղափոխվեցին Քուվեյթ: Ոմանք իրենց կեցությունն այստեղ համարում են ժամանակավոր, իսկ մյուսներն էլ, մինչև սիրիական տագնապի ավարտը, մտածում են այստեղ հաստատվելու մասին:

- Ինչպիսի՞ն են հարաբերությունները ԱՄԷ-ում և Քուվեյթում ՀՀ դեսպանությունների և այդ երկրների հայ համայնքների միջև:

- Հիրավի, ամբողջացնող և միմյանց աշխատանքը դյուրացնող հարաբերություններ ունենք ՀՀ դեսպանությունների հետ: Հատկապես Քուվեյթի պարագայում բոլոր մակարդակներում ներդաշնակ, սերտ և մտերմիկ գործակցություն է ստեղծված մեր համայնքի և ՀՀ դեսպանության միջև: Այս առիթով ցանկանում եմ բարձր գնահատել Քուվեյթում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ֆադեյ Չարչօղլյանի և դեսպանության ողջ անձնակազմի աշխատանքը, որոնց հետ միասին մտածելու և գործելու բազմաթիվ առիթներ ունենք:

- Ինչպե՞ս կբնութագրեք հայրենիքի և Ծոցի հայ համայնքների շփումները:

- Հայրենիքի և Ծոցի հայ համայնքներ շփումները կենսական են: Միայն դրանցով կարող է նոր թափ ստանալ մեր

կյանքը: Հուսով ենք, որ ապագայում փոխադարձ գործակցությամբ հայրենիքն ավելի մեծ ներկայություն կունենա մեր կյանքում, իսկ մենք էլ մեր հերթին, ավելի մեծ մասնակցություն կունենանք հայրենական կյանքի մի շարք ոլորտներում:

2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՏԵՐ ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ՏԵՅԻՐՄԵՆՃՅԱՆԻ ՀԵՏ

- Արժանապատիվ Տեր հայր, կներկայանա՞ք, որտեղի՞ց եք արմատներով և ո՞ր թվականից եք հաստատվել ԱՄԷ-ում: Որքա՞ն ժամանակ է, որ ԱՄԷ-ում հայ համայնքի մնայուն հոգևոր հովիվն եք:

- Տեր Արամ քահանա Տեյիրմենճյան: Ծնվել եմ Բեյրութում, նախնական և կրոնական կրթություն ստացել եմ Բեյրութում, ապա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքում: Հայրական կողմս Ադանայից է, իսկ մայրական կողմս՝ Սսից: 1998 թ. նշանակվել եմ Արաբական Միացյալ էմիրությունների հոգևոր հովիվ և ծառայում եմ մինչ օրս:

- Իսկ ինչպե՞ս կբնութագրեք ԱՄԷ-ի հայ համայնքին:

- Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմը կազմված է Քուվեյթի, Արաբական Միացյալ էմիրությունների, Բահրեյնի, Քաթարի, Օմանի, Սաուդյան Արաբիայի հայ եկեղեցու զավակներից: Որոշ տեղեկությունների համաձայն՝ դեռևս 16-րդ դարի սկզբին հայերը, գործի բերումով, արդեն իսկ բնակվում էին Ծոցի երկրներում: Հայ վաճառականներն Արևելքի և Արևմուտքի միջև իրականացվող առևտրի հիմնական կազմակերպիչներն էին: Դեպի ԱՄԷ հայերի մեծաքանակ հաստատումը սկսվել է 1975 թ.-ից և շարունակվում է մինչ օրս: Այստեղ հայերը հաստատվում են Սիրիայից, Լիբանանից, Իրանից, Եգիպտոսից, Իրաքից, Հայաստանից, Ռուսաստանից, եվրոպական երկրներից, ԱՄՆ-ից և Կանադայից:

Այլ ազգերի նման՝ հայերը ևս աշխատանքի բերումով են տեղափոխվել և բնակություն հաստատել ԱՄԷ-ում: Անցյալում այնքան էլ դյուրին չէր աշխատել և ապրել տաք և խոնավ անապատում, սակայն երկրի տնտեսական կայուն վիճակը և ազատ մթնոլորտն ու միջազգային ներդրումներն ապահովել են գործի ապահովություն, հետևաբար ավելի հանգիստ կենցաղային պայմաններ:

Հայերի հոսքը դեպի ԱՄԷ ավելանում է տարեցտարի: ԱՄԷ-ում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ չկան հստակ վիճակագրական տվյալներ: Մոտավոր հաշվարկելով հայերի թիվը 5000-ից 6000 է:

- Արդյո՞ք այն կազմակերպված կառույց է:

- Այո, համայնքի գործադիր մարմինն Ազգային վարչությունն է, որն ընտրվում է Թեմական մարմնի կողմից՝ երկամյա ժամկետով, և որի նախագահն է քահանա հայրը: Եկեղեցին ունի հոգևոր մնայուն հովիվ, ով ծառայում է ԱՄԷ–ի հայ համայնքին և պարբերաբար այցելում է Քաթար և Բահրեյն: Ազգային վարչությունն էլ, իր հերթին, եկեղեցու գործունեությանն աջակցելու նպատակով, նշանակում է Թաղային խորհուրդ և դպրոցի Հոգաբարձուների խորհուրդ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կազմավորում է հանձնախմբեր (Տիկնանց, Գեղարվեստական, Դատաստանական, Երիտասարդաց, Հաղորդակցության և Կայքէջի հանձնախումբ): Բոլոր հանձնախմբերը նշանակվում են Ազգային վարչության կողմից և հաշվետու են վերջինիս:

- Ինչպիսի՞ն է համայնքի ներկայիս վիճակը:

- Անցյալում համայնքում հաստատված շատ հայրենասեր հայեր շարունակաբար նյութական և բարոյական աջակցություն ցուցաբերեցին և հարմար պայմաններ ստեղծեցին համայնքային կյանքն օտար եկեղեցիներում և դպրոցների սրահներում կանգուն պահելու համար՝ հանուն հայ նոր սերդի կրոնական և հայեցի դաստիարակության:

Իրար հաջորդող Ազգային վարչություններն, իրենց հանձնախմբերով, կազմակերպում են հուշահանդեսներ, ազգային-կրոնական հանդիսություններ, բարձր մակարդակով մշակութային և հասարակական ձեռնարկներ, որոնց բոլորի նպատակն է՝ աճող սերնդին տալ հայեցի դաստիարակություն՝ երիտասարդներին հնարավորություն ընձեռելով կազ-

մակերպվելու և մասնակիցը դառնալու համայնքի զանազան կրոնական, մշակութային և հասարակական կյանքին:

Սակայն, ցավոք, սրտանց աջակցողների և գործուն մասնակցություն ունեցողների թվաքանակը քիչ է:

Այսօր էլ ազգային ղեկավարությունը ծառայում է համայնքին և կազմակերպում է կրոնական ազգային տոնակատարություններ, հանդիսություններ, խրախճանքի երեկոներ, ձեռքի աշխատանքի իրերի վաճառք: Այն հրավիրում է նաև Հայաստանից և այլ երկրներից դասախոսների, արվեստագետների և գեղարվեստական խմբերի:

- Ինչպիսի՞ն են հայերի շփումները երկրի հասարակության ներսում:

- Երիտասարդ այս համայնքն իր 30-ամյա կազմակերպչական կյանքով և ազգային գործունեությամբ արդեն ունի մնայուն և հստակ դիմագիծ: 100 հայից 90-ը պաշտոնյա է, կան բարձր դիրքի հասած ղեկավար պաշտոնյաներ և տնօրեններ, գործարարներ, անձնական առևտրով զբաղվողներ: Հայ պաշտոնյաների շարքում համեմատաբար մեծ թիվ են կազմում ճարտարապետները, ճարտարագետները և տնտեսագետները:

- Ինչպիսի՞ն է հայկական ինքնության մակարդակը համայնքում: Արդյո՞ք համայնքն ունի ազգապահպանման խնդիրներ:

- Հյուսիսային Էմիրությունների առաջին Ազգային վարչության գլխավոր և առաջին ձեռնարկը եղել է Հայկական մեկօրյա վարժարանի հիմնումը, որը սկսվեց 1980 թ., և այն մինչ օրս էլ հայ ինքնության պահպանման կարևոր հիմնասյուներից է:

Շուրջ 18 տարի վարժարանը չուներ իր սեփական շենքը: Այն վարձակալում էր տարբեր դպրոցներ, որոնցում շաբաթը մեկ անգամ կազմակերպում էր իր դասընթացները

1998 թ. համալիրի կառուցումից հետո Հայկական վարժարանը վերջապես ունեցավ իր սեփական շենքը և այդ թվականից էլ վերանվանվեց Օհաննեսյան հայկական վարժարանի՝ ի երախտագիտություն համայնքի բարերար պարոն Հարութ Օհաննիսյանի, ում նվիրատվության շնորհիվ էլ վարժարանն ունեցավ իր սեփական շենքը:

Ինչպես որևէ այլ հայկական վարժարան, Օհաննեսյան վարժարանը նույնպես փորձում է բոլոր հնարավոր միջոցներով նպաստել մատաղ սերնդի դաստիարակությանը: Վարժարանի ծրագրում ներառված են հայոց լեզու, հայոց պատմություն, մշակույթ, երգ և երաժշտություն, կրոն և զանազան այլ առարկաներ, որոնք աղերսներ ունեն հայկական իրականության հետ:

Վարժարանի տնօրենությունն ու ուսուցչական կազմն աշխատում են կամավոր սկզբունքով՝ հավատալով հայկական վարժարանի անփոխարինելի առաքելությանը: Նրանք իրենց հոգեկան վարձատրությունը ստանում են նոր սերունդների հայեցի դաստիարակության միջոցով:

Ազգապահպանման խնդրի առնչությամբ նշեմ, որ համայնքը չունի ամենօրյա դպրոց, որի առնչությամբ անցյալում հատուկ հանձնախումբ էր կազմավորվել՝ հարցը ուսումնասիրելու նպատակով:

- Ի՞նչ դեր ունի եկեղեցին ԱՄԷ-ի հայ համայնքի կյանքում:

- 1977 թ. Դուբայի Սուրբ Երրորդություն անգլիկան եկեղեցում մատուցվեց հայկական ծեսով առաջին պատարագը: Դրանից հետո Քուվեյթից և Անթիլիասից պարբերաբար հրավիրվում էին հոգևոր հովիվներ:

1981 թ. Արաբական ծոցը դարձավ Կաթողիկոսական փոխանորդություն, որը ենթական է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը և նյութապես ու բարոյապես հաշվետու է նրան:

1998 թ.-ից ի վեր՝ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին մեծ ներդրում ունի համայնքի կյանքում: Եկեղեցին իր համալիրով ժողովրդին միավորում է եկեղեցական արարողություններով, տոնական և ազգային իրադարձություններով՝ պահպանելով համայնքի հոգևոր, ազգային, մշակութային, հասարակական և բարոյական դիմագիծը:

- Հայտնի է, որ Շարժայում գործում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին, իսկ Աբու Դաբիում հայերին նվիրաբերվել է հողատարածք՝ ևս մեկ եկեղեցի և համալիր կառուցելու նպատակով: Ինչպե՞ս է ընթանում նոր եկեղեցու կառուցման գործընթացը:

- 1995 թ. երջանկահիշատակ Գարեգին Բ. հայրապետը, իսկ 1998 թ.՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսը, պաշտոնական այցելությունների ընթացքում երկրի այժմ հանգուցյալ նախագահ Նորին գերազանցություն, շեյխ Զայեդ Բին Սուլթան Ալ- Նահյանին դիմեցին Աբու Դաբիի հայ համայնքին՝ եկեղեցաշինության նպատակով հողատարածք տրամադրելու խնդրանքով:

1998 թ. երկրի նախագահն Աբու Դաբիի հայ համայնքին նվիրաբերեց 100.000 ԱՄՆ դոլար, հուսալով, որ մոտ ապագայում կիրագործվեր նաև Վեհափառ հայրապետների՝ հողատարածք հատկացնելու խնդրանքը: Ուրախությամբ եմ հայտնում, որ 2006 թ. երկրի գահաժառանգի հատուկ հրամանագրով՝ Աբու Դաբիի հայ համայնքին նվիրաբերվեց 2475 ք.մ. հողատարածք եկեղեցի կառուցելու համար Մուսաֆահ կոչվող շրջանում:

2012 թ. մայիսի 4-ին Վեհափառի կողմից կատարվեց եկեղեցու հողատարածքի օրհնությունը, որը պիտի մկրտվի Սուրբ Նահատակաց եկեղեցի անվամբ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության 100-ամյակի:

- Արդյո՞ք հայկական դավանական բոլոր շերտերն առկա են էմիրությունների համայնքում (հայ առաքելական, կաթոլիկ, ավետարանական և այլն), և ինչպիսի՞ն են նրանց միջև հարաբերությունները:

- Այո, մենք ունենք հայ առաքելական, հայ կաթոլիկ և հայ ավետարանական եկեղեցու զավակներ: 1992 թ. Արաբական Միացյալ էմիրությունները վերածվեցին թեմի: Մինչ այդ վարչական կազմերը նշանակում էր կաթողիկոսական փոխանորդը: Այսօր ազգային կյանքը ղեկավարվում է թեմական կառույցով, որը նախագահում է կաթողիկոսական փոխանորդը: Թեմական մարմինը համայնքի գերագույն և օրենսդիր ժողովն է և բաղկացած է 21 անդամից (3 հոգևորական և 18 աշխարհական): Վերջերս ավելացավ նաև համայնքի վարչության ատենապետը՝ ժողովին մասնակցելու լիազոր ձայնի իրավունքով:

Թեմական ժողովի երեսփոխաններն ընտրվուն եմ հետևյալ կերպ. Շարժա-Դուբայ՝ 5, Աբու Դաբի՝ 4, Քուվեյթ՝ 9: Պաշտոնավարության ժամկետը 4 տարի է: ԱՄԷ-ում քվեարկությանը մասնակցում են 18 տարին լրացած համայնքի բոլոր

անդամները՝ առանց դավանանքի խտրականության (հայ կաթոլիկ, բողոքական), ինչը հատուկ է միայն այս թեմին և եզակի երևույթ է ընդհանրապես Սփյուռքի ազգային եկեղեցական կյանքում:

Բոլոր դավանական խմբերը ներառված են և գործուն մասնակցություն են ունենում համայնքի ազգային եկեղեցական կյանքում: Հայ կաթոլիկ եկեղեցու զավակների համար թեմի առաջնորդի արտոնությամբ և ղեկավարությամբ՝ հատուկ կարգադրություն է արված, որի համաձայն՝ դեկտեմբերի 24-ի երեկոյան Շարժայի Սուրբ Գրիգոր եկեղեցում մատուցվում է Սուրբ ծննդյան պատարագ՝ հայ առաքելական եկեղեցու ծեսով, ինչը յուրահատուկ երևույթ է:

Ավետարանական և կաթոլիկ եկեղեցու զավակները ներառված են նաև համայնքի գործադիր մարմիններում և դրանց ենթական հանձնախմբերում, վերջապես եկեղեցական տոնական օրերին Սուրբ ծննդյան և Հարության Ավետիսն անմասն չի թողնում նաև վերջիններիս:

- Ի՞նչպիսին են հարաբերությունները ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության և հայ համայնքների միջև: Առկա՞ է, արդյոք, համագործակցություն մի շարք ոլորտներում:

- ԱՄԷ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը գործում է 2000թ.-ից՝. Սկզբում՝ վարձակալված տարածքում, ապա 2007 թ.-ից իր սեփական շենքում: Աբու Դաբիի դեսպանությունը բարոյական թիկունք և բարձր հեղինակություն է հայ համայնքի համար: Համայնքի և դեսպանության հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:

Հայ մշակույթը և արվեստը ներկայացնելու, ինչպես նաև Հայաստան-Ծոցի արաբական երկրներ մշակութային կապերը զարգացնելու ուղղությամբ կարևոր դերակատարում ունեն Ծոցի տարածաշրջանի ՀՀ դեսպանությունները, որոնք կազմակերպում են մշակութային ելույթներ՝ հայրենի հանրածանոթ արվեստագետների մասնակցությամբ: Ազգային վարչությունները, դեսպանատների հետ համագործակցելով, այդ ձեռնարկներին իրենց մասնակցությունն են բերում՝ իրականացնելով դրանց քարոզչական աշխատանքը:

3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԵՎ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐՅՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՊՅԱՆԻ ՀԵՏ[141]

- Քուվեյթում հայ համայնքն ունի մոտ 50 տարվա պատմություն: Կարո՞ղ եք ամփոփել այդ պատմությունը:

- Առաջին հայերը Քուվեյթ եկան Իրաքից, հատկապես Բասրայից, քանի որ այն Քուվեյթին աշխարհագրորեն ամենամոտ հայ համայնքն էր: 1950-ականների կեսերին Սիրիայից, Լիբանանից և Իրանից նույնպես հայեր սկսեցին հաստատվել Քուվեյթում: Հայերի կազմակերպված կրոնական և ազգային կյանքը սկսվեց 1960-ականների սկզբին, երբ Մեծի Տանն Կիլիկիո Զարեհ կաթողիկոսը Քուվեյթ ուղարկեց հոգևորական Պարույր Սարգիսյանին: Մինչ այդ արդեն փորձեր էին արվել այստեղ դպրոց բացելու ուղղությամբ, սակայն դպրոցը հիմնվեց 1961-1962 թթ.՝ եկեղեցու հիմնման հետ զուգահեռ: Բացի հնաբնակ հայերից՝ նոր հաստատվածներն ակտիվորեն ներգրավվեցին երկրի ենթակառուցվածների ստեղծման գործընթացում: Մենք կարող ենք նշել մի շարք անուններ, ինչպես, օրինակ՝ Շաղզոյան եղբայրները, Երվանդ Բարսումյանը (ով կառուցեց Քուվեյթի համալսարանի շենքը), Քրիս Հովսեփյանը, Բուլղուրդյան եղբայրները, Շահնազարյանները և այլն: Շատ հայ ինժեներներ և շինարարներ ներգրավվեցին հասարակական կառույցների շինարարական աշխատանքներում (ինչպես, օրինակ՝ «Սաբահ» հիվանդանոցը): Ամենաէական հայկական ներկայությունը Շուվեյխ նավահանգստային քաղաքի արդյունաբերության ոլորտում էր: Դեռևս այն ժամանակ, երբ Քուվեյթն ընդհանուր առմամբ ոչ զարգացած երկիր էր, հայ մեխանիկներն ու մեքենաների վերանորոգման կետերի սեփականատերերը մեծ

[141]Archbishop Goriun Babian: We Are Now an Active Community, September, 2007, ըստ http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=660hzz79:

համբավ ունեին այդ ոլորտում: Ավելի վաղ հաստատված հայերը սոցիալական բավական լավ վիճակում էին:

Ժամանակի ընթացքում համայնքը ծաղկում ապրեց: 1980–ականներին Քուվեյթում հայկական դպրոցն ուներ 9-ը դասարան: Ավելի ուշ միջնակարգ դասարաններ էլ ավելացան, որոնք մինչև օրս գործում են: Մինչ Իրաք-իրանյան պատերազմը (1880-ականներ) դպրոցում աշակերտների թիվը հասավ իր գագաթնակետին՝ 800 աշակերտ: Համայնքի թիվը հասնում էր 10.000–ի: 1990 թ. իրաքյան ներխուժման ընթացքում համայնքը զգալի կորուստներ կրեց: Շատերը վերադարձան այն երկրներ, որտեղից հաստատվել էին Քուվեյթում: 1991 թ. Քուվեյթի ազատագրումից հետո համայնքը սկսեց վերակազմավորվել: Դժբախտաբար իրանահայերը, որոնք կազմում էին համայնքի 1.3-րդը, պատերազմից հետո չվերադարձան, քանի որ այդ ընթացքում նրանք չէին կարող վերադառնալ Իրան: Նրանցից շատերը հաստատվեցին ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր: Շատ քչերը միայն մնացին Քուվեյթում:

- Ինչպե՞ս կբնութագրեք քուվեյթահայ համայնքը:

- Այսօր համայնքի հայերի 80%-ը սիրիահայեր են, հատկապես Հալեպից, Լաթաքիայից և Քեսաբից: Նրանք արդեն այստեղ հաստատված 3-րդ սերունդն են, այն հայերի թոռները, ովքեր հաստատվեցին 1950-ականներին: Ներկայումս Քուվեյթը տնտեսական վերելք է ապրում: Քուվեյթցիները մեծ թափով ներգրավված են տնտեսության մեջ և արտերկրում նախկինում արված իրենց ներդրումները տեղափոխում են ետ՝ Քուվեյթ: Վերջին 5 տարիներին մեր գլխավոր նպատակը համայնքի վերակազմավորումն է: Երբ մենք առաջին անգամ եկանք այստեղ, դպրոցում ուսանում էր 310 հոգի: Այժմ նրանց թիվը 400-ից ավելի է (առկա են բոլոր դասարանները՝ մանկապերտեզից մինչև 12-րդ դասարան): Դպրոցի կրթական մակարդակը բավական բարձր է:

Առաջնորդարանը կարիք ուներ վերանորոգման: Մեր առաջնային խնդիրներից է եկեղեցու, ընդունարանի և այգու վերանորոգումը: Այժմ մենք ունենք ժամանակակից և ներկայանալի Առաջնորդարան, նոր գրադարան: Կարևոր խնդիր է արխիվի համակարգումը, որը շուրջ 40 տարի բացթողի վիճակում է:

Համայնքն ունի մի քանի մարմիններ, ինչպես, օրինակ՝ Օրենսդիր (Թեմական) խորհուրդ, Գործադիր խորհուրդ (Ազգային վարչություն), եկեղեցին և դպրոցական մարմինները: Գործում են կանանց երկու կազմակերպություններ՝ եկեղեցուն կից հանձնախումբը և Հայ օգնության միությունը, որը զբաղվում է բարեգործական և մշակութային գործունեությամբ: Ուրբաթ օրերին սկաուտական խմբերում ընդգրկված է շուրջ 250 երեխա: Վերջերս կազմավորվեց նաև հայ դատի հանձնախումբը:

- Ինչպիսի՞ն է հարաբերությունների մակարդակը այլ եկեղեցիների և Քուվեյթի իշխանությունների հետ:

- Ես մեծապես աջակցում եմ եկեղեցիների էկումենիկ շարժմանը: Քուվեյթում մենք լավ հարաբերություններ ունենք այլ եկեղեցիների հետ և այցելում ենք միմյանց: Համայնքը հրաշալի հարաբերություններ ունի երկրի իշխանությունների հետ, որոնց հետ հարաբերությունները հատկապես սերտացան 2005 թ. դեկտեմբերին Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ի կաթողիկոսի Քուվեյթ այցելությունից հետո: Այդ պատմական այցի ընթացքում Քուվեյթում իսլամադավանների և քրիստոնյաների միջև երկխոսության առաջին քայլերի հիմքերը դրվեցին: Այդ ընթացքում տեղական պարբերականներում շատ հոդվածներ լույս տեսան Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Կարճ ասած, մենք այժմ ակտիվ համայնք ենք:

- Կարո՞ղ եք նշել մի քանի խնդիրներ, որոնք այսօր առկա են համայնքում:

- Անշուշտ, մենք զգալի դժվարություններ ունենք հատկապես ֆինանսական ոլորտում: Օրինակ, դպրոցն ունի տարեկան 100.000 ԱՄՆ դոլարի պարտք: Մենք զգալի ջանքեր պետք է գործադրենք դպրոցը պահպանելու նպատակով: Առաջնորդարանի շենքի վարձակալության համար տարեկան վճարվում է 50.000 ԱՄՆ դոլար: Քուվեյթում օտարազգիները, այդ թվում նաև հայերը չունեն սեփականություն ունենալու իրավունք:

Շարժայի և Աբու Դաբիի հայերը երջանիկ են, որ կառավարության կողմից նրանց տրամադրել է հողատարածք՝ եկեղեցի կառուցելու նպատակով: Սակայն Քուվեյթում մենք

ստիպված ենք վարձակալման գումար վճարել: Այդուհանդերձ, մենք լավատես ենք և ունենք ծրագրեր, որոնք կապված են համայնքի մշակութային կյանքի ակտիվացման և սոցիալական կյանքի տարբեր ոլորտների հետ:

4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ[142] ՔՈՒՎԵԹՈՒՄ ԵՎ ԲԱՀՐԵՅՆՈՒՄ ՀՀ ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆԻ ՀԵՏ[143]

(հատվածներ)

- Ինչպե՞ս են զարգանում հարաբերություններն արաբական երկրների հետ, և ի՞նչ դեր ունի իսլամական գործոնը Հայաստան-արաբական աշխարհ հարաբերություններում:

- Արդեն 1991-1992-ից Հայաստանը սկսեց ակտիվ դիվանագիտական հարաբերություններ հաստատել արաբական երկրների հետ, սակայն հակամարտության խորացմանը զուգընթաց՝ հատկապես Շուշիի ազատագրումից և Լեռնային Ղարաբաղի շուրջ անվտանգության գոտու ստեղծումից հետո այդ գործընթացն, առանձին դեպքերում, ձեռք բերեց այլ շեշտադրումներ: 1992, 1994, 1996, 1997, 1998 թթ. Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նաև Ծոցի երկրների՝ Օմանի, Քուվեյթի, Բահրեյնի, Կատարի և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ: Այսօր մենք արաբական աշխարհի հետ բազմակողմ հարաբերություններ ունենք: Ամեն պարագայում մեր դիվանագիտության խնդիրն է, որպեսզի միջազգային կազմակերպություններում (մասնավորապես ՄԱԿ-ում) արաբական պե-

[142] Դեսպան Արշակ Փոլադյանի հետ ամբողջական հարցազրույցը տե՛ս http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2396:

[143] Արշակ Փոլադյանը 2000-2002-ը եղել է ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատարը ԱՄԷ-ում, իսկ 2002-2006-ը՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, 2003-2006-ը նաև ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը Քուվեթում և Բահրեյնում:

տությունները գոնե չմասնակցեն Ադրբեջանի օգտին կազմված բանաձևերի քվեարկությանը:

- Ինչպե՞ս է ընկալվում Հայաստանն արաբական իսլամական աշխարհում: Կցանկանայի, որ մասնավորեցնեք Արաբական Միացյալ Էմիրությունների օրինակը, որտեղ՝ որպես ՀՀ դեսպան, աշխատել եք 2000-2006 թվականներին:

- Հայաստանի Հանրապետությունը Արաբական Միացյալ Էմիրությունների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել է 1998-ի հունիսին՝ հաշվի առնելով այս երկրի՝ տարածաշրջանային առումով առանցքային նշանակությունն ու քաղաքական կշիռը, ինչպես նաև տնտեսական հնարավորությունները, մասնավորապես՝ համագործակցությունը համաշխարհային առևտրի շուկայում: Կարելի է ասել, որ Էմիրություններում (որտեղ կա շուրջ 3000-անոց հայ համայնք) ամեն ինչ սկսեցինք գրեթե զրոյից: 2000 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ձեռամբ՝ պաշտոնապես բացվեց ՀՀ դեսպանությունը, իսկ 2002 թ. ապրիլին ՀՀ նախագահը պաշտոնական այցով եղավ Էմիրություններում և Կատարում: Հայաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների համագործակցությունը բազմակողմ է և թևակոխել է նոր շրջան: Այս տարիներին կազմակերպվել են բազմաթիվ տնտեսական ֆորումներ, ցուցահանդեսներ, մշակութային այլևայլ միջոցառումներ, այս երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը հասնում է մոտ $100 մլն-ի: Էմիրություններում երկու անգամ անցկացվել են հայկական մշակույթի օրեր. 2002 թ.՝ Աբու Դաբիում և 2004 թ.՝ Շարժայում, որը համարվում է Արաբական Միացյալ Էմիրությունների մշակութային մայրաքաղաքը: Հայաստանը և Շարժան 2004 թ. մշակութային օրերի նախօրեին ստորագրեցին Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ/Շարժա մշակութային համագործակցության գործնական ծրագիր, որի շրջանակներում անցյալ տարի սեպտեմբերին Հայաստանում տեղի ունեցան Շարժայի մշակույթի օրեր (առաջին անգամ Հարավային Կովկասի կտրվածքով), որին ներկա էր Շարժայի էմիրը՝ շեյխ Սուլթան Բին Մուհամմադ Ալ-Կասիմին: Սա մեր նվաճումներից մեկն է: Ձեր ուշադրությունը կցանկանայի հրավիրել մի քանի կարևոր փաստերի վրա: Հայաստանն այսօր համագործակցում է Աբու Դաբիի

Զարգացման հիմնադրամի հետ: 2002 թ. ապրիլին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ Էմիրություններ կատարած այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի հիմնադրամը ֆինանսավորի Արփա-Սևան նախագիծը, ինչը կիրականանա մոտ ապագայում: Նկատի ունեցեք, որ այս հիմնադրամը ֆինանսավորում է նախագծեր հիմնականում իսլամական երկրներում: Բացի այդ, շեյխ Սուլթան Բին Մուհամմադ Ալ-Կասիմին, որը հայտնի է որպես բարեպաշտ մահմեդական, պատրաստակամություն է հայտնել վերանորոգել Հաղարծինի եկեղեցին: Նախագիծը հաստատված է, ֆինանսավորում կա, այնպես որ, ծրագիրը կիրականանա մոտ ապագայում: Շեյխ Սուլթանի աննախադեպ այս քայլը, իրոք, բարձր գնահատանքի է արժանի:

- Իսկ ինչպե՞ս է անդրադառնում Արաբական Միացյալ Էմիրությունների մամուլը Հայաստանին և հայկական թեմաներին:

- Ընդհանրապես, Էմիրությունների ընթերցողը շատ վատ է ճանաչում Հայաստանը: Սովորաբար, Հայաստանը ներկայացվում է ըստ միջազգային լրահոսի: Իսկ դրանից դուրս անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանք տանել: Ես Հայաստանի մասին հսկայական նյութ եմ մատակարարել մամուլին: Բացի այդ, այս տարիներին հրատարակել եմ հինգ մենագրություն՝ նվիրված հայ-արաբական պատմամշակութային առնչություններին, ինչպես նաև իսլամին, որոնք բաժանվել են քաղաքական շրջանակներում:

Առանձին դեպքերում մամուլում լինում են անդրադարձներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Էմիրություններում տեղյակ են հայկական ջարդերի մասին: Ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ քիչ թե շատ նյութեր տպագրվեցին: Երբեմն Հայաստանի մասին հեռարձակվում են տեսանյութեր: Պետք է նկատի ունենալ, որ Արաբական Միացյալ Էմիրությունները վարում է հավասարակշռված և զգուշավոր քաղաքականություն, ձգտում չխառնվել իրեն չառնչվող հարցերին:

Կարելի է ասել, որ մենք, ըստ էության, չունենք խնդիրներ իսլամական աշխարհում: Իրականում կան քաղաքական շահեր և աշխարհաքաղաքական հետաքրքրություններ:

5. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄԷ-ՈՒՄ ՀՀ ՆԱԽԿԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ՎԱՀԱԳՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԵՏ[144]

- Ե՞րբ եք սկսել ձեր առաքելությունն ԱՄԷ-ում, և որո՞նք էին առաջին խնդիրները, որոնց հետ բախվեցիք:

- Առաջին անգամ ԱՄԷ եկա 2006 թ. մայիսի 27-ին: Ինչպես գիտեք, դա ամառային արձակուրդների սկիզբն էր և բավական հարմար ժամանակ, որպեսզի կարողանայի համակարգել որոշ ներքին վարչական խնդիրներ: Ավելի ուշ՝ հատկապես սեպտեմբերի կեսերին, մի շարք հանդիպումներ ունեցանք ԱՄԷ-ի բարձրաստիճան որոշ պաշտոնյաների, հայտնի ընկերությունների տնօրենների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին քաղաքական, տնտեսական, իրավական և կրթական խնդիրներ: Մենք սկսեցինք ակտիվ տեղեկատվական արշավ Հայաստանի վերաբերյալ հասարակական և անհատական մակարդակներում, որը վերաբերում էր քաղաքական, տնտեսական և իրավական հարթություններին: Մենք աշխատում ենք Սփյուռքի տարբեր կազմակերպությունների հետ մեր համազգային նպատակներին հասնելու համար:

Ինչպես գիտեք, նախագահ Քոչարյանի՝ 2002 թ. ապրիլին ԱՄԷ այցի շրջանակներում երկրի նախկին նախագահ, շեյխ Զայիդը ՀՀ ապագա դեսպանատան կառուցման նպատակով նվիրաբերեց տարածք: Շինարարական աշխատանքներն արդյունավետորեն ընթանում են և մենք հուսով ենք, որ 2007 թ. ավարտին դեսպանատան շենքն արդեն շահագործման կհանձնվի: ԱՄԷ-ում ՀՀ դեսպանությունն, անկասկած, ունի տարածաշրջանային նշանակություն: Մոտ ապագայում Ծոցի այլ երկրների հետ ՀՀ հարաբերությունները ևս կիրականացվեն այս դեսպանատան միջոցով, ինչը կակտիվացնի այս տարածաշրջանում ՀՀ քաղաքականությունը:

[144] Azad-Hye's Interview with the Ambassador of Armenia in the United Arab Emirates His Excellency Vahagn Melikian, on the Occasion of the First Year of His Tenure in This New Environment, 03, July, 2007, տե՛ս http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=370gga11:

- Կարո՞ղ եք ներկայացնել Աբու Դաբիում մեր դեսպանության դերակատարությունը:

- 2000 թ. ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց ԱՄԷ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների ընդլայնման վերաբերյալ: Արշակ Փոլադյանը նշանակվեց գործերի ժամանակավոր հավատարմատար, իսկ ավելի ուշ՝ նաև արտակարգ և լիազոր դեսպան: Մենք պետք է շնորհակալ լինենք այն աջակցության համար, որ առաջին իսկ օրվանից դեսպանությունը զգում է համայնքի կողմից: Այդ ժամանակվանից կազմավորվել է հանձնախումբ, որը համակարգում և հոգում է բոլոր ծախսերը. շատ կարևոր քայլ նախնական փուլում: Ես ցանկանում եմ իմ շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնել այն բոլոր անհատներին և կազմակերպություններին, որոնք աջակցություն են ցույց տալիս դեսպանությանն այն ողջ ընթացքում, ինչպես նաև այն ահռելի աշխատանքի համար, առանց որի շատ դժվար կլիներ ուրվագծել դեսպանության ապագա քաղաքական ուղեգիծը:

Հայաստան-ԱՄԷ հարաբերությունների հաստատումից ի վեր հսկայական աշխատանք է կատարվել երկկողմ հարաբերությունների ոլորտում՝ ներառյալ պայմանահիրավականը: Տասնյակ համաձայնագրեր են ստորագրվել, տեղի են ունեցել պաշտոնական այցելություններ, մասնավորապես նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցելությունը 2002 թ. և ԱԳՆ նախարար Վարդան Օսկանյանի այցելությունը, որը տեղի ունեցավ 2006 թ.՝ դեպանության բացման արարողությանը մասնակցելու նպատակով: Նշենք, որ Շարժայի կառավարիչ, շեյխ Սուլթան Ալ-Քասիմին 2005 թ. այցելեց Հայաստան, որի ընթացքում զգալի առաջընթաց գրանցվեց երկկողմ հարաբերությունների զարգացման ոլորտում հատկապես Շարժայի էմիրության հետ:

- Ի՞նչ կասեք որոշ հայերի և դեսպանության հարաբերությունների մասին:

- Իհարկե, դժվար է ընմբռնել, թե ինչու Սփյուռքի մեր շատ հայրենակիցներ չեն այցելում դեսպանություն և հետաքրքրություն չեն դրսևորում նրա նկատմամբ: Սա ունի իր բացատրությունը: Մարդիկ շատ զբաղված են իրենց սեփական գործերով և ժամանակը թույլ չի տալիս նրանց ակտիվ շփումներ ունենալ դեսպանության հետ: Այլ հարց է նաև, թե

ինչ են մտածում հայերը դեսպանության մասին: Այս մոտեցումն, իհարկե, վերանայման կարիք ունի: Այսօր կան կարծրատիպային մոտեցումներ, որոնք պիտի վերանայվեն: Քանի որ Հայաստանն օր օրի առաջընթաց է ապրում, շատ կարևոր է, թե ինչպես աջակցել այդ առաջընթացին: Ես չեմ կարծում, որ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը կարող է լինել միայն ֆինանսական հարթությունում: Աջակցությունը կարող է ունենալ տարբեր ձևեր: Շատ հայեր կան, ովքեր տասնամյակներով ապրելով այստեղ, կարողացել են լուրջ հարաբերություններ ձևավորել այս երկրում: Մենք պետք է կարողանանք օգտագործել այդ հարաբերությունները՝ տարբեր անհատների ու կազմակերպությունների շրջանում Հայաստանն ու հայերին դարձնելով ավելի ճանաչելի: Այսօր մեր առաջնային խնդիրն է՝ քաջալերել օտարերկրյա ներդրումները Հայաստանում: Այս դաշտն այսօր Հայաստանում բավական ազատական է: Այն լայն հնարավորություններ է ընձեռում: Սփյուռքի մեր հայրենակիցներին կարող ենք օգտակար լինել, տեղեկատվություն տրամադրել այն անհատների և ընկերությունների մասին, որոնք հետաքրքրված են Հայաստանում իրենց բիզնեսն ընդլայնելու գործում: Մեր հայրենակիցների օգնությամբ մենք կարող ենք այդ մարդկանց հրավիրել Հայաստան և տեղում ծանոթացնել բոլոր ներդրումային հնարավորություններին:

- Ի՞նչ են մտածում ՀՀ քաղաքացիներն ԱՄԷ-ի մասին:

- Երբ խոսում ես որևէ հայի հետ ԱՄԷ-ի մասին, առաջին միտքը, որ լինում է նրա մոտ, Դուբայն է: Երկրորդը Բուրջ Ալ-Արաբն է: Հայերն, իրականում, սովորաբար բավարար տեղեկատվություն ունեն այս երկրի մասին: Զգալի թվով գործարարներ և զբոսաշրջիկներ են Հայաստանից այցելում ԱՄԷ: Կան որոշ հաջողակ գործարարներ, ովքեր իրենց գործն են հիմնել ԱՄԷ-ում. ոմանք ունեն իրենց սեփական ընկերությունները, իսկ ոմանք էլ համատեղ բիզնես են իրականացնում:

Զգալի թվով հայ զբոսաշրջիկներ են այցելում ԱՄԷ: Սակայն Ծոցի երկրների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններն, անկասկած, կարիք ունեն ավելի խոր ուսումնասիրության՝ ավելի «կոկիկ» տեղեկատվություն ունենալու նպատակով:

Գոյություն ունի տեղեկատվության պակաս, սակայն դեսպանության պարտականությունն է՝ մեր քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրել ԱՄԷ-ում իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև ողջ Ծոցի երկրների մասին: Այդ տեղեկատվությունը պետք է ներառի նաև գործարար և աշխատանքային հնարավորությունների դաշտը:

- Ինչու՞ ՀՀ շատ քաղաքացիներ, ովքեր հաստատվել են ԱՄԷ-ում, չեն մասնակցում համայնքային կյանքին:

- Երբ ես հանդիպում եմ ՀՀ քաղաքացիների հետ, միշտ քաջալերում եմ նրանց՝ մասնակցել համայնքային կյանքին և դառնալ հասարակության ինտեգրված բաղադրիչ: Տնտեսական մակարդակում միայն կապեր ունենալը Սփյուռքի անհատների հետ բավական չէ: Այս հայերը պետք է իրենց երեխաներին ուղարկեն Շարժայի կամ Աբու Դաբիի մեկօրյա դպրոց: Շարժայում կան ավելի շատ հայեր, քան Աբու Դաբիում: Իմ, ինչպես նաև մեր դիվանագիտական կորպուսի աշխատակիցների երեխաները ևս հաճախում են Աբու Դաբիի հայկական մեկօրյա դպրոց:

Համայնքի հայերի մասին կարող եմ ասել, որ գոյություն ունի մի տեսակ վերապահում այն հարցերում, որոնք առնչվում են Հայաստանի հետ: Չեմ կարող հաստատապես ասել, բայց կարծես տարբերություններ կան մտածելակերպի, վերաբերմունքի և կողմնորոշման հարցում, որոնք որոշակի խոչընդոտներ են ստեղծում Սփյուռքի հայերի և հայաստանցիների միջև ինտեգրման գործընթացում:

Հայաստան-Սփյուռք հայտնի համաժողովներն ու մի շարք այլ միջոցառումները նպատակ ունեն միավորել ազգի երկու հատվածները՝ Հայաստանն ու Սփյուռքը և ընդհանուր հարթություն գտնել՝ խթանելու ինտեգրման գործընթացը:

Կարող եք պատկերացնել, թե ինչ կլինի, օրինակ, եթե Հայաստանի քաղաքացիները համախմբվեն և ստեղծեն իրենց սեփական կազմակերպությունները Սփյուռքի հայկական իրողության մեջ: Սա, ցավոք, տեղի է ունենում մի շարք համայնքներում, ինչպիսին է Լոս Անջելեսը: Մյուս կողմից, ես որևէ վտանգավոր բան չեմ տեսնում հայրենասիրական կազմակերպությունների կազմավորման հարցում (կախված, իհարկե, որոշ աշխարհագրական տարածքներից), քանի դրանք ինքնամեկուսացած չեն և չեն կարող հանգեցնել հա-

մայնքի ներսում մեկուսացմանն ու «գետտոների» ստեղծմանը: Մենք ունենք այնքան շատ համահայկական հիմնախնդիրներ, որոնք պահանջում են աշխարհասփյուռ հայերի ներգրավում՝ անկախ նրանց արմատներից և ծննդյան վայրից:

Նրանք պետք է միավորվեն և իրենց տեսակետներն արտահայտեն, ինչպես նաև քննարկեն այն ուղիները, որոնք կարող են նպաստել համայնքի լավագույնս պահպանմանը:

- Արդյո՞ք դեսպանությունը մտածում է մշակութային միջոցառումների կազմակերպման մասին մոտ ապագայում:

- Շատ կարևոր են մշակութային միջոցառումները, սակայն պետք է նշեմ, որ դրանք բոլորը կախված են ֆինանսական աղբյուրներից: Մենք կարիք ունենք մեր հնագույն մշակույթն ԱՄԷ-ի լսարանին ներկայացնելուն: Այն մշակութային, մասնավորապես երաժշտական խմբերը, որոնք գալիս են Հայաստանից ԱՄԷ, պետք է հնարավորություն ունենան նաև այցելել հարևան Քուվեյթ, Քաթար և Բահրեյն՝ միևնույն ուղևորության շրջանակներում, մոտ մեկշաբաթյա շրջագայության ընթացքում: Այս տարածաշրջանի հայկական համայնքները պետք է համագործակցեն միմյանց հետ՝ օգտագործելով այդպիսի հնարավորությունները: Ես անձնապես նախընտրում եմ տեսնել մեծ թվով մասնակիցներ ունեցող մշակութային խմբերին, բայց սա կախված է ֆինանսական զգալի հնարավորությունների հետ, իսկ մեր կարողությունները սահմանափակ են: Մենք պետք է ուղիներ փնտրենք՝ այստեղ հրավիրելու մշակույթի մեր գործիչներին, ովքեր կարող են մեր մշակույթը ներկայացնել օտարազգիներին:

- Որքանո՞վ է պատրաստ դեսպանության հյուպատոսական բաժինը քաղաքացիներին և ոչ քաղաքացիներին ծառայություններ մատուցելու գործում:

- Դեսպանությունում կա հատուկ բաժին հյուպատոսական գործերով զբաղվող, որը տրամադրում է ամբողջական հյուպատոսական ծառայություններ: Այն մուտքի վիզաներ է տրամադրում օտարերկրացիներին և քայլեր է ձեռնարկում ԱՄԷ-ում Հայաստանի քաղաքացիների շահերը պաշտպանելու ուղղությամբ: Այն ներառում է նաև իրավաբանական ծառայություններ, ինչպես օրինակ քաղաքացիներին լիազորագրերի տրամադրում, անձնագրերի նորոգում և այլն: Կարող ենք փաստել Սփյուռքի մեր հայրենակիցների աճող հետաքրքրությունը հատուկ կարգավիճակի անձնագրերի ստացման հարցում (հայկական անձնագիր այլ երկրների քաղաքացիների համար), որոնք արվում են դեսպանության միջոցով:

Մենք նաև հյուպատոսական օգնություն ենք տրամադրում այլ երկրների քաղաքացի հանդիսացող հայերին:

Աբու Դաբին երկրի մայրաքաղաքն է, և դեսպանությունը տեղակայված է այստեղ, սակայն հայերի մեծամասնությունը, և հատկապես ՀՀ քաղաքացիները, բնակվում են Դուբայում, Շարժայում և Հյուսիսային էմիրություններում: Մենք պետք է ներդնենք «շարժական» հյուպատոսական ծառայություններ և փորձենք արդյունավետորեն ծառայել այդ անձանց:

Ես ցանկանում եմ կրկնել, որ կան շատ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում և մեր միջոցները երբեմն բավարար չեն և մենք մեր ծառայություններն ընդլայնելու կարիք ունենք: Այդուհանդերձ, մենք կարող ենք ասել, որ հասել ենք զգալի հաջողությունների:

- Ի՞նչ եք զգում, երբ հասկանում եք, որ դեսպանությունը զգալի աշխատանք ունի անելու մոտ ապագայում:

- Հույս ունենք, որ մենք հաջողության կհասնենք և դա կանենք նաև համայնքի օգնությամբ: Չպետք է մոռանանք, որ ավելի քան 3000 հայեր են ապրում այս երկրում, ովքեր այստեղ հաստատվել են դժվարություններից դրդված և աշխատանք գտնելու անհրաժեշտությունից: Ցանկանում եմ օգտագործել այս հնարավորությունը՝ ընդգծելու, որ դեսպանության դռները միշտ բաց են բոլորի համար: Մենք պատրաստ ենք աջակցություն ցույց տալ, տարաբնույթ տեղեկատվություն տրամադրել Հայաստանում ընթացող գործընթացների մասին: Հավատացեք, մեր հայրենակիցներից շատերը տեղեկատվություն չունեն ՀՀ-ում տեղի ունեցող զարգացումների մասին:

Դեսպանությունը կարող է այդպիսի տեղեկատվության լավագույն աղբյուրը լինել: Իհարկե, ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և գլոբալիզացիայի պայմաններում շատ դյուրին է տեղեկատվություն ունենալ աշխարհի յուրաքանչյուր անկյունում տեղի ունեցող զարգա-

ցումներից, սակայն իրական տեղեկատվությունը ՀՀ-ի մասին կարող է լինել մեզանից:

Մենք պատարաստ ենք խորհրդատվություն տրամադրել այնպիսի հարցերում, ինչպիսին են՝ Հայաստանում վերահաստատվելը, այնտեղ բիզնես հիմնելը, ներդրումներ իրականացնելը և այլն: Մենք պատրաստ ենք հարմար գործընկերներ գտնել ձեզ համար, որոնց հետ դուք կարող եք համագործակցություն սկսել: Դեսպանություն այցելելով դուք կզգաք հայրենիքի ջերմությունը: Այն գործում է թափանցիկ՝ առանց միջամտելու ներհամայնքային հիմնահարցերին:

Դեսպանության գործունեությունը բավական տարբեր է: Ես կուզեի, որ հասկանային, որ դեսպանությունը չի կարող համարվել համայնքային կառույց: Շատերն այդպես են կարծում, ինչը շատ հեռու է իրականությունից: Դեսպանությունը մեր երկրի ներկայացուցիչն է և հայրենիքի մի մասն օտար հողում: Մենք պատրաստ ենք համագործակցել Սփյուռքի մեր հայրենակիցների հետ բոլոր ոլորտներում: Մենք պատրաստ ենք աջակցություն ցույց տալ մեր իրավասությունների շրջանակներում: Մենք ևս ապրում ենք հայրենքից դուրս, սակայն բարեկամական երկրում և բաց ենք բոլորի համար:

6. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ՖԱԴԵՅ ՉԱՐՉՕՂԼՅԱՆԻ ՀԵՏ[145]

2010 թ. մարտի 29-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով՝ Ֆադեյ Չարչօղլյանը նշանակվեց Քուվեյթում ՀՀ դեսպան, նստավայրը՝ էլ-Քուվեյթ: 2010 թ. հունիսի 1-ին դեսպան Չարչօղլյանն իր հավատարմագրերը հանձնեց Քուվեյթի էմիր շեյխ Սաբահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբար Ալ-Սաբահին:

[145] Interview with the First Ambassador of Armenia to Kuwait Fadey Charchoghlyan, 31 July, 2010, ըստ http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734ashh67:

- Դուք նշանակվել եք Քուվեյթում ՀՀ առաջին դեսպան: Կպատմեք՝ ինչպե՞ս որոշվեց դեսպան ունենալ այստեղ:

- Երբ նախագահ Սերժ Սարգսյանը 2009 թ. նոյեմբերին այցելեց Քուվեյթ և հանդիպեց էմիրի հետ, նա անձնապես համոզվեց, թե ինչ ջերմ վերաբերմունք ունի Քուվեյթի կառավարությունը Հայաստանի և հայերի նկատմամբ: Այս այցելությունից հետո որոշում կայացվեց այստեղ դեսպանություն բացելու մասին: Մինչ այդ ԱՄԷ-ում մեր դեսպանը նաև պաշտոնավարում էր Քուվեյթում:

Դեսպանության բացման որոշումից սկսած՝ Քուվեյթի կառավարությունը տրամադրեց տարածք, տրանսպորտ և այլն: Սա մեծապես հեշտացրեց մեր աշխատանքը: Մենք շնորհակալ ենք Քուվեյթի կառավարությանն աջակցության և ուշադրության համար: Իրոք, դժվար է նոր դեսպանության աշխատանքի կազմակերպումը:

Չնայած մենք ինչ-որ չափով ուշացրինք Քուվեյթում դեսպանության բացումը, սակայն այժմ կարող ենք արագ քայլերով առաջ գնալ: Դեսպանության բացումը խթանեց երկկողմ հարաբերությունների սերտացմանը: Օրինակ, 2010 թ. հունիսին Քուվեյթի ֆինանսների նախարար Մուստաֆա Ալ-Շիմալին այցելեց Հայաստան, որի արդյունքում ստորագրվեց համաձայնագիր երկու երկրների միջև ներդրումների խրախուսման և երկկողմ աջակցության վերաբերյալ:

Դեսպանությունը սկսեց գործել 2010 թ. հունիսից, սակայն պաշտոնական բացումը տեղի ունեցավ ավելի ուշ: Արաբական աշխարհում ներկայացումս մենք դեսպանություններ ունենք Կահիրեում, Բեյրութում, Դամասկոսում, Աբու Դաբիում և էլ-Քուվեյթում, ինչպես նաև Գլխավոր հյուպատոսություն՝ Հալեպում:

- Ինչպե՞ս եք գնահատում այս քայլը, և ինչպիսի՞ն են Հայաստանի և Քուվեյթի միջև հարաբերությունների հեռանկարները:

- Մեր ներկայությունը Քուվեյթում ունի զգալի քաղաքական և տնտեսական նշանակություն ՀՀ-ի համար: Մենք Քուվեյթը համարում ենք բարեկամ երկիր և պատրաստվում ենք սերտորեն համագործակցել քուվեյթցիների հետ: Դեսպանությունը կոչված է հեշտացնել այս գործընթացը:

2009 թ. ՀՀ նախագահի այցելության ընթացքում համագործակցության մի քանի համաձայնագրեր ստորագրվեցին երկու կողմերի միջև, որոնք ներառում էին մշակույթի, զբոսաշրջության, գյուղատնտեսության և մաքսային ոլորտները:

Կան մի քանի տնտեսական, մշակութային, ֆինանսական և այլ ծրագրեր, որոնք պետք է իրականացվեն: Ընդգծեմ, որ երկու կողմերը միևնույն տեսակետն ունեն մի շարք ասպեկտներում: Նշեմ նաև, որ երկու երկրներն էլ նույն ընդարձակ աշխարհագրական տարածաշրջանի մաս են, և լուրջ պատճառներ կան միմյանց հետ համագործակցելու և խորհրդակցելու համար:

- Հայաստանից ժամանած պաշտոնյաներից հաճախ լսում ենք, որ արաբական երկրների հետ քաղաքական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա, բայց տնտեսական համագործակցություն կամ չկա, կամ ցածր մակարդակի վրա է: Արդյո՞ք ՀՀ ԱԳՆ նախատեսում է զարգացնել տնտեսական գործոնն այս երկրների հետ հարաբերություններում:

- Դժբախտաբար Արաբական աշխարհի հետ տնտեսական և առևտրային հարաբերությունները շատ հեռու են մեր սպասվածից: Առաջնահերթությունը տրվում է քաղաքական գործոնին, քանի որ մենք ժամանակի մեծ մասն այս երկրների հետ հարաբերություններում անցկացնում են հայկական հիմնախնդիրների, ներառյալ նաև Ղարաբաղյան հիմնախնդրի մասին ճիշտ տեղեկատվություն տրամադրելու վրա: Այդուհանդերձ, Հայաստանը զգալի ներուժ ունի շատ ոլորտներում, ինչպես, օրինակ՝ բժշկություն, քիմիա, կրթություն և այլն: Մենք կարիք ունենք ներդրումային հնարավորությունների ստեղծման՝ վերոնշված ոլորտներում: Քուվեյթցիները նշում են, որ իրանք պատրաստ են մասնակցել լավ մշակված ծրագրերին Հայաստանում: Ես լավատես եմ այս հարցում:

- Արդյո՞ք Քուվեյթի վրա ազդեցություն ունենում է այն բացասական քարոզչությունը Հայաստանի և հայերի վերաբերյալ, հատկապես ԻԿԿ (Իսլամական կոնֆերանս կազմակերպության՝ ներկայումս Իսլամական համերաշխության կազմակերպություն) շրջանակներում, որ իրականացնում են թուրքերն ու ադրբեջանցիները:

- Մենք աշխատում ենք ԻԿԿ-ի ուղղությամբ: Դժբախտաբար 1993 թ.-ից սկսած՝ ԻԿԿ-ն Հայաստանը համարում է ագրեսոր և Ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկում է կրոնական տեսանկյունից, ինչը ճիշտ չէ: Մենք Քուվեյթին և այլ իսլամական պետություններին ի ցույց ենք դնում, որ հակամարտությունը որևէ կապ չունի կրոնականի հետ:

Մենք հրաշալի հարաբերություններ ունենք շատ իսլամական երկրների հետ, հարյուր հազարավոր հայեր են ապրում իսլամական երկրներում, և նրանք՝ առանց որևէ հակասության, ինտեգրված են տեղական հասարակություններում:

Որոշ հաստատություններ, որ գործում են Քուվեյթում և աշխատում են իսլամական համերաշխության սկզբունքով, պարբերաբար հրավիրվում են Ադրբեջան, որտեղ նրանց մատուցվում է հայերի պատմության վերաբերյալ կեղծ տեղեկատվություն: Ինչպե՞ս այս փաստին հակազդել:

Մենք տեղեկացված ենք ադրբեջանցիների այսպիսի քարոզչության մասին, և թե ինչպես են նրանք օգտագործում իսլամական հաստատությունները: Քուվեյթում Ադրբեջանի դեսպանը նույնպես շատ ակտիվ է այս ոլորտում և հակահայկական զգալի քարոզչություն է իրականացնում: Օրինակ, նա կազմակերպում է ցուցահանդեսներ, որոնցում հայերին ի ցույց է դնում բացասական տեսանկյունից: Նա հարցազրույցներ է տալիս տեղական ԶԼՄ-ներին, որոնցում անհիմն մեղադրանքներ է ներկայացնում հայերի հասցեին: Կարծում եմ, որ այսպիսի հակաքարոզչությունը դիվանագիտական չէ և Ադրբեջանին դնում է անհարմար վիճակի մեջ: Մենք շատ ակտիվ աշխատում ենք քուվեյթցիների հետ՝ ցույց տալով, որ հակամարտությունը կրոնական երանգ չունի: Այժմ, երբ այստեղ ունենք դեսպանություն, այդ աշխատանքն ավելի դյուրին կլինի իրականացնել:

Ադրբեջանի դեսպանը սիրում է Ղարաբաղյան հակամարտությունը համեմատել Իրաքի Քուվեյթ ներխուժման հետ, սակայն նա մոռանում է, որ Ղարաբաղի հարցում ագրեսորն Ադրբեջանն է, և հայերը ինքնապաշտպանության են դիմել: Բարեբախտաբար Քուվեյթի իշխանությունները տեղեկացված են, որ Ղարաբաղյան հակամարտությունը չունի կրոնական բնույթ, քանի որ Հայաստանը գերազանց հարաբերություններ ունի արաբական և իսլամական երկրների մեծ մասի

հետ: Տասնյակ հազարավոր հայեր են ապրում իսլամական հասարակություններում՝ խաղաղության և հանդարտ մթնոլորտում: Քուվեյթը վստահ է, որ Հայաստանը փորձում է Ղարաբաղյան հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով:

- Արդյո՞ք դուք աշխատում եք Հայաստանի և Քուվեյթի միջև ուղիղ օդային հաղորդակցություն հաստատելու ուղղությամբ:

- Ես հենց սկզբից աշխատում եմ այդ ուղղությամբ: Ես այդ մասին խոսել եմ նաև Երևանում ավիացիայի պատասխանատու պաշտոնյաների հետ, և այս ուղղությամբ կա նաև նախագահականի հանձնարարականը՝ ուսումնասիրել ուղիղ չվերթների հնարավորությունը: Սակայն կա դժվարություն, քանի որ Քուվեյթի և Հայաստանի միջև գործարար հարաբերություններն այդքան էլ զարգացած չեն: Եվս մեկ պատճառ է այն հանգամանքը, որ Քուվեյթը շահութաբեր զբոսաշրջիկության ուղղություն չէ, ինչպես, օրինակ՝ Դուբայը:

Հնարավորություն կա «Արմավիայի» չվերթներից մեկը դեպի Դուբայ իրականացնել Քուվեյթով: Եթե բեռնափոխադրման գործոնն արդարացված լինի, ապա «Արմավիան» Քուվեյթը ևս կներառի իր չվերթերի ցանկում: Քուվեյթ-Երևան ուղղությունը կարող է ծառայել նաև ԱՊՀ այլ երկրներ մեկնողների համար:

- Ո՞վ է ձեզ օգնում դեսպանության աշխատանքներում:

- Դեսպանատանը՝ որպես առաջին քարտուղար և հյուպատոսական բաժնի պատասխանատու, աշխատում է Արմեն Սարգսյանը, ով արաբագետ է և արդեն աշխատել է Աբու Դաբիի մեր դեսպանատանը:

- Քուվեյթի հայ համայնքն ունի 50 տարվա պատմություն: Ինչպիսի՞ն են ձեր տպավորությունները տեղի հայ համայնքից:

- Ես որոշակի պատկերացում ունեի համայնքի մասին, սակայն շատ շոյված եմ՝ տեսնելով, թե հայերը որքան նվիրված են իրենց ավանդական և ազգային արժեքներին: Նրանք շատ շահագրգռված են իրենց երեխաների հայեցի դաստիարակության հարցում՝ պահպանելով դպրոցն ու եկեղեցին:

Ես պաշտոնական և ոչ պաշտոնական շփումներ ունեմ Քուվեյթի հայկական մարմինների և անհատների հետ և այցելում եմ երկու հաստատություններն էլ՝ դպրոց և եկեղեցի և

տպավորված եմ, թե որքան կայացած է Քուվեյթում հայ համայնքը: Մասնավորապես, հաճելի է տեսնել, թե հայ աշակերտները հայկական դպրոցում ինչպես են սովորում հայոց լեզու, հայ գրականություն և պատմություն:

Ես հանդիպել եմ նաև համայնքի խորհրդի և Քուվեյթում հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Իմ տպավորությունները շատ դրական են: Ես հաճախ զանգեր եմ ստանում Քուվեյթի հայերից, որոնք առաջարկում են իրենց աջակցությունը դեսպանությանը: Սա շատ ոգևորող է: Համայնքում շատ հպարտ են, որ հայկական դրոշը բարձրացել է Քուվեյթում: Դեսպանատան դռները բաց են բոլորի առջև, և ես անձնապես պատրաստ եմ հանդիպել յուրաքանչյուրի հետ, ով ցանկանում է՝ անկախ հասարակությունում նրա զբաղեցրած դիրքից և քաղաքական հայացքներից:

Ես տեսնում եմ, որ համայնքը կարծես մեկ մեծ ընտանիք լինի: Մինչ այժմ քուվեյթցիները հայերին ճանաչում էին որպես համայնք, իսկ այժմ նրանք տեսնում եմ, որ այն ունի նաև պետություն: Դեսպանությունը պատրաստ է մեծ աջակցություն ցույց տալ յուրաքանչյուրին: Դեսպանության դրոշի բարձրացման արարողությունը շատ հուզիչ էր համայնքի համար ևս:

- Սփյուռքի հայերի համար քաղաքացիության դիմումաձևերն արդյո՞ք հասանելի են դեսպանությունում:

- Այո, դեսպանությունն արդեն ընդունում է դիմումները: Քուվեյթի հայերին նախկինում սպասարկում էր Աբու Դաբիի դեսպանությունը, սակայն այս փաստը որոշակի անհարմարություններ էր ստեղծում՝ կապված հեռավորության հետ: Սակայն սա արդեն դյուրին է իրականացնել, քանի որ ապագա քաղաքացիները կարող են դիմել Քուվեյթում ՀՀ դեսպանություն[146]:

[146] Քուվեյթում ՀՀ դեսպանությունը գտնվում է Ջաբրիյա թաղամասում, որը Հաուալի վարչական շրջանի թաղամասերից մեկն է: Այն էլ-Քուվեյթի ամենահարմարավետ թաղամասերից է, որը լավագույս կապված է մայրուղիների հետ: Այս թաղամասում են գտնվում այլ դեսպանություններ ևս:

7. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՔՈՒՎԵՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏՈՐ ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

- Հարգարժան դոկտոր Մանուկյան, դուք ծնունդով հալեպցի եք: Ե՞րբ և ի՞նչ շարժառիթներից ելնելով հաստատվեցիք Քուվեյթում: Ո՞ր թվականից եք ստանձնել Քուվեյթի Ազգային վարժարանի տնօրինությունը:

- 2005 թ. ինձ վստահվեց Քուվեյթի Ազգային վարժարանի տնօրինությունը, այդ պատճառով էլ 2005-ից հաստատվեցի Քուվեյթում և մինչ օրս զբաղեցնում եմ Ազգային վարժարանի տնօրենի պաշտոնը:

- Ե՞րբ է հիմնադրվել Ազգային վարժարանն և ովքե՞ր են կանգնած եղել դրա հիմնադրման ակունքներում:

- Ազգային վարժարանը հիմնադրվել է 1960 թ.: Հիմնադրման ակունքներում կանգնած են եղել Երվանդ Թերզյանը, Հարություն Սահակյանը, Գրիգոր Պարիկյանը, Միհրան Զաքարյանը, Պողոս Հովակիմյանը, Հովսեփ Աքլյանը, Աբրահամ Գազանճյանը, Հայրապետ Հայրապետյանը, Վարդան Գարակեոզյանը, Կարապետ Թոփալյանը, Տիգրան Մաճառյանը և Հայկ Քրիստիանյանը: Վերոնշված անձինք էլ կազմեցին վարժարանի հիմնադիր մարմինը: Դիվանը կազմվեց հետևյալ կազմով. ատենապետ՝ Երվանդ Թերզյան, ատենադպիր՝ Աբրահամ Գազանճյան, գանձապահ՝ Միհրան Զաքարյան, մնայուն քարտուղար՝ Հարություն Սահակյան: Տնօրենի պաշտոնում միաձայն նշանակվեց Հարություն Սահակյանը, ով այդ պաշտոնը վարեց միայն մեկ տարի:

- Այսօր քանի՞ աշատերտ և ի՞նչ դասարաններ ունի Ազգային վարժարանը: Համեմատության համար կարո՞ղ եք նշել 1990-ականներին և 2000-ականների սկզբին վարժարանի աշակերտության թվաքանակը:

- Վարժարանն ունի 430 աշակերտ, որոնք բաժանված են չորս բաժինների՝ մանկապարտեզ (79 աշակերտ), նախակրթարան (163 աշակերտ), միջնակարգ (119 աշակերտ) և ճեմարան (69 աշակերտ): Մինչև 1990-1991 թթ. ուսումնական տարում դպրոցի աշակերտների թիվը հասնում էր 800-ի, սակայն 1991 թ. Ծոցի պատերազմի պատճառով՝ թիվը կտրուկ նվազեց՝ հասնելով ընդհուպ 125 աշակերտի: 2000 թ.

սկզբներին թիվը հասավ 325-ի: Վերջին երեք տարիներին աշակերտության թիվը կայուն է:

- Որքա՞ն է վարժարանում այսօր ուսուցիչների թվաքանակը:

- 2012-2013 ուսումնական տարում ուսուցիչների թիվը 35 է, վարչական կազմը՝ 8՝ տնօրեն, փոխտնօրեն, մանկապարտեզի վարիչ, ընդհանուր հսկիչ, 2 քարտուղար, գանձապահ և հաշվապահ: Դպրոցն ունի նաև մնայուն հաստիքով բժիշկ: Ընդհանուր՝ 44 հոգի, որոնցից 29-ն՝ ազգությամբ հայ:

- Որպես համայնքի հայապահպանության կարևոր օղակներից մեկի՝ Ազգային վարժարանի տնօրեն, ինչպե՞ս կբնութագրեք Քուվեյթի հայ համայնքին, որն ունի շուրջ 50 տարվա պատմություն:

- Քուվեյթի հայ համայնքը բավականին լավ կազմակերպված և կենսունակ համայնք է: Ունի առաջնորդանիստ Սուրբ Վարդանանց եկեղեցի: Տեր Շահե եպիսկոպոս Փանոսյանը Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների կաթողիկոսական փոխանորդն է: Թեմը ենթարկվում է Կիլիկիո կաթողիկոսությանը: Այն ունի թեմական խորհուրդ (ընտրվում է չորս տարի ժամկետով), որը կազմված է 18 անդամներից, որոնցից 9-ը Քուվեյթից են: Բարձրագույն գործադիր մարմինն Ազգային վարչությունն է, որը տնօրինում է համայնքի կյանքը և մշակում է տարբեր կողմերի հետ պաշտոնական հարաբերությունները: Համայնքում գործում են սկաուտական, պատանեկան, երիտասարդական, բարեգործական միություններ, ինչպես նաև հայ դատի և մշակութային խմբեր և այլն:

- Ինչպիսի՞ն են հայ համայնք-պետություն հարաբերությունները: Ի՞նչ կարգավիճակ ունի հայ համայնքն այս երկրում:

- Հայ համայնք և պետություն հարաբերությունները պաշտոնական են՝ հիմնված փոխադարձ հարգանքի և գործակցության վրա: Համայնքը մեծ հարգանք է վայելում և՛ պետական շրջանակների և՛ տեղացի ժողովրդի շրջանում: Անհրաժեշտ է նշել, որ բացի արաբ տեղացի քուվեյթցիներից՝ մնացած բոլոր բնակիչները, ներառյալ հայերը, ոչ քա-

ղաքացիներ են՝ Քուվեյթի ժամանակավոր կացության արտոնագրերով: Հայերը Քուվեյթում ընդունված են որպես զանազան երկրներից եկած հայեր, որոնց պետությունը շնորհել է հայկական սփյուռքի կարգավիճակ և ճանաչում է որպես հայ համայնք:

- Ինչպիսի՞ն են հայերի շփումները քուվեյթյան հասարակության ներսում: Ի՞նչ դեր ունեն հայերն այդ երկրի հասարակական-մշակութային կյանքում:

- Հայերի շփումները հիմնականում աշխատանքային են, իսկ կենցաղային և այլ շփումները նվազագույն են: Հայերն այս երկրում ճանաչված են որպես հմուտ արհեստավորներ, իսկ վերջին տարիներին նաև զանազան ասպարեզներում՝ որպես սրտացավ, վստահելի և հավատարիմ գործընկերներ ու հմուտ մասնագետներ: Հայերն իրենց ներդրումն են ունեցել երկրի բազմակողմանի զարգացման գործում: Մշակութային կյանքը Քուվեյթում սահմանափակ է, այդ պատճառով էլ այն խիստ հարաբերական հասկացողություն է, այդուհանդերձ, Քուվեյթի հայ համայնքն ունի «Շաքե» պարախումբ, որն արդեն 6 տարի է, ինչ գործում է և ունեցել է երեք մեծ ելույթներ: Տարբեր առիթներով Քուվեյթ են հրավիրվում երգիչներ և խմբեր: Ներհամայնքային ուժերով պատրաստվել և քուվեյթահայությանը ներկայացվել են թատերական տարբեր ներկայացումներ: Հայաստան-Քուվեյթ մշակութային փոխանակման շրջանակներում արդեն ավանդական է դարձել Հայաստանի տարբեր խմբերի ելույթները «Ալ-Գուրեյն» փառատոնի շրջանակներում, որը մեծ արձագանք է գտել:

- Ինչպիսի՞ն է հայկական ինքնության մակարդակը համայնքում: Արդյո՞ք համայնքն ունի ազգապահպանման խնդիրներ:

- Ինքնության գիտակցության մակարդակը շատ բարձր է համայնքում: Խառն ամուսնությունները նվազագույն մակարդակի վրա են, անգամ աննշան են, հետևաբար ձուլման հարց կամ վտանգ ուղղակի գոյություն չունի: Այն հարյուրտոկոսանոց հայախոս համայնք է, և այդ հարցում զգալի ներդրում ունի Քուվեյթի միակ ամենօրյա վարժարանը:

-Ազգային վարժարանից բացի՝ արդյո՞ք այլ դպրոցներ ևս գործում են համայնքում:

- Քուվեյթի Ազգային վարժարանը միակն է Քուվեյթում և բավարարում է հայության պահանջներն ու սպասումները:

- Ի՞նչ դեր ունի եկեղեցին հայ համայնքի կյանքում:

- Քուվեյթի Սուրբ Վարդանանց եկեղեցին հոգևոր սնունդ մատակարարող միակ հայկական առաքելական եկեղեցին է: Եկեղեցին գլխավոր դերակատարություն ունի հայ համայնքի կյանքում և՛ հոգևոր և՛ հատկապես կազմակերպչական առումներով: Բոլոր եկեղեցական և ազգային տոները նշվում են պատշաճորեն: Յուրաքանչյուր ուրբաթ մատուցվում է սուրբ և անմահ պատարագ (Քուվեյթում կիրակի օրերն աշխատանքային են, որի փոխարենն ուրբաթ օրերին են տեղի ունենում եկեղեցական արարողությունները):

- Արդյո՞ք հայկական դավանական բոլոր շերտերն առկա են համայնքում (հայ առաքելական, կաթոլիկ, ավետարանական և այլն), և ինչպիսի՞ն են նրանց միջև հարաբերությունները: Վարժարանում ուսանող աշակերտների շարքում կան, արդյո՞ք, հայ կաթոլիկներ և ավետարանականներ:

- Հայկական դավանական բոլոր շերտերն էլ առկա են համայնքում: Ճնշող մեծամասնություն են կազմում հայ առաքելականները (95%), հաջորդը հայ կաթոլիկներն են և բավականին փոքրաթիվ են (մի քանի ընտանիքներ) հայ ավետարանականները: Անհրաժեշտ է նշել, որ, հավանաբար, Սուրբ Վարդանանց եկեղեցին այն միակն է, որտեղ հայ ժողովրդի բոլոր զավակները՝ առանց դավանական տարբերությունների, աղոթում են նույն խորանի առջև:

Ինչ հարաբերակցություն, որ գոյություն ունի երեք դավանական խմբերին պատկանողների միջև, նույն թվաքանակն էլ կրկնվում է աշակերտների թվի հետ կապված: Աշակերտների մոտ 95%-ը հայ առաքելականներ են, 5%-ը հայ կաթոլիկներ են, մնացածը՝ հայ ավետարանականներ: Այս տոկոսները, սակայն, մոտավոր են:

- Ի՞նչպիսին են հարաբերությունները համայնքի ներսում շատ ավելի վաղ Մերձավոր Արևելքի այլ երկրներից հաստատված հայերի և վերջին շրջանում, հատկապես Հայաստանից հաստատվածների միջև: Արդյո՞ք Հայաստանից հաստատված աշակերտներ ևս ուսանում են վարժարանում:

- Քուվեյթի համայնքի մեծ մասը սիրիահայեր են, որի զգալի հաստվածն էլ հալեպահայեր են: Թվաքանակով երկրորդը լիբանանահայերն են, այնուհետև՝ պարսկահայերը: 1991 թ. Ծոցի պատերազմից հետո պարսկահայերի թվաքանակը զգալիորեն նվազեց: Քուվեյթում Հայաստանից հաստատվածների թիվը շատ փոքր է (20 մարդ), այդ իսկ պատճառով նման հարաբերություններ գոյություն չունեն: Քուվեյթի հայության թիվը մոտավորապես 4000 է:

- Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ այսօր Սիրիայում տեղի ունեցող գործընթացները քուվեյթահայության համար: Կա արդյո՞ք սիրիահայերի հոսք դեպի Քուվեյթ:

- Սիրիական ճգնաժամի հետևանքով սիրիահայերի մեծ հոսք դեպի Քուվեյթ չի կարող լինել, ինչը կապված է Քուվեյթի խիստ օրենքների հետ՝ հատկապես սիրիացիների նկատմամբ: Մինչ օրս 9 ընտանիք է տեղափոխվել Սիրիայից (14 աշակերտ) և բոլորն էլ երկքաղաքացիներ են: Այս թիվը կարող է ավելանալ, բայց այն չի կարող վերածվել մեծ ներհոսքի: Իսկ տնտեսական առումով սիրիացի քուվեյթահայերը մեծ կորուստներ են կրել և դեռևս կկրեն, քանի որ և՛ անշարժ գույքի և՛ ներդրումների առումով վնասները մեծ են:

- Ի՞նչպիսին են հարաբերությունները ՀՀ դեսպանության և քուվեյթահայ համայնքի միջև:

- Հարաբերությունները գերազանց են պաշտոնական և փոխգործակցության բոլոր ոլորտներում էլ:

- Առկա է, արդյո՞ք, համագործակցություն Հայաստանի հետ, մասնավորապես կրթական ծրագրերի համակարգման, հայրենիքից դասագրքերի տրամադրման, ուսուցչական կադրերի պատրաստման հարցերում:

- Քուվեյթի Ազգային վարժարանի կրթական ծրագիրը Քուվեյթի պետական կրթական ծրագիրն է: Որդեգրել ենք պետական ծրագիրը: Հայոց լեզու, հայ գրականություն և կրոն առարկաները դասավանդվում են Բերիո թեմի (Հալեպ), հայոց պատմությունը՝ Արևմտյան Ամերիկայի ծրագրերով: Ուսուցչական կադրերի վերապատրաստման առումով (հայ) օգտվում ենք Հայաստանի կազմակերպած վերապատրաստման դասընթացներից:

8. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԱԶԱՏ-ՀԱՅ» ՄԻՁԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԿԱՅՔԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԽՄԲԱԳԻՐ, ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀՐԱՉ ՔԱԼՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում եմ ներկայացեք: Ե՞րբ եք հաստատվել Արաբական Միացյալ Էմիրություններում: Որտեղի՞ց եք արմատներով:

- Ես Հրաչ Քալսահակյանն եմ, արմատներով սիրիահայ եմ՝ քեսաբցի հոր և ուրֆացի մոր զավակ: Հայրս՝ Հակոբ Սահակյանը, եղել է հայտնի կրթական գործիչ, որ դասավանդել է Միջին Արևելքի զանազան համայնքներում և սերունդներ է դաստիարակել: Հալեպի Քարեն Եփփե ճեմարանն ավարտելուց հետո Հունաստանում ուսանել եմ զբոսաշրջության կառավարում: 2003-ին դարձել եմ Սիրիայի գրողների միության անդամ: Արաբերենի եմ թարգմանել և հրատարակել Անդրանիկ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ», Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական Ճանապարհի վրա» և այլ գործեր: Ունեմ ծավալուն ձեռնարկ հայերեն լեզուն արաբախոսներին սովորեցնելու համար: 1998-ից ի վեր հաստատվել եմ էմիրություններում, ուր 2003-ին հիմնել եմ Ազատ-հայ լրատվական կայքը, որ զբաղվում է Միջին Արևելքի հայության հիմնահարցերով:

- Ի՞նչ գործոնների հետ էր կապված հայ համայնքային կյանքի կազմակերպումն ու ձևավորումն Արաբական Միացյալ Էմիրություններում:

- Սկզբնական շրջանում ամուրիներ էին գալիս էմիրություններ, իսկ հետո սկսեցին ընտանիքներ էլ հաստատվել, որի հետևանքով նոր սերնդի հայապահպանման խնդիրը հրատապ դարձավ: 1980-ական թվականների սկզբին Կիլիկոյ կաթողիկոսության ներկայացուցիչն այցելեց Քուվեյթ և ԱՄԷ: Արդյունքու 1990-ականների սկզբին էմիրությունները ընդգրկվեց Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների թեմական կառույցի մեջ: Որոշ ժամանակ անց վավերացվեց մի կանոնադրություն, որ հիմնված է պատմական ազգային սահմանադրության վրա: 1994 թ. կայացան թեմական առաջին ընտրությունները, որի արդյունքում ձևավորվեց 18 ան-

դամից բաղկացած թեմական մարմինը: 1998 թ. տեղի էմիրի նվիրաբերած հողատարածքի վրա Շարժայի՝ եկեղեցիներով հարուստ արվարձաններից մեկում կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և նրա հարակից վարչական ու կրթական համալիրը:

- Ո՞ր երկրներից ներգաղթածներն են համալրել համայնքը:

- ԱՄԷ-ում հաստատված հայերի մեծ մասը եկել է արաբական երկրներից, հատկապես Սիրիայից և Լիբանանից, նաև Եգիպտոսից, Իրանից, Հորդանանից և այլն: Եվրոպայից և Ամերիկայից եկողներն ընդհանրապես Միջին Արևելքից գաղթածների սերունդներն են, որոնք դեռ սովորություն ունեն հայկական միջավայրի հետ կապ պահել: Վերջին տասը տարիներին զգալի է նաև Հայաստանից եկած անհատների թվի աճը:

- Ո՞րքան է հայության թիվը ԱՄԷ-ում այսօր: Սոցիալական ի՞նչ կառուցվածք ունի հայ համայնքը:

- Հայության թիվը հավանաբար տարուբերվում է չորսից հինգ հազարի միջև: Գաղութն ունի զգալի թվային շարժունակություն, այսինքն՝ շատերը մեկնում են և շատերը ժամանում: Քուվեյթի և Ծոցի երկրների թեմական կանոնադրության մեջ նշված է, որ թեմի մաս են կազմում հայ եկեղեցու բոլոր զավակները, որպեսզի կարկինը լայն բացվի և բոլորը ներգրավվեն: Համայնքի սոցիալական, տնտեսական և այլ շերտերի միջև զգալի տարբերություններ կան:

- Ի՞նչ ազգային կառույցներ կան ԱՄԷ-ում, և որտե՞ղ են դրանք գտնվում: Որքանո՞վ է արդյունավետ նրանց գործունեությունը: Ի՞նչ խնդիրներ կան այդ ոլորտում:

- Շարժայում 1998 թվականից ի վեր գործում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և հարակից վարչական և կրթական կենտրոնը, որ ունի նաև սրահ: Սա էմիրութիւնների միակ հայկական կառույցն է: Ներկայումս աշխատանք է տարվում Աբու Դաբիում նմանատիպ մի կառույց ստեղծել տեղի հինգ-վեց հարյուր հայերի համար: Ծրագիրը ծախսաշատ է, և շատերի համար հարցական է, թե նման ծախս պե՞տք է կատարվի այս օրերին, երբ Միջին Արևելքի համայքների վիճակն այնքան էլ կայուն չէ: Աբու Դաբիի իշխանութիւններին նվեր տրված հողաշերտը քաղաքի կետրոնից շատ հեռու է և ավելի մոտ է արհեստավորական շուկաներին: Ամեն պարագայում, կարծես որոշված է այդ եկեղեցին (որ կոչվելու է Սուրբ Նահատակաց) անպայման կառուցել մինչև 2015 թ., որպեսզի հնարավոր լինի Ցեղասպանության հարյուրամյակի միջոցառումների կարգին դասել:

Ազգային կառույցները գործում են աշխուժորեն, բայց շատ նեղ շրջանակում: Շատերը գաղութի հավաքներին և միջոցառումներին չեն մասնակցում: Մարդիկ դժգոհ են, քանի որ ազգային իշխանությունների մաս են կազմում տասնամյակներ շարունակ նույն պաշտոնը զբաղեցնող մարդիկ: Ավելի տխուր է թեմական ընտրությունների պատկերը, ուր հայության հազիվ երեք տոկոսն է, որ մասնակցում է և գրեթե նույն անձանց է ընտրում: Թեմականները փորձում են իրենց իմացության սահմաններում դիմագրավել արդի մարտահրավերները, բայց թափանցիկության համատարած բացակայության պատճառով՝ կարող եմ ասել, որ դոփում են նույն տեղում: Թեմական ժողովների տարեկան եզրափակիչ հայտարարություններում նույն տեքստերն են օգտագործվում, և միայն թվականներն են փոփոխվում: Բավական է նշել, որ 12 տարի առաջ համայնքի կանոնադրության մեջ փոփոխություններ իրականացնելու նպատակով հանձնախումբ կազմվեց, որի անդամներից շատերն արդեն մեկնել էին երկրից: Այդպես էլ հնարավոր չեղավ պարզել, թե նրանց գործն ուր է հասել:

- Հայության քանի՞ տոկոսն է ներգրավված ազգային կյանքում: Ինչպիսի՞ն է համայնքային կյանքից դուրս գտնվողների պարագան:

- Հայության շատ փոքր, թերևս հինգ տոկոսն է ներգրավված ազգային կյանքում, իսկ ամենամյա մեծ խնջույքին կարելի է հանդիպել մոտավորապես հինգ հարյուր հոգու, որ կազմում է գաղութի 10-15 տոկոսը: 2011-ի թեմական ընտրություններին միայն ութսուն ձայնով հնարավոր եղավ ընտրվել: Համայնքային կյանքից դուրս գտնվողներից շատերի համար մեր խմբագրած «Ազատ-հայ» կայքը ծառայում է որպես տեղեկատվության աղբյուր, օգնում կազմակերպել ընկերային հավաքներ:

- Ի՞նչ դեր ունի եկեղեցին հայ համայնքի կյանքում:

- Նախ եկեղեցին (և հարակից համալիրը) կարևոր դեր ունի որպես հավաքատեղի: Շարժայի եկեղեցին ունի իր մնայուն քահանան, որ էմիրությունների հոգևոր հովիվն է 1998-ից ի վեր: Տեր Արամ քահանա Տեյիրմենճյանը երիտասարդ ուժ է, որ ճշտապահությամբ և հետևողականորեն կատարում է եկեղեցական արարողությունները և հոգում գաղութի հոգևոր կարիքները՝ թաղական մարմնի աջակցությամբ: Ամեն պարագայում, եկեղեցին կարող է շատ ավելի լայն դերակատարություն ունենալ գաղութի կյանքում: Ինչ վերաբերում է Աբու Դաբիի հայությանը, ապա այնտեղ օգտագործվում են այլ եկեղեցիների տարածքներ սուրբ պատարագի և այլ արարողությունների համար: Տեր Արամը ծառայում է նաև այդ քաղաքի հայությանը, ինչպես նաև Քաթարի նորաստեղծ հայ համայնքին, որ հաշվվում է մոտ հինգ հարյուր անձ:

- Ի՞նչ վիճակում է կրթական և մշակութային կյանքը ԱՄԷ-ի հայ համայնքում:

- Կրթական կյանքը ձևավորվում է Շարժայի և Աբու Դաբիի երկու միօրյա վարժարանների շուրջը: Շարժայի Օհաննեսյան վարժարանը բնականաբար ավելի կայուն և շահեկան վիճակում է, քանի որ ունի մնայուն շենք և հարյուր վաթսունից ավել աշակերտություն՝ մանկապարտեզից մինչև ինները դասարան: Աբու Դաբիի վարժարանը դեռ սեփական շենք չունի, իսկ աշակերտների թիվը երեսունից պակաս է: Երկու վարժարաններն էլ ունեն ոչ արհեստավարժ ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք կամավոր կերպով փորձում են տարրական գիտելիքներ փոխանցել աշակերտներին:

Ինչ վերաբերում է մշակութային կյանքին, ապա այն փորձում են իրականություն դարձնել Աբու Դաբիում և Դուբայում գործող ազգային վարչությունները՝ ամեն տարի կազմակերպելով մշակութային միջոցառումներ, իսկ ազգային տոների կապակցությամբ հրավիրելով արվեստի և մշակույթի գործիչներ: Վերջերս էմիրություններում Համազգայինի նոր մասնաճյուղ հիմնվեց, որը սկսեց կազմակերպել գրական հավաքներ:

Կարևոր է նշել, որ 1989-2009 թթ. էմիրութիուններում գործել է Հայկական մշակութային ընկերակցությունը, որի շնորհիվ հարյուրավոր հայ արվեստագետներ են հրավիրվել

Հայաստանից: Այն էականորեն նպաստել է հայ-էմիրաթական մշակութային կապերի ամրապնդմանը: Ներկայումս հրատարակության է պատրաստ այդ ընկերակցության քսանամյա գործունեության հուշամատյանը:

- Ի՞նչ խնդիրներ կան հայկական ինքնության հարցում: Որքանո՞վ են հայախոս ԱՄԷ-ում ապրող հայերը: Որքանո՞վ է կիրառվում հայերենը: Ի՞նչ վտանգներ կան հայկական ինքնության պահպանման հարցում:

- Ինչպես գիտեք, ընտանիքների մեծ մասն այստեղ Միջին Արևելքի հայկական գաղութներից են, որի շնորհիվ հայախոսությունը դեռ շոշափելի է մեր գաղութում, չնայած շատ հայ երեխաներ իրար հետ անգլերեն են խոսում: Կարող ենք ասել, որ հայկական միջոցառումներին մասնակցողների մեծ տոկոսը հայախոս է: Ոչ հայախոսների լայն շերտ կա, որ ի սկզբանե չի մասնակցել գաղութային կյանքին: Եվ համայնքի պատասխանատուների կողմից էլ աշխատանք չի տարվել նրանց ներգրավվելու համար:

Հայկական ինքնությունն այս կամ այն ձևով պահպանվում է մանավանդ, եթե նկատի ունենանք, որ էմիրությունները ոչ քրիստոնեական միջավայր է: Հայկական ինքնության պահպանման ամենակարևոր գործոնը կապված է այն իրողության հետ, որ երկիրը քաղաքացիություն չի շնորհում օտարներին: Հայերն ի վերջո կամ պետք է վերադառնան Միջին Արևելք կամ Հայաստան և կամ էլ որևէ այլ երկիր:

- Որքանո՞վ են ինտեգրված հայերն ԱՄԷ-ում: Իրավական ի՞նչ կարգավիճակ և ի՞նչ իրավունքներ ունեն նրանք այդ երկրում:

- էմիրությունների համակարգը ստեղծված է օտարների ժամանակավոր կացության համակարգի վրա, որ գործում է «երաշխավորության» (sponsorship) սկզբունքով: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր օտարի ներկայությունը երաշխավորված է տեղացու կողմից: Կան տեղացիներ, որ ունեն հարյուրավոր կամ հազարավոր երաշխավորված աշխատողներ: Այն պահից, երբ երաշխավորությունը դադարում է, անձը պարտավոր է մեկ ամսից երկրից դուրս գալ կամ նոր երաշխավոր գտնել, եթե նախկին երաշխավորը թույլ տա նման քայլ: Կախվածության այս մթնոլորտում հնարավոր չէ խոսել ինտեգրվելու մասին, մանավանդ որ երկիրը չի շնորհում քա-

ղաքացիություն: Մեկ օրվա և երեսուն տարվա կեցություն ունեցողը նույն իրավունքներն ունի: Ամեն պարագայում՝ որպես օտարազգի աշխատողներ (expat), հայերն ունեն բոլոր այն իրավունքները, ինչ մյուսները: Տնտեսական սահմանափակումներ չկան, և ամեն մարդ ազատ է իր վաստակած գումարներն իր ցանկության համեմատ ուղարկելու արտասահման՝ առանց որևէ սահմանափակման:

- Որքանո՞վ են այդտեղ իրենց ապահով զգում հայերը: Արդյո՞ք այդ երկրի պահպանողական և կրոնական օրենքներն, այնուամենայնիվ, չեն կաշկանդում հայերին թե՛ ազգային կյանքում, թե՛ առօրյայում:

- Էմիրություններում հայերը որոշ չափով ապահով են զգում իրենց, քանի որ օրենքը շատ լավ աշխատում է և չի թույլատրում անօրինություններ կամ սանձարձակություններ որևէ անձի նկատմամբ: Սակայն վերջերս խնդիրներ առաջացան նրանց համար, ովքեր սիրիական անձնագրեր ունեին: Վերջիններս ստիպված եղան հայաստանյան անձնագրեր վերցնել, որպեսզի հնարավոր լինի իրենց կեցությունը երկարաձգել այս երկրում, որովհետեւ վերջին շրջանում սիրիական անձնագրերը սկսել էին դժվարությամբ ընդունվել մանավանդ աշխատանքը փոխելու պարագայում:

Պետք է նշեմ, որ այստեղ ամեն մարդ ազատ է դավանելու իր կրոնը սահմանված շրջագծի մեջ: Այսինքն, տանը թե եկեղեցում կարելի է ազատ կերպով հետևել քրիստոնեական ծեսերին և ավանդույթներին: Իշխանությունները չեն թույլատրում ոչ իսլամական որևէ կրոնի դեմ հրապարկային թշնամական արարք:

- *Ինչպե՞ս եք գնահատում համայնքի ռեսուրսները:*

- Հայկական ռեսուրսները շատ քիչ են օգտագործվում էմիրություններում հայկական շահերի հետապնդման առումով: Օրինակ՝ տեղական մամուլում կարելի է հայանպաստ նյութեր հրապարակել՝ համագործակցելով բարեկամ լրագրողների հետ, բայց նման աշխատանք, ցավոք, համարյա թե չի տարվում: Այստեղ գրեթե բոլոր թեմականները բիզնեսի մեջ հաջողակ մարդիկ են, և շատ անգամ այդ հանգամանքն է օգնում նրանց ձեռք բերել թեմականի աթոռը, որը նրանցից շատերը պահում են երկար տարիներ, երբեմն նույնիսկ տասնամյակներ: Սակայն հայտնի չէ, թե նրանցից յուրաքանչյուրը ի՞նչ ծրագիր է ցանկանում հետապնդել կամ ի՞նչ գաղափարներ ունի, որ կուզեր իրականացնել: Կան թեմականներ, որ միայն պաշտոնական հյուրերի ընդունելության ժամանակ են երևում:

- Արդյո՞ք Սիրիայում տեղի ունեցող գործընթացները կնպաստեն տեղի հայ համայնքի թվաքանակի ավելացմանը կամ համայնքի աշխուժացմանը:

- Որոշ թվով սիրիահայեր կարողացել են վերջին շրջանում էմիրություններում հաստատվել, բայց, հիմնականում, Հայաստանի քաղաքացիություն ստանալուց հետո:

- Ինչպիսի՞ն են կապերը Հայաստանի հետ: Արդյո՞ք այդտեղ հետևում են հայաստանյան լրատվամիջոցների աշխատանքին կամ հայաստանյան անցուդարձին:

- Հայաստանի հետ կապերն օրըստօրե աշխուժանում են, մանավանդ որ վերջին երեք տարվա ընթացքում հարյուրավոր անձինք Հայաստանի քաղաքացիություն ստացան: Դա առիթ դարձավ, որ այցելությունները Հայաստան հաճախակիանան: «Հ1» և «Շանթ» հեռուստակայանին շատ հետևողներ կան: Աբու Դաբիի դեսպանությունը կարևոր ներկայություն է գաղութի մեջ, բայց դեռ հարաբերությունները մեկը մյուսի գործերին չխառնվելու սկզբունքով է ընթանում:

- Ինչպիսի՞ն են ԱՄԷ-ի հայ համայնքի հարաբերությունները այլ հայ համայնքների հետ: Ի՞նչ դեր ունի «Ֆեյսբուքն» այդ կապերը Հայաստանի հետ ամրապնդելու հարցում:

- Էմիրութիւնների հայերը բնականաբար լայն կապեր ունեն իրենց երկրների հետ (Սիրիա, Լիբանան և այլն) հետ: Ծոցի շրջանի մակարդակով կան նաև գործնական հարաբերություններ Քուվեյթի ու Քաթարի հայերի հետ, մանավանդ որ նույն թեմական կառույցին են պատկանում: Գաղափարական առումով ավանդական երեք կուսակցությունների հետևորդները շարունակում են ամուր կապեր պահպանել գաղափարակից ընկերների հետ այլուր:

«Ֆեյսբուքն» իր կարևոր դերակատարությունն ունեցավ մանավանդ ավանդական կառույցներից հեռու գտնվող մարդկանց համար: Դա կարևոր է էմիրությունների նման միջավայրում, ուր հայերը միատեղ չեն ապրում, իսկ Շարժայի հայկական եկեղեցի գնալու համար երկար ժամանակ է պետք:

Կան մի շարք ֆեյսբուքյան խմբեր, որոնց մեջ կարևոր տեղ է գրավում իմ նախաձեռնությամբ ստեղծված «Էմիրութիւնների հայերու ֆորումը», ուր ամեն օր քննարկվում են գաղութին հետաքրքրող նյութեր և տեղադրվում են միջոցառումների մասին հայտարարություններ: Գաղութ նոր ժամանող անհատները հիմնականում այդ ֆորումի միջոցով են միմյանց հետ կապ հաստատում: Ֆորումն ունի նաև տարեկան հավաք:

- Հայտնի է, որ «Ազատ-հայը», որի գործունեությունը դուք եք վարում, բավական մեծ ճանաչում ունի Սփյուռքում և մեծ դեր է կատարում հայ համայնքների կյանքը լուսաբանելու հարցում: Ի՞նչ խնդիրներ կան այսօր կայքի գործունության հետ կապված: «Ազատ հայից» բացի, լրատվական ի՞նչ ռեսուրսներ ունի հայ համայնքը:

- «Ազատ հայ» կայքը (www.azad-hye.net) սկիզբ առավ 2003 թ. էմիրությունների հայերի մասին տեղեկություններ հրապարակելու նպատակով, բայց հետո ընդլայնվեց ու հիմա դարձել է համահայկական լրատվամիջոց, չնայած որ մնում է որպես անհատական նախաձեռնություն: Կայքն ունի Հայաստանի և Սփյուռքի մեջ գործակցող մի խումբ լրագրողներ: Այն ունի նաև արաբերեն և բիզնես բաժիններ, ինչպես նաև զգալի ներկայություն սոցիալական մեդիայի մեջ:

Վերջին շրջանում սակայն ուշադրությանս կարևոր մասը կենտրոնացած է սիրիահայության վրա: Ստեղծել եմ Հալեպի հայության հատուկ ֆեյսբուքյան էջ՝ «***Aleppo Armenians»***՝ օգտագործելով «Ազատ- հայի» մեջ ունեցած փորձառությունս:

Էմիրություններում 2012-ից ի վեր գործում է նաև երկլեզու www.emahay.com կայքը, որ պատկանում է Շարժայի ազգային վարչությանը և նպատակ ունի պաշտոնական տեղեկություններ փոխանցել:

- Ի՞նչ կցանկանայիք ավելացնել:

- Արաբական աշխարհի վերջին զարգացումները, կարծում եմ, մեծ փոփոխություններ առաջ կբերի մեր հասարակության մեջ: Օրըստօրե մարտահրավերները շատանում են, և անցյալի մեթոդներն այլևս անկիրարկելի են դառնում: Ավանդական կառույցներն այլևս բեռ են դարձել մեր իրականության մեջ, և նույնիսկ հարցականի տակ է հայապահպանության համար նրանց բերած ամբողջական արժեքը: Նրանք գործում են պարզապես այլընտրանքի բացակայության շնորհիվ:

Հայկական հասարակության շատ լայն հատվածներ արդեն չեն հետևում ազգային կյանքին, իսկ հետևողներն իրենց ղեկը հանձնել են երկար տարիներ վարչական աթոռների վրա եղող նույն անձանց, որոնք իրենց պաշտոնները վերածել են անհատական վարկ ու հեղինակություն ապահովելու միջոցների՝ չմոռանալով ժամանակ առ ժամանակ հավաստիացնել, թե ամեն ինչ լավ հունի մեջ է և թե սրանից ավելի ոչ մի բան հնարավոր չէ իրականացնել: Այս դանդաղ մահը պիտի փոխարինվի՞ զարթոնքով… Ամեն դեպքում, տվյալները հուսադրող չեն:

9.ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԴՈԿՏՈՐ ՎԱՐԴԳԵՍ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ[147]

- Ինչպիսի՞ն է այսօր Աբու Դաբիի հայության վիճակը: Կարո՞ղ եք ամփոփ ներկայացնել համայնքի պատմությունը:

- Պատմական առումով հայությունն Արաբական Միացյալ Էմիրություններում ներկայացված է 1960-ական թվականներից, սակայն ազգային և հոգևոր կյանքը մեծ թափ ստացավ և կազմակերպվեց 1980-ականներից հետո, երբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից Օշական արքեպիսկոպոս Չոլոյանն այցելեց Քուվեյթ և մերձակա երկրներ՝ ավելի մոտիկից ծանոթանալու տեղի հայության վիճակին: Ապա Քուվեյթի և Արաբական ծոցի երկրներում հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ նշանակվելուց հետո նպաստեց համայնքի կազմակերպմանը: Քուվեյթում և մերձակա երկրներում, ներառյալ ԱՄԷ-ն, գործում է Թեմական մարմին,

[147] «Լուսարձակ՝ Ապու Տապիի հայության իրավիճակին», Հարցազրույց դոկտոր Վարդգես Արզումանյանի հետ, /հատվածաբար/, Ըստ «Ազդակ», 25 հունիս, 2012:

որն ընտրվում է 4 տարի ժամկետով և բաղկացած է 21 հոգևոր և աշխարհիկ անդամից: Թեմական խորհուրդն էլ, իր հերթին, նշանակում է շրջանի ազգային վարչություններին՝ 2 տարի ժամկետով: Աբու Դաբիից 4 երեսփոխաններ ներգրավված են թեմական խորհրդում:

- Ի՞նչ կասեք Աբու Դաբիի Ազգային վարչության մասին, որի ատենապետն եք դուք: Ներկայումս որքա՞ն է Աբու Դաբիում հայության թվաքանակը:

- Նախ նշեմ, որ մեր համայնքի հայորդիները տարբեր երկրներից են և մենք՝ որպես համայնք, պաշտոնապես ճանաչված չենք պետության կողմից: Մեր ազգակիցները պահպանում են այն երկրների քաղաքացիությունը, որտեղից եկել են: Միակ միավորող գործոնը մեր ծագումով հայ լինելն է: Այլ խոսքով, իբրև հայ՝ պետությունը Հայաստանի Հանրապետությանն է ճանաչում իբրև ներկայացուցիչ, իսկ իբրև լիբանանցի՝ Լիբանանի դեսպանությանը և այլն: Ներկայումս Աբու Դաբիում հայերի թիվը 600-ից 800 է: Աբու Դաբիի Ազգային վարչության երկամյա ծրագրում գլխավոր թիրախներ են մատնանշվել համայնքի ազգային, հոգևոր, կրթական, հասարակական և մշակութային ոլորտները: Այս ոլորտներում գործունեությունը համակարգելու նպատակով կազմավորվել են մի շարք հանձնախմբեր, ինչպես՝ Երիտասարդական, Տիկնանց, Կրթության, Մշակութային, Եկեղեցական, Թաղային խորհուրդներ և այլն:

- Կարո՞ղ եք մատնանշել, թե վերոնշյալ ոլորտներում ի՞նչ մարտահրավերներ կան այսօր համայնքում:

- Իհարկե՛, ազգային տեսանկյունից մեր առջև ծառացած հիմնական մարտահրավերը հայապահպանման հարցն է: Այս առնչությամբ կազմակերպում ենք դասախոսություններ, որոնց նպատակն է պահպանել մեր ազգային տոներն ու ավանդույթները, ինչպես, օրինակ՝ Զատկի, Վարդանանց, Ապրիլի 24-ի, Մայիսի 28-ի, սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության և այլ տոնակատարություններ:

Կրթական ոլորտում մեր գործունեության առանցքը կազմում է Աբու Դաբիի Ազգային մեկօրյա վարժարանը, որ գործում է 1981 թ.-ից: Այն հայապահպանման կարևոր օջախն է համայնքում: Այստեղ փորձում ենք մատաղ

սերնդին տալ ազգային դաստիարակություն՝ ուսանելով հայոց լեզու, պատմություն և կրոն: Աբու Դաբիի վարժարանը համայնքի սիրտն է, որտեղ մանկապարտեզից մինչև 8-րդ դասարան հայ երեխաներին շաբաթական 1 օր հայեցի դաստիարակություն են տալիս մեր ուսուցիչները, ի դեպ, կամավոր սկզբունքով: Տարեվերջին հատուկ հանդիսությամբ վարժարանում նշվում են մեր ազգային տոներն ու սուրբ առիթները:

Մշակութային առումով ուշադրություն ենք դարձնում ազգային և հոգևոր հատուկ առիթներին, ինչպես՝ հայ տպագրության 500-ամյակը և այլն:

Համայնքային մակարդակում փորձում ենք կապ պահպանել համայնքի բոլոր հայորդիների հետ, տեղեկացված լինել նրանց կեցության մասին և հարկ եղած դեպքում օգնություն տրամադրել նրանց: Երբեմն դրսից հրավիրում ենք տարբեր երգիչների և կազմակերպում ենք համայնքային զանազան միջոցառումներ:

Հագևոր, հատկապես կրոնական ոլորտում Շարժայի քահանան պարբերաբար այցելում է Աբու Դաբի և պատարագ է մատուցում տեղի հունական եկեղեցում, որին մասնակցում են համայնքի անդամները: Այստեղ ուրախությամբ ցանկանում եմ ընդգծել, որ պատմական անկյունաքարային իրադարձություն էր վերջերս Աբու Դաբիում Սուրբ Նահատակյաց եկեղեցու հիմնարկեքը, որ իրականացրեց Արամ Ա. Վեհափառը:

- Նշեցիք Սուրբ Նահատակյաց եկեղեցու հիմնարկեքի մասին, ի՞նչ պայմաններում առաջացավ այս գաղափարը, և ի՞նչպես հնարավոր եղավ դրա իրականացումը:

- Սուրբ Նահատակաց եկեղեցու հիմնադրման գաղափարը չի առաջացել մեկ օրում: Երջանկահիշատակ Գարեգին Ա. Վեհափառի օրոք էր, որ առաջին անգամ ծնվեց այս փայլուն գաղափարը, երբ նա ավելի քան 15 տարի առաջ այցելեց Ծոցի շրջան և ծանոթացավ տեղի հայության վիճակին և այն ժամանակ (այժմ հանգուցյալ) երկրի նախագահ, շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ-Նահայանի մոտ արծարծեց եկեղեցի կառուցելու համար անհրաժեշտ հողատարածք հատկացնելու հարցը: Այս գործում իր զգալի ներդրումն

ունեցան նաև Արամ Ա. Վեհափառի հետևողական ջանքերը: Արամ Ա. Վերհափառը Ծոցի երկրներ իր այցելության ընթացքում այս հարցը բարձրացրեց երկրի գերագույն իշխանությունների հետ հանդիպումներում: Եվ 1998 թ. երկրի նախագահը հայ համայնքին նվիրեց 100 հազար ԱՄՆ դոլար՝ խոստանալով մոտ ապագայում իրականացնել նաև եկեղեցի կառուցելու համար նախատեսված հողատարածքի հատկացումը: Անցած տարիների ընթացքում՝ շնորհիվ հետևողական աշխատանքի, ինչպես նաև հայ համայնքի նկատմամբ ԱՄԷ իշխանությունների ցուցաբերած բարյացակամության ու վստահելի վերաբերմունքի, 2006 թ. երկրի գահաժառանգի հատուկ հրամանագրով՝ Աբու Դաբիի արվարձաններից մեկում (Մուսաֆահ), եկեղեցի կառուցելու նպատակով հատկացվեց 2475 քառ. մետր հողակտոր: Ինչպես գիտեք, սույն թվականի մայիսի 4-ին տեղի ունեցավ Աբու Դաբիի առաջին հայկական եկեղեցու հիմնարկեքը, որն Արամ Ա. Վեհափառի որոշմամբ անվանվեց Սուրբ Նահատակաց եկեղեցի՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Այս կապակցությամբ Լիբանանից հրավիրեցինք Հ.Բ.Ը.Մ. փողերախումբը: Վեհափառի կողքին այս միջոցառմանը ներկա էին նաև Քուվեյթի և Ծոցի երկրների թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանը, Հայաստանի Հանրապետության դեսպան Գեղամ Ղարիբջանյանն՝ իր տիկնոջ հետ, Դեր Զորում Հայաստանի պատվո հյուպատոս Սուրեն Վարդանյանը, Դուբայի, Աբու Դաբիի և Քաթարի Ազգային վարչությունների ներկայացուցիչներ ու բազմաթիվ հավատացյալներ: Հայ եկեղեցու ավանդույթի համաձայն՝ մեր եկեղեցին ունի 16 սյուն, որ խորհրդանշում են Քրիստոսի 12 առաքյալներին և 4 ավետարանիչներին: Եկեղեցու 16 սյուներն ունեն իրենց կնքահայրերը և դրանց հիմնաքարերը հիմնարկեքի արարողության ընթացքում օրհնվեցին Վեհափառի կողմից:

- Արդյո՞ք Ազգային վարչությունն ունի հատուկ կայքէջ կամ էլեկտրոնային փոստային հասցե: Ինչպե՞ս եք իրականացնում համայնքի անդամների հետ կապը: Եթե որևէ մեկը ժամանում է Աբու Դաբի, կա՞ հատուկ կենտրոն կամ ակումբ, որտեղ կարող է այցելել:

- Դժբախտաբար դեռևս չունենք կենտրոն, բայց կարող եմ տեղեկացնել, որ Սուրբ Նահատակաց եկեղեցու կառուցմանը զուգահեռ՝ կունենանք նաև առընթեր բաժիններ, այդ թվում՝ նաև կենտրոն: Աբու Դաբիի Ազգային վարչությունն ունի իր կայքէջը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, որտեղ տեղադրում ենք բոլոր նորությունները ու հայտարարությունները: Միմյանց հետ կապվում ենք նաև անձնական էլեկտրոնային փոստով:

- Ինչպե՞ս կբնութագրեք ձեր հարաբերություններն Աբու Դաբիի պետական մարմինների, քույր միությունների, Լիբանանի և Հայաստանի Հանրապետության դեսպանությունների հետ:

- Աբու Դաբիում անջատ կամ ինքնուրույն գործող միություններ չկան, սակայն պետական պատկան մարմինների հետ մեր հարաբերությունները շատ լավ են, ինչպես նաև Լիբանանի և ՀՀ դեսպանությունների հետ: Նմանապես, մեր կապերը շատ լավ են նաև արտաքին մեր ազգային կառույցների և միությունների հետ, այդ թվում՝ նաև ՀՀ Սփյուռքի նախարարության հետ և այլն:

10. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆՈՒՀԻ, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԹԱՄԱՐ ԹՈՓՉՅԱՆ-ՏԵՐ-ՕՀԱՆՆԵՍՅԱՆԻ ՀԵՏ[148]

- Խնդրում եմ ներկայացեք, որտեղի՞ց եք արմատներով, ե՞րբ եք հաստատվել Արաբական Միացյալ Էմիրություններում:

- Ես լիբանանցի եմ, ընտանիքիս՝ ամուսնուս և երկու զավակներիս՝ Վռամի և Լենայի հետ տեղափոխվել ենք Աբու

[148] Թամար Թոփչյան-Տեր-Օհաննեսյանի կրթական և մշակութային գործունեության մասին տե՛ս նաև Honoring the 25 years service of Tamar Der Ohannessian http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=621jfk41, Tamar Der-Ohannessian: A new book on Armenian loss during the Genocidehttp://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=621aaaz41

Դաբի ԱՄՆ-ից 1980-ին, ամուսնուս գործի բերումով, սակայն 2011 թ. դեկտեմբերից նորից վերադարձել ենք ԱՄՆ՝ Ֆիլադելֆիա, որտեղ էլ այժմ բնակվում եմ:

- Փաստորեն, ավելի քան քսան տարի ապրել եք Աբու Դաբիում: Բնականաբար, լավատեղյակ եք ոչ միայն Աբու Դաբիի, այլև ընդհանրապես Արաբական Միացյալ Էմիրությունների հայկական անցուդարձին: Ինչպե՞ս է կազմավորվել ԱՄԷ հայ համայնքը:

- Տասնամյակներ առաջ բազմաթիվ հայ երիտասարդներ և հայկական ընտանիքներ աշխատելու նպատակով հաստատվեցին էմիրություններում: Չնայած պանդխտությանը և հայկական ավանդական միջավայրի բացակայությանը՝ նրանք՝ հանուն ապագայի բարեկեցիկ կյանքի, պատրաստ էին ամեն տեսակ զոհողության: Ի տարբերություն այլ երկրների՝ այստեղ եկողները հիմնականում նպատակ ունեին մի քանի տարի աշխատելուց հետո վերադառնալ իրենց ծննդավայր կամ մի այնպիսի երկիր, որտեղ կարելի կլիներ ոչ միայն լավ ապագա, այլև հայկական միջավայր գտնել: Այլ խոսքով, էմիրությունները դեպի ապագա տանող ճանապարհին ժամանակավոր հանգրվան էր: Սակայն փաստ է, որ տեղի հայ համայնքն արդեն մի քանի տասնամյակ է, ինչ գոյություն ունի:

- Ձեր կարծիքով, ի՞նչ գործոններ նպաստեցին, որպեսզի ժամանակավոր այդտեղ հաստատված հայերն ի վերջո դառնան համայնք:

- Ես կառանձնացնեի մի քանի գործոն: Նախ. հյուրընկալ երկրի բարենպաստ պայմանները և հայերի նկատմամբ այն ժամանակ նախագահ, շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ-Նահայանի բարի կամքը: Եվ վերջապես, 1992 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության ներքո Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի ստեղծումը և կաթողիկոսական փոխանորդների շահեկան գործունեությունը:

- Ի՞նչ դեր է խաղացել հայ առաքելական եկեղեցին համայնքի ձևավորման և հետագա զարգացման առումով:

- Եկեղեցին շատ մեծ դեր է ունեցել և ունի հայ գաղութի կյանքում: Հարկ է նշել, որ դեռևս 1979 թ. երջանկահիշատակ Գարեգին Բ. Վեհափառ հայրապետի բարձր տնօրինությամբ Անթիլիասից էմիրություններ, այդ թվում՝ Աբու Դաբի և Շարժա, այցելության եկավ Գերապատիվ Տ. Օշական Ծ. վարդապետ Չոլոյանը տեղի հայությանը կազմակերպելու համար: 1992-ին Հալեպում գումարված Ազգային պատգամավորական ընդհանուր ժողովի ժամանակ Քուվեյթի և Արաբական ծոցի երկրները որպես մեկ ամբողջություն հռչակվեցին: 1993-ի ապրիլին գաղութն ունեցավ իր մնայուն հոգևոր հովիվը հանձին Հոգշնորհ Տ. Բաբկեն վարդապետ Չարյանի, ով իր աշխույժ գործունեությամբ մեծապես սատարեց ազգային և կրոնական կյանքի բարգավաճմանը: 1994 թ.-ի վերջին գաղութի տասնհինգ տարվա կաթողիկոսական փոխանորդությունը վարող Հոգշնորհ Տ.Օշական Ծ.վարդապետ Չոլոյանը եպիսկոպոս օծվեց, իսկ 1995 թ.-ի սկզբին գումարված թեմական ժողովում ընտրվեց թեմի առաջնորդ: Չորս տարի անց՝ 1998 թ. մայիսին, վերջինս ԱՄՆ փոխադրվեց և կաթողիկոսական փոխանորդ նշանակվեց Գերաշնորհ Տ.Սեպուհ եպիսկոպոս Սարգսյանը /1998-2000/, ապա՝ Գերաշնորհ Տ. Եփրեմ արքեպիսկոպոս Թապագյանը /2000-2002/, հետո Գերաշնորհ Տ. Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը /2002-2011/, իսկ 2011-ից՝ Գերաշնորհ Տ. Շահե Փանոսյանը: 1998-ից մինչ օրս գաղութի հոգևոր հովիվին է Արժանապատիվ Տ. Արամ քահանա Տեյիրմենճյանը: Վերջինս, ի դեպ, երկու շաբաթը մեկ Շարժայից գալիս է Աբու Դաբի և տեղի հույն ուղղափառ Սուրբ Նիկողայոս եկեղեցում պատարագ է մատուցում: Այժմ ընթացքի մեջ է Աբու Դաբիում հայկական եկեղեցու շինարարության հարցը:

- Ե՞րբ և ինչպե՞ս սկսվեց ազգային կյանքը հունի մեջ մտնել Աբու Դաբիում:

- 1980-ականներից: 1980 թ. ապրիլին նշանակվեց Աբու Դաբիի առաջին ազգային վարչությունը, որի նպատակն էր կազմակերպել համայնքի մշակութային և հասարակական կյանքը: Այդ շրջանից ի վեր՝ Աբու Դաբիի հայ համայնքը սկսեց անընդհատ վերելք ապրել: Դրվեցին ազգային մեկօրյա վարժարանի հիմքերը, որտեղ սկսեցին հաճախել համայնքի երեխաները՝ ազգային կրթություն ստանալու նպատակով: Նաև դպրոցը նպաստեց, որպեսզի աստիճանաբար համայնքի անդամների միջև կապերը սերտանան. սկսեցին կազմակերպվել տարաբնույթ միջոցառումներ, նշել ազգային տոները: 1988 թ. Հայաստանի աղետալի երկրաշարժի օրե-

րին Աբու Դաբիի հայ գաղութը, միանալով Հյուսիսային Էմիրությունների քույր գաղութին, իր նյութական և բարոյական աջակցությունը բերեց վիրավոր հայրենիքին:

- Սոցիալական ի՞նչ շերտերից է կազմված Աբու Դաբիի հայ համայնքը:

- Կան բարձրագույն կրթությամբ անձինք, և կան շատերը, ովքեր սեփական ընկերություններ ունեն և մեծ հաջողությունների են հասել: Մյուս կողմից, կան տարբեր հաստատություններում բարձր պաշտոններ վարողներ: Կան արհեստավորներ, բժիշկներ, ուսուցչուհիներ և այլն: Կան ամենատարբեր ոլորտներում աշխատող իգական սեռի ներկայացուցիչներ: Համայնքում կան հնաբնակներ և նորաբնակներ: Վերջիններիս հնաբնակները մեծ սիրով են դիմավորում: Իսկ, ահա, նոր սերունդը, որ ծնվել է Աբու Դաբիում, այժմ՝ բարձրագույն կրթություն ստանալուց հետո, այլևս աշխատանքի է անցնում:

- Ինչպե՞ս են միմյանց ընկալում համայնքի ներսում տարբեր դավանական խմբերը:

- Հայ առաքելականները, ինչպես նաև ավետարանականներն ու կաթոլիկները գոյակցում են համերաշխ, իսկ վերջիններս հաճախում են նաև հայ առաքելական եկեղեցի:

- Ինչպիսի՞ն է ինքնության մակարդակը: Որքանո՞վ են հայախոս տեղի հայերը:

- Հայերը, որ էմիրություններ են գաղթել հայաշատ գաղթօջախներից, ինչպիսիք են Լիբանանը, Սիրիան, Իրանը և այլն, ընդհանրապես հայախոս են: Ներհամայնքային կապերը բավական սերտ են: Հայերը բարեկամանում են, այցելում միմյանց: Կիրառվող լեզուն հիմնականում հայերենն է: Պետք է նկատի ունենալ, որ ամեն դեպքում հայկական ինքնությունը վտանգված է բոլոր այն երկրներում, որտեղ նրանք փոքրամասնություն են:

- Ինչպիսի՞ն են հայ համայնքի և պետության հարաբերությունները:

- Հայկական եկեղեցական և աշխարհիկ թևերի ներկայացուցիչները կապի մեջ են իշխանությունների հետ: 1995-ին համայնքը բարեբախտություն ունեցավ ընդունելու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս երջանկահիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Վեհափառին, ով միևնույն ժամանակ բարձր

մակարդակի հանդիպումներ ունեցավ կառավարական անձանց և, վերջապես, երկրի նախագահ, շեյխ Զայեդ Բին Սուլթան Ալ-Նահայանի հետ, ով խոստացավ հայ համայնքին հող հատկացնել եկեղեցի կառուցելու համար: 1997 թ. ապրիլին և ապա 1998 թ. նոյեմբերին Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա.Վեհափառն Աբու Դաբիի հայ համայնք կատարած իր այցելության ընթացքում նույնպես հանդիպումներ ունեցավ իշխանության ներկայացուցիչների հետ:

- Ինչպե՞ս են ընկալվում հայերը ԱՄԷ-ում:

- Հայերը հպարտ են իրենց հայությամբ, և այդպես էլ ճանաչվում են այդ երկրում գտնվող զանազան ազգությունների կողմից:

- Ի՞նչ վիճակում է ազգային կրթությունն Աբու Դաբիում: Ի՞նչ պարագաներում ստանձնեցիք միօրյա վարժարանի տնօրինությունը:

- Աբու Դաբիում կար միօրյա վարժարան, որ հիմնվել էր 1979 թ. Վարդան Ինկլիզյանի, Աշխեն Արզումանյանի և Սոնա Բադալյանի ջանքերով: Այստեղ դասավանդվում էր կրոն, հայոց լեզու և պատմություն, ինչպես նաև հայ երգ և զանազան գիտելիքներ: Աբու Դաբիում այժմ էլ կա մեկօրյա վարժարան, որը հաճախում են 3-14 տարեկան երեխաները: Նրանք ստանում են հայոց լեզվի, պատմության և կրոնի դասընթացներ: Թե՛ տնօրենը և թե՛ ուսուցիչ-ուսուցչուհիները պաշտոնավարում են կամավոր կերպով՝ առանց նյութական հատուցման: Ես ստանձնեցի տնօրենի պաշտոնը 1984-2007 թթ.: 1998 թ. Մեծի Տանն Կիլիկիո Արամ Առաջին Վեհափառ հայրապետը Մեսրոպ Մաշտոցի շքանշով պարգևատրեց ինձ տարիների կամավոր աշխատանքի համար: 2005 թ. հանդիսավոր կերպով նշվեց վարժարանի 25-ամյակը: Պետք է նշեմ, որ վարժարանը գաղութի կյանքում առանցքային դեր ունի. ոչ միայն հայեցի ուսում է շնորհում, այլ նաև ազգային և կրոնական տոներն է նշում, կազմակերպում է տարեվերջի հանդեսը, որի ժամանակ աշակերտները բեմ են բարձրանում երգելով, պարելով և թատերական ներկայացումներով: Դպրոցի շնորհիվ՝ նաև ծնողների միջև բարեկամական կապեր են ստեղծվում:

- Ինչպե՞ս է ընթանում մշակութային կյանքը:

- Իմ՝ այնտեղ եղած ժամանակ մշակութային կյանքն ընթանում էր երեք ճյուղով՝ ազգային վարչության աշխատանքների, Հայ մշակութային ընկերակցության միջոցառումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեսպանության տարած աշխատանքների միջոցով:

- Ինչո՞ւ շատ հաճախ հայերը չեն մասնակցում համայնքային կյանքին: Ինչո՞ւ թեմական մարմնի ընտրություններին թվով քիչ մարդիկ են մասնակցում: Ի վերջո, տեղի հայության քանի՞ տոկոսն է ընգրկված ազգային կյանքում:

- Այո, կան «նեղացած» մարդիկ, ովքեր չեն մասնակցում գաղութային կյանքին կամ թեմական ընտրություններին: Դա նրանց անձնական գործն է: Մարդ արարածը միշտ էլ ազատ է իր գործողություններում, մանավանդ հայ մարդը: Ենթադրում եմ, որ նրանք ավելի շատ անտարբեր են իրենց ազգային խնդիրների նկատմամբ: Միևնույն ժամանակ, դժվար է ասել, թե գաղութի քանի տոկոսն է ընգրված ազգային կյանքում: Կարծում եմ՝ կեսից ավելին:

- Հայության ի՞նչ հատվածներ են ներկայացված Արաբական Միացյալ Էմիրություններում:

- ԱՄԷ-ի հայ համայնքը կազմված է զանազան երկրներից գաղթած հայերից, բայց հատկապես Միջին Արևելքից: Կան նաև ԱՄՆ-ից, Կանադայից և Ավստրալիայից հաստատվածներ: Բոլորն էլ մեծ մասամբ մի քանի տարվա հեռանկարով էին եկել, բայց արդեն տևական ժամանակ է, ինչ այնտեղ են:

- Որքանո՞վ են իրենց ապահով զգում հայերը Արաբական Միացյալ Էմիրությունների պես պահպանողական երկրում: Ինչպե՞ս եք պատկերացնում հայ համայնքի հեռանկարը Արաբական Միացյալ Էմիրություններում:

- Կարծում եմ, որ ապահով են, ենթակա չեն խտրականության և անվտանգության հետ կապված խնդիրներ չունեն: Պետք է նկատի ունենալ, որ այդ երկիրը կազմված է փոքրամասնություններից: Հայերն այնտեղ կաշկանդված չեն, նրանք ճանաչված են պետության կողմից, որին էականորեն նպաստեց Հայաստանի Հանրապետության դեսպանության հիմնումը, եկեղեցու կառուցման աշխատանքները, ինչպես նաև տարիների ընթացքում հայերի հաջող և օրինակելի կեցվածքը: Կարծում եմ, որ ԱՄԷ-ն, այնուամենայնիվ, դեռևս ապահով վայր է հայապահպանման համար:

- Ի՞նչ դեր ունի Հայաստանի Հանրապետության դեսպանությունը հայ համայնքի ազգային կյանքի աշխուժացման հարցում:

- 2000 թվականից ի վեր Աբու Դաբիում գործում է Հայաստանի դեսպանություն, որը, կարծում եմ, իր հերթին կարևոր կամուրջ է շրջանի հայության և Հայրենիքի միջև:

- Ինչպիսի՞ն են կապերը Հայաստանի հետ:

- Հայաստանի հետ կապերը միշտ էլ եղել են սերտ և սիրալիր, իսկ դեսպանության գոյությունը՝ շահեկան: Մշակութային ձեռնարկները, դասախոսությունները և արվեստագետների այցելությունները միշտ էլ մեծ խանդավառվածությամբ են ընդունվել գաղութի կողմից: Այստեղ դիտում են հայկական լրատվական կայանները, որոնք հայերին իրազեկ են դարձնում Հայաստանի անցուդարձերին: Հայրենիքի գաղափարը միշտ հզոր է եղել Սփյուռքում և մեծ ազդեցություն ունեցել սփյուռքահայերի հոգեկերտվածքի վրա: Աշխարհի բոլոր համայնքների և մասնավորապես Աբու Դաբիի հայերի համար Հայրենիքի գաղափարը միշտ սուրբ է եղել:

- Ինպիսի՞ն են ԱՄԷ-ի հայ համայնքի կապերը Սփյուռքի այլ համայնքների հետ:

- Տեղի հայ համայնքը սերտ կապեր ունի Սփյուռքի այլ հայկական համայնքների հետ: Նշեմ, որ օրինակ Աբու Դաբիի հայությունն ամուր կապեր ունի այն համայնքների հետ, որտեղից իրենք եկել են: Այնտեղ նրանք ունեն ընտանիքներ, հարազատներ, բարեկամներ:

- Շատ հաճախ հայերը նշում են, որ իրենցից շատերը ժամանակավոր են բնակվում ԱՄԷ-ում: Այդ պարագայում արդյո՞ք նպատակահարմար է Աբու Դաբիում հայկական եկեղեցի կառուցել:

- Կարծում եմ, որ հայերը Սփյուռքում պետք է նվիրվածություն հանդես բերեն ազգային խնդիրների նկատմամբ, հոգ տանեն իրենց բարօրությանն ու նոր սերնդին: Միջին Արևելքում մի քանի սերունդ հայ մնաց հայապահպանության շնորհիվ: Ապագան հնարավոր չէ գուշակել, այդ իսկ պատճառով հայապահպանումը պետք է առաջնահերթ լինի Սփյուռքի բոլոր գաղութներում:

11. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԲՈՒ ԴԱԲԻԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ԿՅՈՒԼԻԶԱՐ ՁՈՆՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում եմ ներկայացեք, որտեղի՞ց եք արմատներով, ե՞րբ եք հաստատվել Արաբական Միացյալ Էմիրություններում:

- Կյուլիզար Ձոնյան, արմատներս Վանից և Էրզրումից են: Ծնվել եմ Իրաքում, սակայն 1973-ին դուրս եմ եկել այնտեղից: Ես և ընտանիքս կանադահպատակ ենք: Աբու Դաբիում վերջնակապես հաստատվել ենք 1993-ից: Ես Հ.Բ.Ը.Մ շրջանակից եմ, որևէ կուսակցության չեմ պատկանում. իմ կուսակցությունը Հայաստանն է: Մասնագիտությամբ ճարտարապետ եմ, ներկայումս ղեկավարում եմ ճարտարապետական մի գրասենյակ, սակայն բացի մասնագիտական գործունեությունից՝ նաև այլ նախասիրություններ ունեմ: Մասնակցում և շատ դեպքերում կազմակերպում եմ բարեգործական, մշակութային միջոցառումներ, բիզնեսին առնչվող քննարկումներ ու սեմինարներ, նաև ԱՄԷ-ում գործող «Ինթերնեյշնլ Բիզնես Վումենս Գրուփի» վարչության անդամ եմ և «Վումեն Թքսելենսի Գրուփի» նախագահը: Այս կառույցների գործունեությունը շատ հետաքրքիր է, որոնք, անշուշտ, հայերի հետ որևէ կապ չունեն, այլ՝ օտարների:

- Փաստորեն, ոչ հայկական շրջանակների հետ եք շփվում: Հետաքրքիր է, որքանո՞վ են հայերին ճանաչում Արաբական Միացյալ Էմիրություններում: Արդյո՞ք տեղի հայերի մեջ կան ճանաչված մարդիկ:

- Ցավով պետք է նշեմ, որ ընդհանուր առմամբ հայերի մի ստվար մաս այստեղ չի շփվում այլ մշակույթների հետ: Այնպիսի տպավորություն է, որ հայերը չեն ձգտում իրենց մասին խոսել, իրենց մշակույթը օտարներին ծանոթացնել, ամեն ինչ կարծես անում են իրենք իրենց համար: Տեղի հայ համայնքն ամեն տարի կազմակերպում է մի քանի միջոցառում՝ ներառյալ ամենամյա պարահանդեսը, որին հրավիրում են օտարներին, բայց որի ժամանակ հնչած երգերն անգամ շատ դեպքերում հայկական չեն: Ես այլ մոտեցում ունեմ: Նախ, ինչ էլ որ անում եմ, միշտ ասում եմ՝ ես հայ եմ և կարևորում եմ մեր մշակույթը օտարներին ներկայացնելը: Ես այստեղ միշտ փորձել եմ աջակցել ցանկացած հայկական մշակութային միջոցառման

կազմակերպմանը: Հայկական մշակութային ընկերակցության գործերին ինչով կարողացել, օգնել եմ: Մի քանի անգամ նույնիսկ ոչ մեծ դասախոսություն եմ կարդացել Հայաստանի և հայկական մշակույթի մասին: Իմ օտարերկրյա ընկերները ինձ կատակով անվանում են Հայաստանի ոչ պաշտոնական դեսպան: Ինչ վերաբերում է ձեր մյուս հարցին, ես անձնապես կարծում եմ, որ էմիրություններում հայերի մեջ հանրաճանաչ մարդիկ չկան:

- Ինչպե՞ս կնկարագրեք Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքը:

- Հայ համայնքի հիմնական կորիզը Սիրիայից, Լիբանանից, նաև, որոշ չափով, Իրաքից և Իրանից ներգաղթածներն են: Այստեղ մարդիկ հաստատվել են մեծ մասամբ աշխատելու հեռանկարով: Համայնքի թիվը մեծ չէ, որքանով որ հայտնի է: Աբու Դաբիում հայերի թվաքանակը մոտ 500-ի շրջանակներում է: ԱՄԷ-ի հայ համայնքն էականորեն տարբերվում է Մերձավոր Արևելքի, ասենք՝ Իրաքի, Սիրիայի կամ Լիբանանի հայ համայնքներից, որոնք դիտարկվում են որպես կրոնական փոքրամասնություններ և իրենց իրավունքներն ունեն: Այստեղ հայերը որևէ կերպ չեն ընկալվում պետության կողմից, նրանք ունեն միայն ժամանակավոր բնակվելու և աշխատելու իրավունք: Իմ կարծիքով՝ ԱՄԷ-ի հայերի շրջանում այնքան էլ օրակարգային չէ գաղութային կյանքը կազմակերպելը. այստեղ հայերը կարծես ապրում են ինքնահոսի մատնված:

- Հետաքրքիր է իմանալ՝ որքանո՞վ են հայախոս տեղի հայերը:

- Այստեղ տարբեր լեզուներ են օգտագործվում: Հայերն իրենց աշխատանքային և անձնական շփումներում ստիպված են խոսել անգլերեն, արաբերեն կամ մեկ այլ լեզվով: Այդ լեզուները ներխուժել են նաև ընտանիքներ: Իրենց հերթին, երեխաներն էլ տարալեզու դպրոցներ են հաճախում, տարբեր հեռուստաալիքներ են դիտում: Այնպես որ, որոշ դեպքերում հայերեն չեն խոսում կամ խառն են խոսում: Օրինակ, մենք տանը փորձել ենք հիմնականում հայերեն խոսել, որպեսզի մեր աղջիկը չմոռանա իր մայրենի լեզուն:

- Ինչպիսի՞ն է հայկական կրթության վիճակը Աբու Դաբիում, որտեղ դուք բնակվում եք: Գիտեմ, որ երկու տարի եղել եք Աբու Դաբիի հայկական վարժարանի տնօրենուհին:

- Այո, մի 4 տարի առաջ էր, ես երկու տարով ստանձնեցի այդ բարդ գործը: Ինձանից առաջ վարժարանը բավական երկար ժամանակ ղեկավարել է Թամար Տեր-Օհաննեսյանը: Հետո, երբ նա մեկնեց ԱՄՆ, հրատապ դարձավ վարժարանի ղեկավարման հարցը, և ես համաձայնեցի ստանձնել այն: Փորձեցի որոշ բարեփոխումներ իրականացնել: Ես փորձեցի երեխաների ծնողներին ավելի մոտեցնել դպրոցին՝ նրանց հետ ավելի շատ հանդիպումներ ունենալով և առանձին միջոցառումներ կազմակերպել նրանց մասնակցությամբ: Բացի այդ, սկսեցինք էլ ավելի ակտիվորեն նշել հայկական տոները, խոսում էինք Հայաստանում տեղի ունեցող դեպքերի մասին և այլն: Աբու Դաբիի հայկական վարժարանը մեկօրյա է: Իմ տնօրինության շրջանում շաբաթ օրերը սկսեցինք հանդիպել: Նախկինում հինգշաբթի կամ ուրբաթ օրերին էին կազմակերպվում դասերը: Աշակերտների թիվը, որոնք ուսանում են մինչև 14-15 տարեկան, ընդհուպ հասել է մինչև 50-ի: Մեկօրյա վարժարանում ուսուցանվում է հայոց պատմություն, լեզու, մի քիչ էլ՝ կրոն: Վերջում հանդես էլ ենք անում: Հոգաբարձուների խորհուրդ չունենք: Ամեն դեպքում, դեռ շատ գործ կա անելու, դպրոցին լուրջ մոտեցում է պետք:

- Իսկ ծնողները հոժարությա՞մբ էին բերում իրենց երեխաներին հայկական վարժարան: Նաև ի՞նչ կասեք խառն ամուսնություններ մասին:

- Որոշակի դժվարությամբ էին բերում հատկապես վերջին դասարանի աշակերտների ծնողները: Շատ հաճախ գանգատվում էին, ցանկանում էին, որ երեխաներն ամիսը մեկ հաճախեն, քանի որ չեն հասցնում իրենց մնացած դասերը: Ես ասացի, որ ամիսը մեկ անգամը շատ քիչ է, բայց դե գոնե ամիսը երկու կամ երեք անգամ գալիս էին: Խառն ամուսնության դեպքեր կան: Եվ, ի դեպ, պետք է ասեմ, որ վարժարանում մենք հատուկ դասարան ունենք նման ընտանիքների երեխաների համար:

- Փաստորեն, համայնքում ազգապահպանության խնդիրներ կան, ինչպես ցանկացած հայկական համայնքում:

- Գիտեք, Արաբական Միացյալ Էմիրությունները որակապես այլ երկիր է, այստեղ շատ ու շատ հետաքրքրություններ կան, որոնք կլանում են երիտասարդներին և ոչ միայն նրանց:

- Այդ դեպքում, երիտասարդներին ազգային կյանքի մեջ պահելու համար շատ մրցակցային և հետաքրքիր միջավայր պետք է ստեղծել:

- Համաձայն եմ, բայց այդ միջավայրը ստեղծել է պետք: Դրա համար անհրաժեշտ է մարդկային ռեսուրս՝ գործից հասկացող ղեկավար մարդիկ, նվիրյալներ: Մինչդեռ այստեղ ազգային գործունեության մեջ ներգրավված մարդիկ որոշ դեպքերում այնքան էլ արդյունավետ չեն աշխատում:

- Տիկին Կյուլիզար, ո՞րն է պատճառը, որ թեմական մարմնի ընտրություններին այդքան քիչ մարդ է մասնակցում:

-Պարզապես հետաքրքրված չեն կամ գուցե հիասթափված են: Վերջին ընտրություններին, կարծեմ, մրցակցություն չկար: Ով առաջադրվել էր, անցավ:

- Այդ հանգամանքն առաջինը պետք է հետաքրքրի հենց թեմականներին: Իսկ համայնքում ավանդական կուսակցություններից ո՞ր մեկն է ավելի ազդեցիկ: Առանձին կարծիքների համաձայն՝ համայնքն ապակուսակցական է:

- Չեմ կարծում եմ, որ այդպես է: Այստեղ ավելի ուժեղ է դաշնակցության ազդեցությունը, քանի որ մեր թեմը պատկանում է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսությանը:

- Ի՞նչ կասեք Աբու Դաբիի ազգային կառույցների մասին: Դուք, ի դեպ, Տիկնանց հանձնախմբի նախագահն եք:

- Աբու Դաբիում հայ համայնքն ունի Ազգային վարչություն, որի ատենապետը դր. Վարդգես Արզումանյանն է: Նշեմ, որ աղջիկս՝ Անուշկա Ձոնյանը, վարչության ատենադպիրն է: Վարչությանը կից գործում են տիկնանց և երիտասարդաց հանձնախմբեր: Ես մեկ տարի առաջ ստանձնեցի այդ պատասխանատվությունը, բայց որոշեցի, որ ավանդական ձևով չեմ աշխատելու: Տիկնանց հանձնախմբի անդամների հետ որոշեցի, որ մեր գործունեության հիմքում պետք է լինի նաև հայկական մշակույթը օտարներին ծանոթացնելը. և այս ուղղությամբ այժմ ակտիվ աշխատանք ենք տանում: Մշակութային տարբեր միջոցառումներ ենք կազմակերպում հյուրանոցներում և հրավիրում ենք նաև օտարներին, որ հայկական մշակույթին ծանոթանան: Այս կառույցում աշխատելու ընթացքում շատ եմ օգտագործում նաև իմ անձնական կապերը: Մենք պետք է աշխատանք տանենք, որ մեզ ճանաչեն: Օգտվելով

առիթից՝ նշեմ, որ անցած տարի Աբու Դաբիի լավագույն հյուրանոցներից մեկում կազմակերպեցի բարեգործական մի միջոցառում՝ «Արմինիան Քոմյունիթի Անուալ Քրիսմաս Բազար», որտեղ ներկայացվեցին և վաճառվեցին զուտ հայկական իրեր: Ի դեպ, հանձնախմբի անդամները շապիկ էին հագել, որի վրա գրված էր “Not only I am perfect, I am Armenian, too” («Ես ոչ միայն լավն եմ, ես նաև հայ եմ»): Օտարները եկան իրենց ընտանիքիների հետ, գնումներ արեցին: Միջոցառմանը թերթերն էլ արձագանքեցին: Այս տարի նոյեմբերի 24-ին մենք նորից կազմակերպեցինք ամենամյա վաճառք-ցուցահանդես, որը շատ հաջող անցավ, որովհետև նախորդ տարվա համեմատ ավելի էինք ընդլայնել այն, ներկայացրինք հայկական իրեր՝ չոր միրգ, հուշանվերներ, շոկոլադ, արվեստի գործեր, «Զատիկ» մանկատան բացիկները և այլն:

- Ինչպիսի՞ն են Աբու Դաբիի հայ համայնքի կապերը Հայաստանի հետ: Արդյո՞ք այցելում են Հայաստան: Կա՞ շփում Սփյուռքի նախարարության հետ: Եվ վերջապես, ի՞նչ դեր ունի ԱՄԷ-ում ՀՀ դեսպանությունը ազգային կյանքի աշխուժացման հարցում:

- Համայնքային կապերը Հայաստանի կամ Սփյուռքի նախարարության հետ, կարծում եմ, շատ ակտիվ չեն: Ամեն ինչ հիմնված է անձնական կապերի վրա: Վերջերս ունեցանք նոր դեսպան՝ պարոն Ղարիբջանյանը. այնպես որ, ակնկալիքներ ունենք: Ես իմ և ընտանիքիս համար կարող եմ ասել, որ հաճախ ենք այցելում Հայաստան, այստեղ ընկերներ ունենք: Սիրում ենք դիտել «Հ1»-ը: Նաև նշեմ, որ իմ օտար ընկերների համար մի քանի անգամ ուղևորություն եմ կազմակերպել դեպի Հայաստան, միասին այցելել ենք հիմնական պատմական հուշարձանները: Դրանից հետո նրանք՝ արդեն առանց ինձ, երկրորդ և երրորդ անգամ են այցելել:

- Արդյո՞ք հայերը՝ որպես համայնք, հեռանկար ունեն Արաբական Միացյալ Էմիրություններում: Արդյո՞ք դժվար չէ բնակվել պահպանողական ավանդույթներ ունեցող նման երկրում:

- Ինչ վերաբերում է մթնոլորտին, արդեն վարժվել ենք, գիտենք այս պետության օրենքները, հարգում ենք հյուրընկալող երկրի ավանդույթները: Իսկ ապագա, կարծում եմ,

չունենք: Ի վերջո, բոլորն էլ այստեղ եկել են հիմնականում աշխատելու համար:

- Շատ հաճախ հայերը նշում են, որ իրենցից շատերը ժամանակավոր են բնակվում ԱՄԷ-ում: Այդ պարագայում արդյո՞ք նպատակահարմար է Աբու Դաբիում հայկական եկեղեցի կառուցել:

- Մարդիկ շատ դեպքերում սիրում են եկեղեցի կամ ինչ-որ բան կառուցել, որ իրենց անունը հիշվի: Չգիտեմ, ես միշտ էլ ասել եմ, որ ավելի նպատակահարմար է Հայաստանու՛մ ինչ-որ բան կառուցելը:

12. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԱՅԻ ՄԵԿՕՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՉ ՊՐՈՒՆՍՈՒԶՅԱՆԻ ՀԵՏ

- Կներկայանա՞ք:

- Հրաչ Պրունսուզյան. Արաբական Միացյալ Էմիրություններից՝ Շարժայից:

- Ե՞րբ եք հաստատվել Շարժայում:

- 1984 թ. հունվարին: Արդեն 27-28 տարի է, ինչ բնակվում եմ Շարժայում:

- Իսկ արմատներով որտեղի՞ց եք:

- Սիրիայից՝ Հալեպից եմ:

- Որքանով հայտնի է, համայնքի կորիզը Մերձավոր Արևելքից ներգաղթած հայերն են:

- Այո, համայնքը համալրվել է հիմնականում Սիրիայից և Լիբանանից եկածներով, կան նաև իրաքահայեր, պարսկահայեր, նվազ քանակությամբ եգիպտահայեր, նույնիսկ Ֆրանսիայից և ԱՄՆ-ից ներգաղթածներ կան: Վերջին 10 տարիներին նաև Հայաստանից շատերը հաստատվեցին ԱՄԷ-ում, բայց հիմնական մասը, ինչպես նշեցի, Սիրիայից և Լիբանանից են:

- Որքա՞ն է ներկայումս հայության ստույգ թվաքանակն ԱՄԷ-ում, և ո՞ր շրջաններն են նրանք բնակեցնում:

- Մոտավոր հաշվարկներով՝ 4000-5000, հիմնականում բնակվում են Շարժայում, Դուբայում, Աբու Դաբիում, առհասարակ՝ Հյուիսային էմիրություններում:

- Ինչպե՞ս է կազմակերպվում ազգային կյանքը տեղի հայ համայնքում:

- Ինչպես գիտեք, Ծոցի արաբական երկրների, այդ թվում՝ Արաբական Միացյալ էմիրությունների հայկական համայնքներն առանձին թեմ են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության մեջ: Հայերի մեծ մասն էմիրություններ էին տեղափոխվել այն թեմերից, որոնք արդեն պատկանում էին Անթիլիասին: Ազգային կյանքը գործնականում կազմակերպվում է Ազգային վարչությունների կողմից, որի անդամներին նշանակում է թեմական մարմինը՝ երկու տարի ժամկետով: Ազգային վարչություններին կից գործում են հանձնաժողովներ ու տարբեր ենթամարմիններ, ինչպես, օրինակ՝ Գեղարվեստական հանձնախումբ, Կանանց հանձնախումբ, Մեկօրյա վարժարանի հոգաբարձումների խորհուրդ և այլն: Նշեմ, որ հայկական ազգային վարչություններ կան երկու էմիրություններում՝ Դուբայում և Աբու Դաբիում: Դուբայի Ազգային վարչությունը համակարգում է նաև Շարժան և Հյուսիսային էմիրությունները:

- Դուք Շարժայի մեկօրյա վարժարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն եք, ի՞նչ կասեք դպրոցի և ընդհանրապես համայնքի կրթական կյանքի մասին:

- Շարժայում գոյություն ունեն հայկական միօրյա և կիրակնօրյա վարժարաններ: Հայկական մեկօրյա վարժարանը հիմնվեց 1981 թ.-ին, այն ժամանակ, երբ ԱՄԷ-ի հայ համայնքը նոր էր սկսել կազմավորվել և ուներ մոտ 50-60 անդամ: Այդ շրջանում վարժարանը մոտավորապես 8-10 աշակերտ ուներ, իսկ այսօր՝ 190: Վարժարանում ուսանում են մինչև 9-րդ դասարան, որից 4 տարին ներառում է ուսուցումը մանկապերտեզում: Դասընթացների տևողությունը 3 ժամ է, որի ընթացքում դասավանդվում է հայոց լեզու, պատմություն, կրոն և երգեցողություն: Վարժարանը գործում է միայն ուրբաթ օրերին:Վերջին 3-4 տարիների ընթացքում 9-րդ դասարանում ներդրել ենք Հայ բարեգործական ընդհանուր միության կողմից իրականացվող հայկական վիրտուալ քոլեջի (Armenia Virtual Collage) դասավանդման մեթոդը, որի շրջանակներում հայոց պատմությունը դասավանդվում է նաև

վիրտուալ: Ինչ վերաբերում է հոգաբարձումների խորհրդին, այն հոգում է վարժարանի ծախսերը և դրան հարակից այլ հարցեր: Ինչ վերաբերում է կիրակնօրյա դպրոցին, այն համակարգում է եկեղեցական խորհուրդը, անձամբ՝ Շարժայի Տեր հայրը՝ Արամ քահանա Տեյիրմենճյանը: Այստեղ բացառապես կրոնական առարկաներ են անցնում: Թե՛ ուրբաթօրյա, թե՛ կիրակնօրյա դպրոցում աշխատում են նույն ուսուցչուհիները, ովքեր նյութական վարձատրություն չունեն, բայց նվիրված են իրենց գործին: Մթնոլորտն այնպիսին է, որ բոլորիս համար հոգեկան մեծ բավարարվածություն է ներգրավվել կրթական գործընթացի մեջ:

Ես մեծապես կարևորում են հայկական կրթության նշանակությունը, քանի որ ազգային դաստիարակությունն ու հայապահպանությունը պայմանավորված են դպրոցի գոյությամբ: Ի դեպ, Աբու Դաբիում ևս ունենք հայկական դպրոց՝ նորից մեկօրյա, որի աշակերտների թիվն, իհարկե, ավելի փոքր է. մոտ՝ 25–30:

- Ի՞նչ դեր ունի Հայ առաքելական եկեղեցին հայ համայնքի կյանքում:

- Համայնքն այստեղ փոքր է և բոլորը համախմբված են միմիայն եկեղեցու շուրջ: Նշեմ, որ Արաբական Միացյալ էմիրություններում դեռևս գործում է հայկական մեկ եկեղեցի: Դա Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է, իսկ Աբու Դաբիի համայնքին արդեն տրամադրվել է հողատարածք՝ եկեղեցի և կենտրոն կառուցելու նպատակով, որի հողօրհնեքն արդեն կատարվել է, և շուտով պետք է սկսվեն շինարարական աշխատանքները: Մի քանի ամիս առաջ՝ մայիսին, Արամ Ա. կաթողիկոսն անձամբ կատարեց եկեղեցու հիմնարկեքը:

- Իսկ ինչպիսի՞ն են ընկալումները համայնքի ներսում մի կողմից ավելի վաղ հաստատվածների և վերջին 10 տարիներին Հայաստանից և այլ շրջանից հաստատվածների միջև, մյուս կողմից՝ հայ առաքելականների, կաթոլիկների և ավետարանականների միջև:

- Ընկալումների հետ կապված խնդիրներ ընդհանրապես չկան համայնքում, քանի որ ամբողջ համայնքը համախմբված է մեկ եկեղեցու, այսինքն՝ մեկ հաստատության շուրջ: Նկատի ունեցեք, որ համայնքի թիվն այնքան էլ մեծ չէ, և համայնքը շատ համախմբված է:

- Այսինքն՝ հայ կաթոլիկները, ավետարանականները առաքելականների հետ համախմբված են համայնքի գերագույն՝ թեմական մարմնում:

- Այո, մեկ կաթոլիկ և մեկ ավետարանական անդամ ունենք թեմական խորհրդում: Բացի այդ, կան նաև էջմիածնականներ, ովքեր համագործակցում են համայնքի մյուս հատվածի հետ:

- Փաստորեն, կարող ենք ասել, որ էմիրությունների հայ համայնքն առանձնանում է Սփյուռքի այլ համայնքներից: Այլ կերպ ինչպե՞ս կբնորոշեք համայնքը:

- էմիրությունների հայ գաղութը համերաշխ գաղութ է, ես դա ցանկանում եմ շեշտել: Սփյուռքի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Սիրիայում, Լիբանանում, Եվրոպայում, հայերն իրար մեջ որոշակի մրցակցություն ունեն: էմիրություններում էլ գուցե եղել են այդպիսի մրցակցություններ, բայց շատ ավելի նվազ, ավելի քաղաքավարի կամ խոհեմ ձևով:

- Հետաքրքիր են պետություն-հայ համայնք հարաբերությունները: Ինչպե՞ս է ընկալվում հայ համայնքը պետության կողմից:

- Հայերն այստեղ միայն կեցության իրավունք ունեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄէ-ում հաստատված հայերն ունեն տարբեր երկրների քաղաքացիություն, ոմանք Սիրիայից են, ոմանք՝ Լիբանանից և այլն, հայությանը «տանիք կանգնելն» ավելի բարդ է: Մենք թեև ԱՄէ-ում ունենք Հայաստանի Հանրապետության դեսպանություն, սակայն դեսպանությունը, բնական է, չի կարող որևէ հարցում միջնորդություն անել այն մարդկանց համար, ովքեր իր երկրի քաղաքացիները չեն: Դա է պատճառը, որ հայերն առավելապես կենտրոնացած են եկեղեցու շուրջ: Այստեղ հայերը թերևս չունենային ո՛չ եկեղեցի և ո՛չ էլ այլ կառույցներ, եթե չհասկանային, որ պետք էր օգտագործել իշխանության հետ ունեցած կապերը: Հատկանշական է, որ երբ 1995 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա. այցելեց ԱՄէ, հայերին հողատարածք տրամադրելու խնդրանքով դիմեց Դուբայի և Շարժայի շեյխերին, որպեսզի դրանց վրա եկեղեցիներ կառուցվեն: Սկզբում Շարժայի շեյխն ընդառաջ գնաց խնդրանքին: Իսկ Աբու Դաբիում հայերին հողատարածք տրամադրվեց 10 տարի անց: Ընդհանրապես, իշխանություններն այստեղ բավական բարյացակամ են տրամադրված հայերի նկատմամբ:

- Փաստորեն, օտարներն Արաբական Միացյալ էմիրությունների քաղաքացիներ չեն կարող լինել: Այդ դեպքում ու՞մ են պատկանում հայերի կառուցած եկեղեցին և մնացած կառույցները կամ այդ հողատարածքները: Օրինակ, նույն Սիրիայում փոքրամասնություններն, այդ թվում՝ հայ համայնքն, ունեն ազգային ունեցվածքներ:

- Ոչ, օտարները ԱՄէ-ում սեփականության իրավունք չունեն, այլ՝ վարձակալության, նույնը վերաբերում է այն հողատարածքներին, որոնք շեյխերը նվիրաբերել են հայ համայնքին՝ եկեղեցի կառուցելու նպատակով: Կարծում եմ, գիտեք, որ էմիրություններում ապրող հայերը /առհասարակ՝ օտարները/ ունեն միայն կացության իրավունք, որն անհրաժեշտ է լինում նորոգել երկու տարին մեկ: Շատ բան կախված է այն ընկերություններից, որտեղ հայերն աշխատում են: Կան ընկերություններ, որտեղ աշխատողները կարող են նույնիսկ երեք տարվա աշխատելու, հետևաբար կացության իրավունք տալ:

- Արդյո՞ք Սիրիայում սկսված ներքաղաքական ճգնաժամը կարող է նպաստել տեղի հայերի մի հատվածի ներգաղթին դեպի Արաբական Միացյալ էմիրություններ:

- էմիրությունների հայ համայնքը միշտ էլ համալրվում է, հոսք միշտ էլ եղել է և այսօր էլ կա, մանավանդ Սիրիայի հետ կապված այս վերջին դեպքերից հետո: Սակայն ներկայումս, քաղաքական նկատառումներից ելնելով, Ծոցի երկրներում որոշակի վերապահում կա Սիրիայի և Լիբանանի քաղաքացիների նկատմամբ: Օրինակ, էմիրություններ նրանք միայն հրավերով կարող են այցելել: Այլ բան է, եթե նույն սիրիահայերն ունեն Հայաստանի Հանրապետության հպատակություն, ինչը շատ նպատակահարմար է:

- Ինչպիսի՞ն է հայ համայնքի սոցիալական բազան:

- 70-80 տոկոսը սովորական պաշտոնյաներ ու արհեստավորներ են, փոքրաթիվ են բժիշկները, մոտ 20 տոկոսը գործարարներ են, մարդիկ, ովքեր անձնական բիզնես ունեն:

- Համայնքի քանի՞ տոկոսն է բարձրագույն կրթություն ստանում:

- Այս մասին տվյալներն այնքան էլ հստակ չեն: Անձամբ ես առավելաբար շփվում են պատանիների հետ դպրոցա-

կան հասակում, հետագայում կապը նրանց հետ կարող է խզվել: Իհարկե, շատերը մեկնում են արտասահման՝ ուսումը շարունակելու նպատակով:

- Իսկ ինչպիսի՞ն է ինքնության մակարդակը:

- Շատ բարձր, և դպրոցի հիմնական նպատակն էլ հենց դա է՝ նպաստել հայկական ինքնության պահպանմանը: Համայնքում նշվում են թ՛ ազգային և թե՛ կրոնական տոները, Ապրիլի 24-ը, Մայիսի 28, Սեպտեմբերի 21-ը:

- Ի՞նչ կասեք ԱՄԷ-ում Սփյուռքի ավանդական հայկական կուսակցությունների կամ դրանց մասնաճյուղերի գործունեության մասին:

- Դե, նրանք գործելու իրավունք չունեն ԱՄԷ-ում, սակայն նրանց որոշ մշակութային մասնաճյուղեր այս կամ այն կերպ ներկայացված են: Համազգայինի «Մուշեղ իշխան» մասնաճյուղն է գործում, որ տարեկան մեկ-երկու միջոցառում է իրականացնում: Հ.Բ.Ը.Մ.-ն վերջերս իր խորհրդանշական ներկայացուցչությունը բացեց, որը ես եմ ներկայացնում: Եվ Հ.Օ.Մ.-ն ունի մասնաճյուղ: Իմ համոզմամբ՝ բազմակարծություն կամ տարբեր գաղափարախոսական ուղղվածությամբ կառույցների գործունեությունը շատ նպատակահարմար չէ այս փոքր գաղութի մեջ: Ի վերջո, մենք ի՞նչ ենք ուզում: Հայաստանն արդեն անկախ պետություն է, մենք էլ այստեղ եկեղեցի ունենք, և դրանց շուրջն է, որ պետք է համախմբվենք:

- Համայնքի քանի՞ տոկոսն է ներգրավված հայապահպանության գործում: Շատ դեպքերում Թեմական մարմնի ընտրություններին մասնակցությունն այնքան էլ բարձր չէ:

- Համայնքում հայ մնալու խնդիր չկա, խնդիրն այլ հարթության մեջ է: Կան մարդիկ, ովքեր պարզապես չեն մասնակցում ազգային կյանքին, իրենց հեռու են պահում: Այս հարցում ոչ մեկին չես կարող մեղադրել, քանի որ դա յուրաքանչյուր մարդու անձնական գործն է, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ մարդիկ այստեղ երբեմն շատ ցավոտ են ընկալում ներհամայնքային խնդիրները: Ի վերջո, մարդիկ կան, որ ժամանակ չունեն, կամ մի որոշ ժամանակ հեռու են մնացել համայնքից և այդպես էլ հեռացել են:

- Ինչպիսի՞ն է հայերենի իմացության մակարդակը:

- Հիմնականում հայախոս են և ընտանիքներում էլ հայերեն են խոսում: Իհարկե, կան նաև օտարախոսներ, բայց

խնդիրը խոսելու մեջ չէ, այլ՝ գրելու: Եթե 90 տոկոսը խոսում է հայերեն, վստահ չեմ, թե քանի տոկոսը կարող է գրել: Ցավոք, այս խնդիրը գոյություն ունի ոչ միայն էմիրությունների հայ համայնքում, այլ նույնիսկ հալեպահայ համայնքում:

- Կա արդյո՞ք հայկական մշակութային կյանք Շարժայում:

- Մշակութային կյանք կա, այն կազմակերպվում է տեղական ուժերով:

- Ի՞նչ հարաբերությունների մեջ է ԱՄԷ-ի հայ համայնքը ՀՀ դեսպանության հետ:

- Շատ լավ հարաբերություններ և համագործակցություն է ձևավորվել հայ համայնքի և Հայաստանի դեսպանության միջև: Դեսպանության կողմից իրականացվող քայլերը շատ կարևոր նշանակություն ունեն ազգային ոգին պահպանելու հարցում: Նշեմ, որ ԱՄԷ-ում ՀՀ դեսպանատան շենքը կառուցվել է համայնքի աջակցությամբ: Համայնքի կողմից անսահման սեր և շատ մեծ հարգանք կա Հայրենիքի և այն ամենի նկատմամբ, ինչը գալիս է Հայրենիքից: Այս վերջերս դեսպան Ղարիբջանյանն այցելեց Շարժայի մեկօրյա վարժարան, մասնակցեց դպրոցի միջոցառմանը:

- Ինչպիսի՞ն է կապը Հայաստանի հետ: Հայաստանյան ո՞ր կառույցների հետ եք համագործակցում:

- Կապ միշտ էլ կա: Դիտում ենք հայաստանյան հեռուստաալիքներ, անձամբ ես պարբերաբար հետևում եմ «Հ1-ին»: Համագործակցում ենք Սփյուռքի նախարարության հետ: Մեր ուսուցիչներից մի քանիսը վերապատրաստվել են Հայաստանում: Նաև Հայաստանից հրավիրել ենք մասնագետներ, ինչպես, օրինակ՝ մանկավարժության գծով մասնագետ տիկին Գյուլամիրյանին՝ ուսուցչուհիների հետ աշխատանք տանելու մեզ մոտ:

- Հայերն ԱՄԷ-ում իրենց ապահո՞վ են զգում:

- Ապահով լինելու հետ կապված երկարաժամկետ առումով միանշանակ ոչինչ ասել հնարավոր չէ:

13. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԲԱՀՐԵՅՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԱ ԱԼԲԵՐՏ ԽԱՉԵՐՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում եմ ներկայացեք: Ե՞րբ եք հաստատվել Բահրեյնում: Որտեղի՞ց եք արմատներով:

- Ես Արա Խաչերյանն եմ, հորս կողմից կիլիկեցի եմ, մորս կողմից՝ զեյթունցի: Ծնվել եմ 1963 թ. Լիբանանում, ամուսնացած եմ, ունեմ երկու զավակ՝ Ալբերտը և Արինան, ով, ի դեպ, ծնվել է Բահրեյնում: Մենք կանադահպատակ ենք, շուրջ 7 տարի է, ինչ բնակվում ենք Բահրեյնում: Առաջին անգամ ես Ծոցի շրջան եկել եմ 1991-ին, Քուվեյթի պատերազմի շրջանում, կանադական կառավարության հանձնարարությամբ և մոտ երկու տարի բնակվել եմ Բահրեյնում: Հետագայում նորից եմ վերադարձել Բահրեյն և զբաղվում եմ տարածաշրջանային խնդիրներով:

- Որքա՞ն հայ է այսօր ապրում Բահրեյնում:

- Ներկայումս Բահրեյնում ապրող հայերի թվաքանակի մասին չկան ստույգ տվյալներ, սակայն, կարծում եմ, որ հայերի թիվը մոտ 100 է:

- Ի՞նչ մասնագիտությունների տեր մարդիկ են Բահրեյնում հաստատված մեր հայրենակիցները:

- Հայերի մեծ մասը զբաղված է առևտրով, կան հաշվապահներ, ուսուցիչներ, ոսկերիչներ, բանկային գործի մասնագետներ, արհեստավորներ և այլն:

- Ո՞ր թվականից են հայերը հաստավել Բահրեյնում:

- Շատ քիչ թվով հայեր են, որ Բահրեյնում հաստատվել են 1960-ականների սկզբին և 1970-ականներին: Եթե չեմ սխալվում, միայն 2 կամ 3 հայ է, որ ունի Բահրեյնի անձնագիր, սակայն նրանք, ցավոք, նույնիսկ հայախոս չեն: Հայերի զգալի մասը ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Հորդանանի և Հունաստանի քաղաքացիներ են:

- Արդյո՞ք Բահրեյնում հաստատված հայերը շփումներ ունեն Քուվեյթում եւ Արաբական Միացեալ Էմիրություններում գործող հայկական հոգևոր և աշխարհիկ ազգային կառույցների հետ:

- Իհարկե, մենք կապեր ունենք Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի հետ: Շփումները սերտ են հատկապես Արաբական Միացեալ Էմիրությունների հոգևոր հովիվ Արամ քահանա Տեյիրմենճյանի հետ: Մենք միացյալ միջոցառումներ ենք կազմակերպում Սաուդյան Արաբիայում, հատկապես դրա արևելյան նահանգներում (Դամմամ, Ալ-Խոբար, Դհահրան) ապրող մեր հայրենակիցների հետ:

- Արդյո՞ք Բահրեյնում հաստատված հայերն այդ երկիրը համարում են մնայուն վայր, թե՞ այդտեղ են հաստատվել ժամանակավոր:

- Բահրեյնում հայերի մեծ մասը ժամանակավոր ռեզիդենտներ են, ունեն ապրելու և աշխատելու իրավունք:

- Արդյո՞ք հնարավոր է հետագայում Բահրեյնում հայերի թվաքանակի ավելացում, և այդ պարագայում նրանք կփորձե՞ն ստեղծել ազգային կառույցներ՝ Քաթարի և ԱՄԷ-ի օրինակով:

- Որքան ինձ հայտնի է, հայերը Բահրեյնում մտադիր են հիմնել հայկական ակումբ, ինչպես նաև փորձում են կառավարությունից իրավունք ձեռք բերել հայկական եկեղեցի հիմնելու համար: Կարծում եմ, որ եթե մենք չունենանք հայկական կենտրոն, երբեք չենք կարող իմանալ Բահրեյնում հաստատվող և այստեղից հեռացող հայերի թվաքանակը:

Ես ակնկալում եմ, որ մինչև 2013 թ. ավարտը մենք կսկսենք հայկական ակումբի պաշտոնական գրանցման գործընթացը: Հայկական կենտրոնի առկայության պայմաններում, վստահ եմ, որ մենք կունենանք ավելի շատ հնարավորություններ, այդ թվում՝ նաև աշխատանքային, հարևան երկրներում ապրող մեր հայրենակիցներին առաջակելու համար:

- Իսկ երբևէ Բահրեյնում կազմակերպվե՞լ է որևէ հայկական մշակութային միջոցառում:

- Անցած տարի Բահրեյնում մենք կազմակերպեցինք քանոնահարուհի Հասմիկ Լեյլոյանի և նրա երաժշտական խմբի ելույթը: Հատուկ միջոցառման շրջանակներում այս տարի ևս նախատեսում ենք նրան հյուրընկալել Բահրեյնում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Քուվեյթի հայ համայնքի կազմավորման գործընթացը սկսվեց 20-րդ դարի 50-ական թվականների կեսերին, ինչը կապված էր նավթային գործոնի և դրա հետևանքով այդ երկրի տնտեսական վերելքի հետ: Հենց այս շրջանում աշխատանք գտնելու նպատակով Սիրիայից, Իրաքից, Լիբանանից, Պաղեստինից, Հորդանանից և Իրանից բազմաթիվ հայեր տեղափոխվեցին Քուվեյթ: Քուվեյթի, ինչպես նաև Ծոցի այլ երկրների հայ համայնքների ձևավորումը Մերձավոր Արևելքի հայ համայնքների շրջանում ներարաբական տեղաշարժերի արդյունք էր:

Քուվեյթի հայ համայնքը բավական լավ կազմակերպված և կենսունակ համայնք է, որն ունի առաջնորդանիստ Սուրբ Վարդանանց եկեղեցին: Ներկայումս Տ. Շահե եպիսկոպոս Փանոսյանը Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների կաթողիկոսական փոխանորդն է: Թեմը ենթակա է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: Թեմն ունի Թեմական խորհուրդ (այն ընտրվում է չորս տարի ժամկետով), որը կազմված է 18 անդամներից, որոնցից 9-ը Քուվեյթից են: Բարձրագույն գործադիր մարմինն Ազգային վարչությունն է, որը տնօրինում է համայնքի կյանքը և մշակում է համայնքի և տարբեր մարմինների հետ պաշտոնական հարաբերությունները: Համայնքում գործում են սկաուտական, պատանեկան, երիտասարդական, բարեգործական միություններ, ինչպես նաև հայ դատի և մշակութային խմբեր և այլն:

Հայկական ինքնության գիտակցության մակարդակը բավական բարձր է համայնքում: Ի տարբերություն ԱՄԷ-ի՝ խառն ամուսնությունները նվազագույն մակարդակի են, հետևաբար ձուլման վտանգ ուղղակիորեն գոյություն չունի: Քուվեյթահայ համայնքը հարյուր տոկոսով հայախոս է և այդ հարցում զգալի ներդրում ունի Քուվեյթի հայկական ամենօրյա Ազգային վարժարանը:

Հայկական դավանական բոլոր շերտերն առկա են համայնքում: Ճնշող մեծամասնություն են կազմում հայ առաքելականները (95%), հաջորդը հայ կաթոլիկներն են, և միայն մի քանի ընտանիքներ են ավետարանականները: Նշենք, որ

Սուրբ Վարդանանց եկեղեցին միակն է, որտեղ համայնքի բոլոր զավակները՝ առանց դավանական խտրականության, աղոթում են նույն խորանի առջև:

Հայերն այս երկրում ճանաչված են որպես հմուտ արհեստավորներ, իսկ վերջին տարիներին նաև զանազան ասպարեզներում՝ որպես սրտացավ, վստահելի և հավատարիմ գործընկերներ ու հմուտ մասնագետներ: Քուվեյթահայերն իրենց ներդրումն ունեն նաև Քուվեյթի բազմակողմանի զարգացման գործում: Թեև մշակութային կյանքը Քուվեյթում սահմանափակ է, սակայն արդեն 6 տարի է, ինչ Քուվեյթի հայ համայնքում գործում է «Շաքե» պարախումբը, որը երեք մեծ ելույթներ է ունեցել:

Ինչ վերաբերում է Արաբական Միացյալ Էմիրություններին հայ համայնքին, ապա այն հայկական Սփյուռքի երիտասարդ համայնքներից մեկն է, որ թեև գտնվում է կայացման փուլում, սակայն տիրապետում է ազգային կազմակերպման ավանդական մեխանիզմների, ունի զգալի ֆինանսական և մարդկային ներուժ: Համայնքը ձևավորվել է աշխատանքային ներգաղթյալների և նրանց սերունդների հենքի վրա, որոնք հիմնականում Մերձավոր Արևելքի երկրներից էին, ավելի քիչ թվով՝ ԱՄՆ-ից, Կանադայից, Եվրամիության երկրներից:

ԱՄԷ-ի հայերը, ձեռք բերելով իշխանությունների աջակցությունը, 1980-ականներից աստիճանաբար սկսեցին կազմակերպել իրենց ազգային կյանքը, որն էականորեն կապված էր թվային աճի հետ: Այս հարցում մեծ դեր խաղաց 1992 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության ներքո Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի ստեղծումը: Արդյունքում ձևավորվեց ԱՄԷ-ի (և Քուվեյթի) հայ համայնքի օրենսդիր՝ Թեմական մարմինը, որն էլ նշանակեց համայնքի գործադիր մարմին հանդիսացող ազգային վարչություններին Աբու Դաբիում և Հյուսիսային էմիրություններում: Արդյունքում Աբու Դաբիում և Շարժայում ստեղծվեցին միօրյա վարժարաններ, Շարժայում կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, միությունների և դպրոցների շրջանակներում և դրանցից դուրս սկսեցին կազմակերպվել հայկական մշակութային և տարաբնույթ այլ միջոցառումներ, ինչը միտված էր հայկական ինքնության պահպանմանը:

Չնայած հայերից շատերը համարում են, որ ժամանակավոր են բնակվում ԱՄԷ-ում, սակայն ձգտում են ստեղծել և զարգացնել ազգային մի մթնոլորտ, նույնիսկ եկեղեցիներ ու դպրոցներ են կառուցում:

ԱՄԷ-ի հայ համայնքը կազմված է սոցիալական և դավանական տարբեր շերտերից: Մեծամասնություն են կազմում հայ առաքելականները, կան նաև կաթոլիկներ ու ավետարանականներ, որոնք համագործակցում են միմյանց հետ, միասնաբար անդամակցում համայնքի օրենսդիր և գործադիր մարմիններին: Միևնույն ժամանակ ԱՄԷ-ի հայ համայնքը ներառում է գաղափարական ուղղվածությամբ տարբեր շրջանակների: Այստեղ Սփյուռքի ավանդական կուսակցություններն ու միություններն իրենց համախոհներն ու անդամներն ունեն, սակայն ավելի ուժեղ է Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցությունը: Այս իրողությունը պայմանավորված է վերջիններիս ավելի մեծ թվաքանակով, ինչպես նաև այն հանգամանքով, որ որպես թեմ ԱՄԷ-ն պատկանում է Անթիլիասին:

ԱՄԷ-ի հայ համայնքի օրակարգը կապված է Սփյուռքի օրակարգի հետ, որտեղ կարևոր տեղ ունեն Հայ դատի և Հայոց ցեղասպանության հարցերը: Շարժայում գործում է Հայ դատի գրասենյակ, համայնքում ամեն տարի նշվում է Ապրիլի 24-ը:

Ինչպես Սփյուռքի ցանկացած համայքնում, ԱՄԷ-ում նույնպես վերջին շրջանում, կապված գլոբալացման գործընթացների հետ, հայապահպանությանն ուղղված ջանքերը որոշակիորեն դժվարացել են: Սակայն հստակ է, որ համայնքի անդամները, չնայած տարաբնույթ դժվարություններին, ցանկանում են պահպանել իրենց ազգային դիմագիծը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ծոցի արաբական երկրների, մասնավորապես Քուվեյթի և Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքների ձևավորման գործընթացը սկսվեց 20-րդ դարի երկրորդ կեսից: Չնայած տեղի հայ համայնքներն ամենաերիտասարդն են Մերձավոր Արևելքում, սակայն աչքի են ընկնում հայկական ինքնության պահպանման աշխույժ ընթացքով: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ շրջանում հաստատված հայերը ներգաղթել են հիմնականում Մերձավոր Արևելքի հայաշատ համայնքներից՝ իրենց հետ բերելով հայության հավաքական կյանքի կազմակերպման փորձառությունը: Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահե եպիսկոպոս Փանոսյանի կարծիքով՝ շրջանի համայնքներն իրենց նկարագրով հայադրոշմ են և ավանդապահ:
- Թեև փոքր թվաքանակին՝ ԱՄԷ-ի և Քուվեթի հայ համայնքները տիրապետում են ինքնակազմակերպման ավանդական միջոցների, այստեղ գործում են Սփյուռքի կրոնական և ազգային կառույցները, իսկ հայության հավաքական կազմակերպումը հնարավոր դարձավ 1992 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներքո Քուվեյթի և Արաբական ծոցի երկրների թեմի կազմավորման շնորհիվ: Իսկ մինչ այդ՝ դեռևս 1981-ին, դարձյալ Անթիլիասի որոշմամբ՝ Հոգեշնորհ Տ. Օշական վարդապետ Չոլոյանին՝ որպես կաթողիկոսական փոխանորդի, հանձնարարվեց տեղի հայերի ազգային կյանքը կազմակերպելու կարևոր ու դժվար գործը: Այդ շրջանից ի վեր կաթողիկոսական փոխանորդներն այդ ուղղությամբ շնորհակալ ու ազգանվեր գործ են կատարում՝ լինելով նաև համայնքի ներկայացուցիչը պետության մոտ:
- Քուվեյթում խառն ամուսնությունները փոքրաթիվ են, համայնքի ճնշող մեծամասնությունը հայախոս է (այդ թվում՝ նոր սերունդը), տիրապետում է արևմտահայերենին, ինչը պայմանավորված է Քուվեյթում հայկական ամենօրյա Ազգային վարժարանի առկայությամբ, որն ունի շուրջ 50 տարվա պատմություն: Հայերն այստեղ աչքի են ընկնում ազգային ինքնության բարձր գիտակցությամբ:

- Արաբական Միացյալ էմիրություններում օգտագործվող հիմնական լեզուներն անգլերենն ու արաբերենն են: Ամենօրյա հայկական վարժարաններ չկան, և հայ երեխաները հաճախում են մասնավոր հանրակրթական դպրոցներ, որտեղ ուսուցման լեզուն անգլերենն է: Համայնքի ներսում մշտապես նկատվում է ներգաղթ ու արտագաղթ: Աշխատանքի բերումով այստեղ հայտնված շատ ու շատ ընտանիքներ այս երկրում իրենց բնակությունը համարում են ժամանակավոր և լիովին չեն ներգրավվում համայնքային գործընթացների մեջ: Արդյունքում նոր սերունդը փաստացի դժվարություն ունի հայերեն խոսելու կամ էլ գրելու հետ կապված, իսկ հին սերունդը վաղուց արդեն հայերեն գրելու առիթ չունի:
- Թե՛ Քուվեյթում և թե՛ ԱՄԷ-ում ինքնության պահպանման և ազգային դաստիարակության գործում բացառիկ դեր են կատարում հայ եկեղեցին, ազգային իշխանություններն ու վարժարանները: Վերջիններս հայկական կրթության բացառիկ հնարավորություն են ստեղծում և նոր սերնդի դաստիարակությունն իրականացնում են բարձր պատասխանատվությամբ: Այս հարցում զգալի է նաև ծնողների և, առհասարակ, ընտանիքի դերը:
- Հայ համայնքների ներսում դավանական, ինչպես նաև գաղափարական տարբեր հատվածների միջև առկա է սերտ համագործակցություն: Փաստենք, որ Քուվեյթի և Ծոցի արաբական երկրների Թեմական ժողովի երեսփոխաններն ընտրվուն եմ հետևյալ կազմով. Շարժա-Դուբայ՝ 5, Աբու Դաբի՝ 4, Քուվեյթ՝ 9: Քվեարկությանը մասնակցում են 18 տարին լրացած համայնքի բոլոր անդամները՝ առանց դավանական խտրականության (հայ առաքելական, հայ կաթոլիկ, բողոքական), ինչը հատուկ է միայն այս թեմին, և եզակի երևույթ է ընդհանրապես Սփյուռքի ազգային եկեղեցական կյանքում:
- Նշենք, որ հայության ոչ բոլոր շերտերն են ներգրավված համայնքային կյանքում: Շատ դեպքերում դրանցից դուրս են գտնվում ոչ միայն նրանք, ովքեր հետաքրքված չեն ազգային իրողություններով, այլև նրանք, ովքեր չնայած հայկական դիմագիծ ունեն, սակայն դժգոհ են ազգային իշխանությունների աշխատանքից, թեմական ընտրություններում առողջ մրցակցության բացակայության փաստից, առհասարակ համայնքի ղեկավարման հին և ոչ արդյունավետ մեթոդներից: Սա է պատճառը, որ վերջին շրջանում թեմական ընտրություններին քիչ թվով մարդիկ են մասնակցում:
- Ծոցի արաբական երկրներում թե՛ իշխանությունների և թե՛ հասարակության վերաբերմունքը հայերի նկատմամբ հարգալից է և քաղաքավարի: Վերջիններս հայտնի են իրենց պարկեշտությամբ ու աշխատասիրությամբ, նրանք վստահություն են վայելում, հավատարիմ են այդ երկրներին ու նրանց կառավարություններին: Հայերը դարձել են բազմազգ, բազմակրոն և բազմալեզու այդ երկրների մի բաղադրիչը, իսկ հայ արհեստավորները հայտնի են իրենց վարպետությամբ:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որևէ այլ ազգության ներկայացուցչի, տեղացի արաբներից բացի, Քուվեյթի և ԱՄԷ-ի օրենքները քաղաքացիության հնարավորություն չեն ընձեռում, հետևաբար հայերը նույնպես դիտարկվում են որպես այլ երկրների քաղաքացիներ, որոնք ունեն միայն ժամանակավոր կացության, ինչպես նաև աշխատելու իրավունք: Այստեղ բոլոր ազգերն ու ազգությունները գտնվում են հավասար պայմաններում: Միևնույն ժամանակ տեղի կառավարությունները հայերին ճանաչում են որպես առանձին համայնք և թույլատրում ազգային գործունեություն ծավալել: Հետևաբար տեղի հայ համայնքների և կառավարությունների հարաբերությունները թեև սահմանափակ են, սակայն համագործակցային: Եկեղեցին ճանաչվում է որպես համայնքի ներկայացուցիչ ու պատասխանատու:
- Քուվեյթի համայնքը չունի սեփական եկեղեցու շենք՝ հակառակ այն հանգամանքին, որ համայնքում գործում է Սուրբ Վարդանանց հայկական եկեղեցին, որն ունի ավելի քան 50 տարվա պատմություն: Ներկայումս առկա մեծագույն խնդիրը սեփական եկեղեցի ունենալու հարցն է: Ի տարբերություն ԱՄԷ-ի, որի իշխանությունները հայերին թե՛ Շարժայում և թե՛ Աբու Դաբիում հատկացրել են հողատարածք եկեղեցի կառուցելու համար, 1962-ից մինչ օրս քուվեյթահայ համայնքը ջանքեր է գործադրում սեփական եկեղեցի ունենալու համար, սակայն այս հարցը դեռևս դրական լուծում չի ստացել:

- Հայաստանի Հանրապետության և Ծոցի արաբական երկրների, հատկապես Քուվեյթի և ԱՄԷ-ի միջև առկա է բավական սերտ միջպետական համագործակցություն մի շարք ոլորտներում: Այս երկրների հետ ՀՀ-ի հարաբերությունների սերտացման գործում զգալի դերակատարում ունեն նաև այդ երկրների հայ համայնքները, որոնք կամրջող դեր են կատարում վերոնշված հարաբերություններում:
- ԱՄԷ-ում և Քուվեյթում ՀՀ դեսպանությունների և այդ երկրների հայ համայնքների միջև բոլոր մակարդակներում առկա է ներդաշնակ, սերտ և մտերմիկ գործակցություն: Դեսպանությունների և համայնքների միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:
- Սիրիական ճգնաժամի խորացման հետևանքով՝ շրջանի հայ համայնքները որոշակի խնդիրների են բախվել: Ծոցի երկրներում ապրող հայության ծանրակշիռ մի հատված սիրիահայեր են՝,մասնավորապես՝ հալեպահայեր, որոնք միշտ էլ կապ են ունեցել իրենց ծննդավայրի հետ, ինչը հայապահպանությանը խթանող ազդակ է հանդիսացել: Սիրիայի հայ համայնքների թուլացումը, մերձավորարևելյան տարածաշրջանից (Իրաքից, Սիրիայից, Լիբանանից և այլն) հայերի արտագաղթը, տարածաշրջանում կրոնական և ծայրահեղական տրամադրությունների աճը, ինչպես նաև քրիստոնյաների առջև ծառացած նոր մարտահրավերները, կարող են ժամանակի ընթացքում որոշակի վնաս հասցնել նաև տեղի հայ համայնքներին՝ արաբական միջավայրը դարձնելով աննպաստ վայր հայապահպանության համար:
- Կարևոր է ընդգծել նաև, որ Սիրիայի հարցում Ծոցի սունիական միապետությունների հայտնի դիրքորոշման պատճառով, ինչպես նաև անվտանգության դրդապատճառներից ելնելով՝ սիրիական հպատակություն ունեցողների համար գրեթե անհնար է դարձել Քուվեյթում կամ Արաբական ծոցի այլ երկրներում կացության իրավունք ստանալը: Իշխանությունները դեռևս երկարաձգում են տարիներ առաջ կացության իրավունք ստացածների կարգավիճակը: Այս հարցում, սակայն սիրիահայերին կարող են օգնել հայաստանյան անձնագրերը:

- Հատկանշական է, որ Սիրիայում տեղի ունեցող դեպքերը և դրանց համատեքստում հայ համայնքի առաջ ծառացած մարտահրավերները չեն կարող կասեցնել հայապահպանության այն ծրագրերը, որ գոյություն ունեն շրջանի հայ համայնքներում (կապված եկեղեցաշինության և այլ հեռահար ծրագրերի հետ)՝ հաշվի առնելով այն փաստը, որ հայերն օտար միջավայրում միշտ էլ փորձում են պահպանել հայկական ինքնությունը:
- Առկա փաստերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ազգապահպանությունը տեսանելի ապագայում Քուվեյթի և ԱՄԷ-ի հայ համայնքներում վտանգված չէ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն փաստը, որ Քուվեյթի և Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքների ազգային կյանքի աշխուժացումը շատ բաներով պայմանավորված է Հայաստանից եկող ազդակներով, առաջարկում ենք հետևյալը.

- Կարիք կա, որպեսզի Հայաստանն աջակցի շրջանի հայությանը՝ արդիականացնելու ազգային կրթական համակարգը: Խոսքն առաջին հերթին մեթոդաբանական օգնության, Հայաստանում ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման, նոր դասագրքերի կազմման մասին է:
- Շահեկան կլինի, որպեսզի Հայաստանում պարբերաբար կազմակերպվեն տարբեր ոլորտներին առնչվող միջոցառումներ, սկաուտների բանակումներ, ուսանողների հանդիպումներ, կազմավորվեն նույն մասնագիտությունները ներկայացնող մարդկանց միություններ ու շրջանակներ, որտեղ ընգրկված կլինեն նաև շրջանի հայերը:
- Արդյունավետ կլինի հարցադրումների համատեղ ճշգրտումներից հետո անցկացնել Միջին Արևելքի հայ համայնքների վերաբերյալ գիտագործնական հանդիպումներ ու քննարկումներ՝ դրանց հրավիրելով Ծոցի շրջանի հայերին: Այդ ճանապարհով վերջիններիս կապերը Հայաստանի հետ կաշխուժանան:

- Շահեկան կլինի, եթե Հայաստանի հեռուստատեսային ալիքները հանգամանորեն լուսաբանեն հայկական Սփյուռքի, այդ թվում՝ Ծոցի հայ համայնքների ազգային կյանքի տարբեր ոլորտները: Այդ իրողությունը նոր լիքցեր կհաղորդի տեղի հայ համայնքերին, ինչպես նաև կնպաստի Հայաստանում Սփյուռքի հիմնախնդիրների ավելի ճիշտ ընկալմանը:

CONCLUSIONS

- The process of the formation of Armenian communities in the countries of the Persian Gulf, especially Kuwait and the United Arab Emirates, began in the second half of XX century. Although the Armenian communities are the youngest among the others in the Near East, they nevertheless demonstrate a high level of their development and self-identification. The reason for that is the fact that the Armenians immigrated into the region mainly from the near-eastern communities. They brought with them the experience of a collective living. According to the Primate of the Diocese of Kuwait and the Arab countries of the Gulf region of the Catholicosate of the Great House of Cilicia His Eminence bishop Shahe Panosian the regional Armenian communities are very traditional and patriotic.
- Although the Armenians are rather small in number, the communities in Kuwait and the United Arab Emirates still preserve the traditional methods of their self-identification. Both religious and national institutions of the Diaspora do still function in the region, while an organization of Armenian communities became possible in 1992 thanks to the formation of the Diocese of Kuwait and the Arab countries of the Gulf region under the Catholicosate of the Great House of Cilicia. Previously, namely in 1981, by the decision of Antilias again, His Eminence the Reverend Oshakan Choloyan received a task of managing the national life of the local communities. Since that time onwards the Primates of the Diocese, who were also representing the local community before the government, have been doing a great work in the region.
- In Kuwait there is insufficient number of mixed marriages. The major part of the comminity members, including the new generation as well, does speak Armenian (Western Armenian). This was mainly a result of the activity of the Armenian national school, which has been acting in Kuwait within the last 50 years. The Armenians there have a high level of national self-identity.

- There are more than one hundred nationalities living in the United Arab Emirates, whose main using languages are English and Arabic. Due to the absence of Armenian everyday schools the Armenian children have to attend the private schools, where the education is in English too. One can observe both migration and immigration permanently occuring inside the community. Many families that came there for a work consider their residence in the country as a temporary one and therefore do not wish to be entirely integrated into the life of the community. As a result, the new generation is faced with certain difficulties connected with knowledge of Armenian language (both oral and writing). At the same time the old generation has no relevant practice in written Armenian any more.
- Both in Kuwait and the United Arab Emirates the Armenian communities and church, also educational institutions, continue to play an outstanding role in question of preservation of their both self-identity and national education. These institutions offer a wide range of opportunities for an educational growth for the new generation. This, in its turn, provides an exclusive educational background for the relible formation of the new generation. In this process the role of parents and the families in general are of a significant importance.
- Inside the Armenian communities there is a close cooperation between varoius religious and ideological groups of people. One must admit that the members of the Eparchy counsil of both Kuwait and the United Arab Emirates are elected as follows: Sharja-Dubai 5, Abu Dhabi 4, Kuwait 9. Each community member aged 18 is entitled to take part in the elections regardless of his/her religious adherence (Armenian Apostolic, Armenian Catholic, Protestants etc). This is a unique phenomenon not only for this Diocese, but also the national clerical life of the Diaspora in general.
- One should also note that not every social stratum is integrated in to the life of the community. We know the cases when those who are not interested in national processes stay beyond of the community. Even those who do still preserve their national face, but do nevertheless disagree with the

activities of the national authorities, the fair competition while the elections inside the eparchy as well as old and unsuccessful methods used for administrating the community in general, may remain outside of the communities. This is the main reason why in recent times the elections of the local institutions provided a relatively weak attendance.
- In Arab countries of the Gulf region both governmental and social attitude towards the Armenians is based on respect and politeness. The Armenians stand out for their modesty and hard-working. They can be relied on, remain troy to the government of the countries they live in. Being increased in number the Armenians belong to various confessional groups and speak different languages. They became a part of the local Arabic society while Armenian handcrafts are famous for their professional skills.
- According to the law code of Kuwait and the United Arab Emirates the foreigners are not entitled to gain a citizenship of these countries, so that the Armenians are considered as citizens of a third country who may only gain a temporary permission for both living and working. Apart from native Arabs, all other nations enjoy the same rights and are in the same conditions. At the same time, the local authorities consider Armenians as a separate religious community, what provides them with a possibility for undertaking their national programs in the country. That is why, even if the relationship between the local Armenian communities and authorities is still limited, it nevertheless bears the elements of a close cooperation. At the same time, the Armenian church appears to be a both representative and responsible institution of the community.
- Unlike the activities in the country of the St. Vardanants Armenian church, which has more than 50 years of history, the community in Kuwait does not have yet its own church building. In present, this is the most important question that rose before the local community. Another situation is in the United Arab Emirates where the government provided the Armenians with a permission to build up churches both in Sharja and Abu Dhabi. Since 1962 onwards the Armenian community in Kuwait tries to receive a similar permission for

building an own church, however that question is still unsolved.

- Between the Republic of Armenia and the Arab countries of the Gulf region, especially those of Kuwait and the United Arab Emirates, there is a close mid-governmental cooperation toughing various aspects of an every-day life. In this sense, a very important role is played by the Armenian communities, which serve as a bridge connecting Republic of Armenia with Arab countries.
- Between the embasies of the Republic of Armenia located in both Kuwait and the United Arab Emirates and Armenian communities one can outline a many-sided and harmonic cooperation in different aspects. The relationship between the embassies and the Armenian communities are based on mutual respect and cooperation.
- Due to the Syrian crisis the Armenian communities of the region are faced with certain problems too. The major part of the Armenians living in the Gulf countries are the Syrian ones, namely from Aleppo and who were permanently connected with their motherland. A gradual weakness of the Armenian communities in Syria, their immigration from the near-eastern region (Iraq, Syria, Libanon etc), the growth of negative religious tendencies in the region as well as new challenges that rose before the Christians, can harm the local Armenian communities in future. This may definitely change the conditions for Armenians subsequent survival in Arabic environment.
- One should also notice that due to certain attitude of the Gulf Sunni monarchies towards Syria, the residents of Syria are faced with serious difficulties in receiving a permission for living not only in Kuwait, but also in other countries of the Gulf region. The authorities do purposely delay the solution of question in gaining such permissions even for those who had received it many years ago. It is worth of noting that nowadays developing events in Syria and the challenges that Armenian communities are faced with in that context cannot prevent the development of national programs that has been existing in Armenian communities of the region. Here one should mention the issues connected with building a church

and many other issues. The Armenians living in the foreign environment have always been aspiring to keep their national self-identity.

- The analysis of the aforementioned facts brings us to a conclusion that in the nearest future the self-identity of Armenian communities in Kuwait and the United Arab Emirates will be secure.

OFFERS AND ADVICE

Takig into account the fact that the intensification of the national life of Armenian communities in Kuwait and the United Arab Emirates in many regards has been receiving its impulse from Armenian factors we can offer the following:

- It is of a special importance that Armenia provides the Armenians in Diaspora with necessary facilities in regard of reorganization of national education system. First of all the question is about methodological assistance, the training of teachers in Armenia, compilation of new school books etc.
- It is important to organize in Armenia sporadic events dealing with various aspects of life such as scaut clubs, student meetings as well as unions that would bring together the people having the same specialization and qualification and living in the Persian Gulf region.
- It could be useful if one organize meetings and conferences dealing with the issues of the Armenian communities of the Middle East with a particular attendance of the Armenians living in the Persian Gulf region. This would undoubtedly stimulate the relations between the Diaspora and Armenia.
- It could be useful if the channels of the Armenian television would widely broadcast the aspects of national life of the Armenian Diaspora, particularly located in the Gulf region. This would facilitate the activities of local Armenian communities as well as provide a much more accurate perception of current issues of Diaspora.

ЗАКЛЮЧЕНИЕ

- Процесс формирования армянских общин стран Персидского залива, в частности Кувейта и Объединенных Арабских Эмиратов (далее, ОАЭ), начался во второй половине XX века. Несмотря на то, что армянская община региона является самой молодой среди остальных общин Ближнего Востока, она выделяется своими высокими темпами сохранения армянской идентичности. Одной из предпосылок для этото явился факт, что закрепившиеся в регионе армяне в основном имигриривали из общин Ближнего Востока. По мнению примаса епархии Кувейта и арабских стран Персидского Залива, находящейся под юрисдикцией Католикосата Великого Дома Киликии, епископа Шаге Паносяна, общины региона по своей сути очень традициональны.
- Несмотря на свою немногочисленность армянские общины Кувейта и ОАЭ сохраняют традиционные методы самоорганизации. На местах функционируют различные религиозные и национальные учреждения Диаспоры. Единение армян в регионе стало возможным в 1992 г. благодаря основанию в Кувейте и арабских странах Залива епархии Католикосата Великого Дома Киликии. До этого, в 1981 г., также по решению Антилиаса, Его Святейшества Ошакана преподобного Чолояна, было поручено важное и ответственное дело организации деятельности местных армян. Начиная с того времени и по сей день представители епархии, будучи также представителями общины при правительстве, осуществляют большую работу в этом направлении.
- В Кувейте смешанных браков не много. Подавляющее большинство членов общины (в том числе и представители нового поколения) говорит на армянском языке (западно-армянский диалект), что обусловливается более чем 50-летней деятельностью в Кувейте национального лицея. Местные армяне выделяются высоким уровнем самосознания и самоидентичности.
- В ОАЭ проживают более ста народностей, говорящие в основном на английском и арабском языках. Поскольку в стране нету армянских каждодневных школ, армянские дети вынуждены посещать частные общеобразовательские школы, где образование проходит также на английском. Внутри общины постоянно происходят процессы миграции и иммиграции. Многие семьи, которые оказались в регионе по работе, считают свое нахождение в стране временным и не вмешиваются в жизнь общины. В результате, сегодня новое поколение сталкивается с серьезными проблемами, связанными со знанием армянского языка, как устного, так и письменного, в то время как предыдущее поколение давно уже потеряло возможность писать на родном языке. В вопросе сохранения самоидентичности и национального развития, как в Кувейте, так и в ОАЭ особенную роль играют армянская церковь, различные союзы и образовательные учрежения, которые предлагают представителям нового поколения возможность получения армянского образования. В этом вопросе также существенна роль родителей и семьи в целом.
- Конфессиональные, а также идеологические слои внутри армянских общин тесно сотрудничают. Тут следует отметить, что члены совета епархии Кувейта и ОАЭ избираются следующим составом: Шаржа 5, Абу Даби 4, Кувейт 9. В выборах могут участвовать члены общины, достигшие 18-летия, внезависимости от своего вероисповедания (представители армянской апостолоческой, армянской католической, протестанты), явление, которое присуще только этой епархии, и уникальный случай для национальной церковной жизни Диаспоры в целом.
- Следует отметить, что не все слои армянской общины региона вовлечены в деятельность общины. Зачастую, вне общины остаются не только те, кто безразличен по отношению к национальным процессам, но также и те, кто недовольны деятельностью национальных институтов власти, прозрачностью выборов членов епархии, и вообще, старой и не эффективной системой управления делами общины. И это несмотря на сохранение ими национального колорита в повседневной жизни. Это причина, по которой в последнее время люди проявляют низкий интерес к выборам органов местного самоуправления.

- В арабских странах Персидского Залива отношение к армянам со стороны как властей, так и общества основывается на уважении и толерантности. В регионе армяне выделяются своей скромностью и трудолюбием; они верны властям этих стран. Количество проживающих там армян значительно выросло, возрос межконфесиональный ценз, благодаря чему армяне стали важной составляющей общества, а армянские ремесленники известны своим мастерством.
- С учетом того, что по законам Кувейта и ОАЭ представители других национальностей не имеют возможности приобретения гражданства данных стран, армяне также рассматриваются гражданами других государств, у которых имеется лишь право временного пребывания и трудоустройства. В этом смысле, представители всех других национальностей находятся в одинаковых условиях. В то же время, местные власти воспринимают армян как отдельную религиозно-конфессиональную единицу (общину). Этот статус позволяет им осуществлять самостоятельную национальную деятельность в регионе. Соответственно, отношения между армянскими общинами и местными властями, хотя и ограничены, однако в то же время выливаются в тесное сотрудничество. Церковь воспринимается как представитель и полномочный орган общины.
- Несмотря на то, что при общине более 50-и лет действует церковь Св. Вардананц, у армянской общины до сих пор нет собственной церкви в Кувейте. На сегодняшний день это наиболее острая проблема, стоящая перед общиной. Ситуация отлична для ОАЭ, где в Шарже и Абу Даби власти предоставили местным армянам землю на застройку церкви. С 1962 г. и по сей день, кувейтская армянская община делает все возможное, чтобы добиться права постройки в Кувейте собственной церкви, однако вопрос пока еще не разрешился.
- Сегодня имеются достаточно тесные межгосударственные отношения между республикой Армения и странами Персидского залива, в частности Кувейта и ОАЭ по многим направлениям. В вопросах сближения сотрудничества между РА и этими странами важную роль играют армянские общины, которые выступают фактическим связующим в данных отношениях.

- Между посольствами РА, Кувейта и ОАЭ с одной стороны, а также армянскими общинами с другой, отмечается близкое и гармоничное сотрудничество во всех плоскостях. Отношения существующие между посольствами и общинами основываются на взаимоуважении и сотрудничестве.
- Ввиду углубления сирийского кризиса, региональные армянские общины также столкнулись с определенными сложностями. Основная часть армян проживающая в странах Залива это сирийские армяне, как правило, алеппинские армяне, которые постоянно поддерживают связи с их малой родиной. Ослабление сирийских армянских общин, миграция армян из ближневосточного региона (Ирак, Сирия, Ливан и.т.д.), всплеск религиозной нетерпимости в регионе, а также насущные проблемы, стоящие перед христианами, могут со временем существенно навредить местным общинам, превратив арабское окружение в неблагоприятное место для дальнейшего существования.
- Стоит также отметить, что в вопросе Сирии, ввиду известной позиции суннитских монархий Персидского залива, получение сирийскими подданными вида на жительства в Кувейте, а также же странах Залива становится практически невозможным. Власти по-прежнему оттягивают выдачу соответствующего статуса даже тем людям, которые получили вид на жительство много лет назад.
- Интересно, что происходящие в Сирии события и вызовы, с которыми сталкивается армянская община, не могут приостановить процессы самосохранения армян, которые происходят в армянских общинах региона (в частности, связанные с возведением церквей и др.). На чужбине армяне всегда стремились сохранить свою самоидентичность.
- Анализ вышеизложенных фактов позволяет заключить, что в ближайшем будущем вопрос национального самосохранения армянских общин Кувейта и ОАЭ не подвержен опасности.

ПРЕДЛОЖЕНИЯ

С учетом того факта, что интенсификация национальной деятельности армянских общин Кувейта и ОАЭ во многом связана с факторами проистекающими из политической жизни РА, предлагаем следующее:

- Необходимо содействие РА в вопросе реформирования национальной системы образования в регионе. В первую очередь, речь идет о методологической составной, а именно подготовке и последующей переподготовке учителей и соответствующих учебных пособий.
- Было бы полезным, если бы в Армении периодически организовывались мероприятия, посвященные различным аспектам, а именно скаутские лагеря, встречи студенчества, создавались союзы, объединяющие людей схожей специализации, в которых бы принимали также участие армяне региона.
- После совместного выяснения ряда вопросов было бы целесообразно периодически организовывать научно-практические встречи и обсуждения, касающиеся вопросов армянских общин Ближнего Востока, с вовлечением в них также армян рассматриваемого региона. В этой связи, связь последних с РА значительно бы окрепла.
- Было бы также целесообразно поощрять детальное освещение по армянскому телевидению и масс-медиа деятельности Диаспоры, в том числе различные аспекты жизнедеятельности армянских общин стран Залива. Такая инициатива однозначно придала бы новый импульс детяльности армянских общин, а также содействовала бы более взвешанному восприятию текущих вопросов Диаспоры в Армении.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

LILIT HARUTYUNYAN
ARAKS PASHAYAN

THE ARMENIAN COMMUNITIES OF THE ARAB COUNTRIES OF THE GULF REGION ACTUAL ISSUES

Գիտական խմբագիր՝ Ս. Մանուկյան /պ.գ.թ./

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24 Գ
Կայք՝ http://orient.sci.am/
Էլ.-փոստ՝ info@orient.sci.am
Հեռախոս՝+ (374 10) 58 33 82

Ստորագրված է տպագրության՝ 17.12.2012: Չափսը՝ 60 x 84 1/32:
Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպագրությունը՝ օֆսեթ: 10 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ
հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru